

Ենոք Շատվորյան

216

**ՀԱՐՑ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԵՎ
ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻԲԻՆԳԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԵՐԵՎԱՆ 2011



216 ՀԱՐՑ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻԲԻՆԳԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
Ե.Շատվորյան, «Հույս և օգնություն» ՀԿ
©. «Հույս և օգնություն» ՀԿ, 2011

Համակարգչային շարվածք՝ Ա. Ասլանյան,
Վ. Թովմասյան

Համակարգչային ձևավորումը՝ Նաիրի Սուքիասյան

Սույն ժողովածուն հրատարակվել է «Տեղեկացվածության արդյունավետության բարձրացում և համապատասխան ցանցերի ստեղծման միջոցով ՀՀ-ում երեխաների թրաֆիքինգի կանխարգելման համախմբում և հզորացված համակարգի ստեղծում» ծրագրի շրջանակներում Եվրամիության և Չեխիայի կառավարության ֆինանսական օժանդակությամբ:

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել Եվրամիության պաշտոնական տեսակետների հետ:

Yenok Shatvoryan

216
Questions and Answers
on Child Rights Protection
&
Prevention of Human Trafficking

Yerevan 2011



Shatvoryan Yenok

216 Questions and Answers on Child Rights Protection &
Prevention of Human Trafficking
©. Hope&Help NGO, 2011

The current publication has been made possible within the framework of “Mobilized and Empowered System of Prevention of Child Trafficking in Armenia through Awareness Raising, Capacity Building and Networking” project with funding provided by the European Union and the Czech Government.

This publication has been produced with the assistance of the Hope&Help NGO can in no way be taken to reflect the views of the European Union.

Բովանդակություն

Ներածություն	7
Գլուխ 1 Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը ՀՀ-ում	8
1.1. ՀՀ-ում Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի խնդիրները և գործառույթները	8
Գլուխ 2 Երեխաների և ծնողների իրավունքները և պարտականությունները	20
2.1. Երեխաների իրավունքները և պարտականությունները	20
2.2. Ծնողների իրավունքները և պարտականությունները	26
2.3. Երեխայի ծննդի գրանցում	28
Գլուխ 3 Ծնողական իրավունքների զրկումը, սահմանփակումը, ընտանիքի անդամների ալիմենտային պարտականությունները	32
3.1. Ծնողների իրավունքների զրկումը և սահմանփակումը	32
3.2. Ծնողների ալիմենտային պարտականությունները	37
Գլուխ 4 Կյանքի դժվարին իրավիճակ, կարիքի գնահատումը: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերումը և տեղավորումը	40
4.1. Կյանքի դժվարին իրավիճակ, կարիքի գնահատումը.	40
4.2. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերումը	41
4.3. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորումը	44
4.3.1. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների որդեգրումը	44
4.3.2. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց նկատմամբ խնամակալության կամ հոգաբարձության սահմանում	54
4.3.3. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամատար ընտանիք հանձնելու կարգը	58
Գլուխ 5 Երեխայի խնամքը և պաշտպանությունը հաստատություններում	66
5.1. Սանկատներ	67
5.2. Երեխաների բժշկասոցիալական վերականգնողական հաստատություններ	74
5.3. Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ	75
5.4. Ցերեկային խնամքի տրամադրում	77
5.5. Նախադպրոցական հաստատություններ	81
5.6. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ	81
5.7. Հանրակրթական և հատուկ ուսումնական հաստատություններ	86
5.8. Երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատությունը	87

Գլուխ 6 Երեխաների սոցիալական աջակցություն և պաշտպանություն	90
6.1. Պետության աջակցության տեսակները	90
6.2. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սոցիալական աջակցություն	98
6.3. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանություն	101
Գլուխ 7 Ի՞նչ է թրաֆիքինգը	108
Լրացուցիչ տեղեկություններ.	128
Չարցերի ցուցակ	128
Բացատրական բառարան	138
Չղումների ցանկ	146
Կոնվենցիաներ	146
Օրենսգրքեր	146
Օրենքներ	147
ՀՀ Կառավարության որոշումներ	147
ՀՀ նախարարների հրամաններ	149
Կարգեր	149
Համացանցի կայքեր	150
Տեղեկություններ ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի հաստատությունների մասին	150

Ներածություն

Այս ժողովածուն նախատեսված է երեխաների իրավունքների պաշտպանության մասնագետների, սոցիալական ծառայության աշխատողների, երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների մասնագետների, իրավապահների, բոլոր նրանց համար, ովքեր աշխատում են կամ պատրաստվում են աշխատել երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում, հատկապես՝ երեխաների թրաֆիքինգի կանխարգելման բնագավառում:

Երեխաների իրավունքներին վերաբերող ՀՀ և միջազգային օրենսդրության կարևորագույն խնդիրները ներկայացված են հարցերի և պատասխանների ձևով: Այս ժողովածուի մեջ ներառված է նաև երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում հաճախ օգտագործվող տերմինների և հասկացությունների բացատրական բառարան, ինչպես նաև՝ տեղեկություններ ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի հաստատությունների մասին, այդ թվում՝ մարզպետարանների ԸԿԵԻՊ բաժինների, համայնքների ԽՀ մարմինների, ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով բաժինների, ՀՀ երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների, ՀՀ երեխաների խնամքի և պաշտպանության ժամանակավոր օթևանի, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող մանկատների, ՀՀ երեխաների խնամքի և պաշտպանության ցերեկային կենտրոնների, ՀՀ գործող հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների մասին:

Այս ժողովածուն նպատակ չունի տալ երեխաների իրավունքները ՀՀ օրենսդրությամբ կարգավորող ոլորտին վերաբերող բոլոր հնարավոր հարցերի պատասխանները:

Ժողովածուի նախապատրաստումը և հրապարակումն իրականացվել է «Հուլյս և օգնություն» ՀԿ-ի կողմից Եվրոպական հանձնաժողովի դրամաշնորհի՝ «Տեղեկատվության արդյունավետության բարձրացում և համապատասխան ցանցերի ստեղծման միջոցով ՀՀ երեխաների թրաֆիքինգի կանխարգելման համախմբման և հզորացման համակարգի ստեղծում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Չեխական «People in Need» և «Հուլյս և օգնություն» ՀԿ-ների միջոցով:

Խորին շնորհակալություն ենք հայտնում ի.գ.թ. Ա.Երենյանին, Է.Իսրայելյանին և Վանաձորի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամ Լեռնուհի Գևորգյանին՝ ժողովածուն կազմելու ընթացքում մատուցած խորհրդատվության համար:

ԳԼՈՒԽ 1

Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը ՀՀ-ում

1.1. ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի խնդիրները եւ գործառույթները

Հարց 1. Երեխաների իրավունքների պաշտպանության ինչպիսի՞ համակարգ է գործում ՀՀ-ում:

Հայաստանում երեխայի իրավունքների պաշտպանության համակարգը կազմված է երեք մակարդակից՝

1. ազգային՝ ազգային հանձնաժողով, (Ա.Հ.)
2. մարզային՝ մարզի (Երևանում քաղաքապետարանի) Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը, (ԸԿԵԻՊԲ)
3. համայնքային՝ խնամակալության և հոգաբարձության մարմիններ, հանձնաժողովներ: (ԽՀՄ)

Հարց 2. Որո՞նք են Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի հիմնական խնդիրները:

Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

- երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության հիմնական երաշխիքների ապահովմանն աջակցելը.
- երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության ընթացքում ծափած խնդիրները վերլուծելը և դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ մշակելը.
- կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական հիմնախնդիրների լուծմանն աջակցելը.
- երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունն իրականացնող պետական կառավարման մարմինների, հասարակական,

քաղաքական, գիտական և այլ կազմակերպությունների համագործակցությանն աջակցելը:

ՀՀ վարչապետի որոշում 2005թ. 28 Հոկտեմբերի, N 835-Ն

Հարց 3. Ինչպե՞ս են կազմակերպվում երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի աշխատանքները:

Ազգային հանձնաժողովն իր աշխատանքները իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են 3 ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում կարող են հրավիրվել արտահերթ նիստեր: Ազգային հանձնաժողովը կազմված է հանձնաժողովի նախագահից, անդամներից և քարտուղարից: Նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը, կամ նրա հանձնարարությամբ հանձնաժողովի անդամներից մեկը: Նիստի օրակարգը և անհրաժեշտ նյութերը հանձնաժողովի անդամներին ուղարկվում են նիստն սկսվելուց մեկ շաբաթ առաջ: Հանձնաժողովի քննարկվող նյութի հիման վրա հանձնաժողովն ընդունում է որոշում, որի մասին կազմվում է արձանագրություն: Հանձնաժողովի նիստն արձանագրվում է: Հանձնաժողովի նախագահի հրավերով նիստերին կարող են մասնակցել ՀԿ-ների և ՋԼՄ-ների ներկայացուցիչները:

ՀՀ վարչապետի որոշում 2005թ. 28 Հոկտեմբերի, N 835-Ն

Հարց 4. Ովքե՞ր են ընդգրկված երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի անհատական կազմում:

Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի անհատական կազմում ընդգրկված են ՀՀ նախարարությունների, վարչությունների, բաժինների ներկայացուցիչներ:

Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի անհատական կազմն է՝

- ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը, ով հանձնաժողովի նախագահն է, նախարարի տեղակալը և ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետը, ով հանձնաժողովի քարտուղարն է):
- ՀՀ արդարադատության նախարարությունը (նախարարի առաջին տեղակալը),
- ՀՀ Տարածքային կառավարման նախարարությունը(նախարարի

1

2

3

4

5

6

7

ԼՐԱՍԻՍՏԻ

տեղակալը),

- ՀՀ Առողջապահության նախարարությունը (նախարարի տեղակալը),
- ՀՀ Մշակույթի նախարարությունը(նախարարի տեղակալը),
- ՀՀ Ոստիկանությունը(պետի տեղակալը),
- ՀՀ Կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչությունը (վարչության գլխավոր մասնագետը)
- ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչությունը (վարչության պետը)
- ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը (աշխատակազմի հանրակրթության վարչության պետը)
- ՀՀ Ոստիկանության հասարակական կարգի ապահովման վարչության անչափահասների պրոֆիլակտիկայի բաժինը (բաժնի պետը):

ՀՀ վարչապետի որոշում, 2005թ, Հոկտեմբերի 28-ի N 835-Ն, Հավելված N 2

Հարց 5. Ո՞ր կառույցն է ներկայացնում երեխաների իրավունքների պաշտպանության մարզային մակարդակը:

ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության մարզային մակարդակը ներկայացնում են մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության (ԸԿԵԻՊ) բաժինը:

ՀՀ Տարածքային կառավարման նախարարի և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010 թ. Հուլիսի 13-իN 07- Ն և N 66-Ն համատեղ հրաման

Հարց 6. Որո՞նք են ԸԿԵԻՊ մարզային բաժնի խնդիրները:

- մարզում ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության իրականացման ապահովումը,
- ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովումը,
- մարզում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների իրավունքների պաշտպանության ապահովումը,
- մարզում ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական նպատակային ծրագրերի մշակումը և դրանց կատարման ապահովումը,

- մարզում գենդերային ծրագրերի մշակումը և դրանց կատարման ապահովումը,
- մարզում հակասոցիալական վարք դրսևորած և իրավախախտ անչափահասների համար այլընտրանքային (վերականգնողական) արդարադատության ծրագրերի մշակում և դրանց կատարման ապահովումը:

ՀՀ Տարածքային կառավարման նախարարի և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010 թ. հուլիսի 13-ի N 07- ն և N 66-ն համատեղ հրաման

Հարց 7. Որո՞նք են ԸԿԵԻՊ բաժնի գործառնությունները:

- իրականացնում է ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականությունը մարզերում,
- մշակում և իրականացնում է ընտանիքների, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված ծրագրեր,
- ուսումնասիրում է մարզում կանանց և երեխաների առուվաճառքի (թրաֆիքինգ) հիմնահարցերը, մշակում զոհերի սոցիալական վերականգնմանն ուղղված ծրագրեր,
- մարզում հայտնաբերված կանանց և երեխաների առուվաճառքի (թրաֆիքինգ) զոհերի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ՀՀ ոստիկանություն,
- ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով իրականացնում է մարզում հայտնաբերված կանանց և երեխաների առուվաճառքի (թրաֆիքինգ) զոհերի ուղղորդումը համապատասխան գերատեսչություններ և կառույցներ,
- ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ աշխատանքներ է իրականացնում իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) հետ:
- ուսումնասիրում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաներին և նրանց ընտանիքներին և կատարում նրանց կարիքների գնահատում,
- ուսումնասիրման և գնահատման արդյունքների հիման վրա մշակում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրեր և ապահովում դրանց իրականացումը,
- վարում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների

1
2
3
4
5
6
7
ԸՆԿՄԱՆՈՒՄ

ավտոմատացված տեղեկատվական համակարգը՝ դրանում հաշվառելով՝

- առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց և սահմանված կարգով ներկայացնում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
 - բնակարանի կարիք ունեցող առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին,
 - որդեգրել ցանկացող անձին (դրական եզրակացության հիման վրա) որպես որդեգրողի թեկնածու, տվյալները գրանցում է հաշվառման մատյանում, լրացնում որդեգրողի թեկնածուի անձնական քարտը և պատճենը փոխանցում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
 - որդեգրման ենթակա երեխաներին և անձնական քարտի պատճենները ներկայացնում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման վերցնելու համար,
 - խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձին (դրական եզրակացության հիման վրա) որպես խնամատար ծնողի թեկնածու, տվյալները գրանցում է հաշվառման մատյանում և լրացնում խնամատար ծնողի թեկնածուի անձնական քարտը և պատճենը փոխանցում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
 - մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասներին (ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող ծառայություններից ստացված տեղեկատվության համաձայն),
 - հանրակրթությունից դուրս մնացած երեխաներին,
 - մանկուց հաշմանդամ երեխաներին,
 - սոցիալապես անապահով ընտանիքների, բուժական հաստատություններում, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում գտնվող երեխաներին,
- ձեռնարկում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության անհրաժեշտ միջոցներ, պաշտոնական անձանցից և այլ քաղաքացիներից ստացված, երեխայի կյանքի և առողջությանը

սպառնալու նրա իրավունքների և շահերի խախտումների տեղեկատվության դեպքերում,

- լուծում է առկա տարածայնությունները՝ ծնողական իրավունքի իրականացման ընթացքում ծնողների կողմից փոխադարձ համաձայնության բացակայության դեպքերում՝ հաշվի առնելով երեխայի շահերը,
- ուսումնասիրում է մարզում գեներային հիմնահարցերը, մշակում դրանց լուծմանն ուղղված ծրագրեր,
- մասնակցում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների այն նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի հետ կապված հատուկ դեպքերը,
- մասնակցում է դատական այն նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի իրավունքներն ու շահերը,
- երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքերում խնամակալության և հոգաբարձության մարմնի հետ միաժամանակ իրավասու է անմիջապես վերցնելու ծնողներից (նրանցից մեկի) կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան և խնամակալության ու հոգաբարձության մարմնի հետ համատեղ ապահովել երեխայի տեղավորումը՝ 7 օրվա ընթացքում, դիմելով դատարան՝ ծնողներին ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով,
- իրականացնում է հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի պաշտպանությունը՝ նրանց ներգրավելով հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում,
- բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի գնահատման արդյունքների եզրակացության հիման վրա վկայագրում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը,
- հետևում և աջակցում է վկայագրված կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների՝ ուսումնական հաստատություններ ընդգրկվելու գործընթացին,
- ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ քննարկում է մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների կողմնորոշման խնդիրները, անհրաժեշտության դեպքում ուղղորդում է համապատասխան հաստատություններ, պաշտպանում է անչափահասների իրավունքներն ու շահերը,

1
2
3
4
5
6
7
ԸՆԿՐՈՒՄ

- իրականացնում է երեխայի կյանքի պայմանների ուսումնասիրություն, կատարում կարիքների գնահատում և տալիս եզրակացություն՝ երեխային մանկատուն տեղավորելու մասին,
- որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացուց ստացված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի և անձի ու նրա կենսապայմանների ուսումնասիրության ակտի հիման վրա որդեգրել ցանկացող անձին տալիս է որդեգրման հնարավորության մասին եզրակացություն, իսկ մարզպետարանի որդեգրման հնարավորության բացասական եզրակացության մասին հնգօրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է դիմողին,
- խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձից ստացված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի և անձի ու նրա կենսապայմանների ուսումնասիրության ակտի հիման վրա խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձին տալիս է խնամատար ծնող դառնալու հնարավորության մասին եզրակացություն,
- մանկատանը տեղավորված երեխային ծնողներին վերադարձնելու դեպքում, ծնողների դիմումի և կատարված ուսումնասիրության ակտի հիման վրա տալիս է եզրակացություն՝ երեխային ընտանիք վերադարձնելու վերաբերյալ,
- իրականացնում է երեխայի կյանքի պայմանների ուսումնասիրություն, կատարում կարիքների գնահատում և տալիս եզրակացություն՝ երեխային գիշերօթիկ հաստատությունում տեղավորելու մասին, որը եռօրյա ժամկետում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
- գիշերօթիկ խնամքի հաստատությունում տեղավորված երեխային՝ գիշերօթիկ խնամքի հաստատությունից դուրս գրելու համար տալիս է եզրակացություն, որի մեկ օրինակը տրվում է նախարարությանը,
- դատարան է ներկայացնում ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ, աջակցում է երեխաների ծննդյան վկայականների ձեռքբերմանը՝ դրանց բացակայության դեպքերում,
- մարզպետին է ներկայացնում երեխայի իրավունքների պաշտպանության գործունեության մասին տարեկան հաշվետվությունը,
- ներկայացնում է երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովին՝ բաժնի գործունեության մասին տարեկան հաշվետվությունը:

ՀՀ Տարածքային կառավարման նախարարի և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010թ. հուլիսի 13-ի N 07- Ն և N 66-Ն Համատեղ Հրաման

Հարց 8. Ո՞ր կառույցների հետ է համագործակցում ԸԿԵԻՊ բաժինը:

ԸԿԵԻՊ բաժինը իր իրավասությունների շրջանակներում համագործակցում է մարզի համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների, սոցիալական ծառայության տարածքային մարմինների, զբաղվածության տարածքային կենտրոնների, բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների, ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող ծառայությունների, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների, ուսումնական հաստատությունների, առողջապահական հիմնարկների, հասարակական կազմակերպությունների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների հետ:

ՀՀ Տարածքային կառավարման նախարարի և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010 թ. հուլիսի 13-ի N 07- ն և N 66-ն Համատեղ Հրաման

Հարց 9. Ովքե՞ր են ընդգրկված ԸԿԵԻՊ բաժնի կազմում:

ԸԿԵԻՊ բաժինը կազմված է՝ բաժնի պետից և առնվազն 5 քաղաքացիական ծառայողից հետևյալ մասնագիտություններով՝ իրավագիտություն կամ բժիշկ կամ բուժքույրական գործ կամ հոգեբանություն կամ մանկավարժություն կամ սոցիալական աշխատանք կամ սոցիալական մանկավարժություն կամ սոցիալական աշխատանքի մասնագիտական վերապատրաստում ունեցող:

ՀՀ Տարածքային կառավարման նախարարի և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010 թ. հուլիսի 13-ի N 07- ն և N 66-ն Համատեղ Հրաման

Հարց 10. Ո՞ր կառույցն է ներկայացնում երեխաների իրավունքների պաշտպանության համայնքային մակարդակը եւ որո՞նք են համայնքային մակարդակի խնդիրները:

Համայնքային մակարդակում երեխայի իրավունքների պաշտպանությունը իրականացնում է խնամակալության և հոգաբարձության (ԽՀ) մարմինը:

Խնամակալության և հոգաբարձության մարմինները համայնքների ղեկավարներն են:

Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվում են խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովներ՝ (5-9- ը անձ): ԽՀ հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է համայնքի ավագանին իր որոշմամբ: Ավագանու որոշմամբ

1
2
3
4
5
6
7
ԸՆԿՄԱՏՈՒՄ

հանձնաժողովի կազմից սահմանվում է հանձնաժողովի նախագահ և հանձնաժողովի քարտուղար: Խնամակալության և հոգաբարձության մարմինների խնդիրներն են՝

- Անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների, ինչպես նաև անչափահասների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը,
- ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովումը,
- կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը,
- օրենքով նախատեսված այլ խնդիրներ:

ՀՀ Կառավարության որոշում 2011թ. փետրվարի 24-ի N 164-Ն

Չարց 11. Որո՞նք են ԽՅ մարմինների հիմնական գործառույթները:

- սահմանում են՝ խնամակալություն տասնչորս տարին չլրացած անչափահասների, ինչպես նաև հոգեկան խանգարման հետևանքով անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ,
- սահմանում են՝ հոգաբարձություն 14-18 տարեկան անչափահասների, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ,
- իրականացնում են՝ խնամակալի կամ հոգաբարձուի պարտականությունները մինչև խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը,
- իրականացնում են՝ երեխայի իրավունքների ու շահերի պաշտպանություն՝ երեխայի իրավունքների և շահերի խախտման, երեխայի կյանքին և առողջությանը վտանգ սպառնալու, ծնողների կամ նրանցից մեկի կողմից երեխային դաստիարակելու, կրթության տալու պարտականության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, կամ երեխայի դաստիարակությունից, նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու, կամ ծնողական իրավունքների չարաշահման դեպքերում,
- իրականացնում են՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կյանքի պայմանների հետազոտություն և նրա ծնողների կամ ազգականների կողմից խնամքի բացակայության փաստի հաստատման դեպքում ապահովում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը՝ մինչև նրա տեղավորման հարցի լուծումը՝

օրենքով սահմանված կարգով՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց հաշվառումը,

- իրականացնում են երեխայի դաստիարակությանը հավակնող անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտություն և ներկայացնում դատարան հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը, վերահսկողություն խնամատար ծնողների, խնամակալների ու հոգաբարձուների գործունեության նկատմամբ. բացահայտում են՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և այն չափահաս անձանց մասին տեղեկությունները, ովքեր ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ, համայնքում երեխայի ծննդյան փաստի օրենքով սահմանված կարգով չգրանցման, ինչպես նաև երեխաների մահացության դեպքերը և դրա մասին իրազեկում մարզպետին (երևանում՝ երևանի քաղաքապետին), միաժամանակ նախաձեռնում դրանց գրանցման գործընթացը, համայնքում երեխաների թրաֆիքինգի դեպքերը և դրա մասին իրազեկում լիազոր մարմնին,
- հաշվառում են անչափահաս տուժողին, քաղաքացիական հայցվորին,
- մասնակցում են՝ դատարանում երեխաների որդեգրման հաստատմանը և որդեգրման վերացմանը վերաբերող գործերի քննությանը, քրեական վարույթում որպես օրինական ներկայացուցիչ չունեցող անչափահաս տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչ,
- աջակցում են՝ խնամատար ընտանիքին՝ երեխայի կյանքի և դաստիարակության անհրաժեշտ պայմանների ստեղծման համար,
- իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

ՀՀ Կառավարության որոշում 2011թ. փետրվարի 24-ի N 164-Ն

1
2
3
4
5
6
7
ԸՆԴՈՒՄ

Չարց 12. Ովքե՞ր են ընդգրկվում ԽՅ հանձնաժողովների կազմում:

ԽՅ հանձնաժողովի կազմում (5-9-ը անձ) ընդգրկվում են մարզպետարանների աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժինների, սոցիալական ծառայության տարածքային մարմինների աշխատողներ, համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայողներ, մանկավարժներ և իրավաբաններ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (համաձայնությամբ):

ՀՀ Կառավարության որոշում 2011թ. փետրվարի 24-ի N 164-Ն

Չարց 13. Որո՞նք են ԽՅ հանձնաժողովի հիմնական իրավունքներն ու պարտականությունները:

Խնամակալության և հոգաբարձության մարմինների իրավունքներն ու պարտականություններն են՝

1. կնքում են խնամատար ծնողների (ծնողի) հետ պայմանագիր երեխային խնամատար ընտանիքին հանձնելու մասին,
2. կարող են խնամակալին կամ հոգաբարձուին ազատել իր պարտականությունների կատարումից և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել նրան՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու համար՝
 - խնամակալությունը և հոգաբարձությունը շահադիտական նպատակներով օգտագործելու կամ խնամարկյալին առանց հսկողության և անհրաժեշտ օգնության թողնելու դեպքերում,
 - անչափահասին իր ծնողներին վերադարձնելու կամ նրան որդեգրելու դեպքում,
 - խնամարկյալին համապատասխան դաստիարակչական, բուժական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նման այլ հաստատությունում տեղավորելիս (եթե դա չի հակասում խնամարկյալի շահերին),
 - հարգելի պատճառների (հիվանդություն, գույքային դրության փոփոխություն, խնամարկյալի հետ փոխադարձ ընբռնման բացակայություն և այլն) դեպքում,
 - խնամակալի կամ հոգաբարձուի կողմից իր պարտականություններն անպատշաճ կատարելու դեպքում,
3. երեխայի կյանքին կամ առողջությանն անմիջական վտանգ սպառնալու դեպքում երեխային վերցնում են ծնողներից կամ խնամակալից, անհապաղ ապահովում են երեխայի ժամանակավոր տեղավորումը

- և 7-օրյա ժամկետում դիմում դատարան՝ ծնողներին (նրանցից մեկին) ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով,
4. դիմել դատարան 14-18 տարեկան անչափահասի՝ իր աշխատավարձը, կրթաթոշակը կամ այլ եկամուտներն ինքնուրույն տնօրինելու իրավունքը սահմանափակելու միջնորդությամբ,
 5. կարող են պարտավորեցնել ծնողներին կամ ծնողին նրանցից մեկի մերժման դեպքում չխանգարելու պապերի, տատերի, եղբայրների, քույրերի և այլ մերձավոր ազգականների հետ երեխայի շփումը,
 6. օրենքով սահմանված կարգով նշանակում և ազատում են խնամակալների ու հոգաբարձուների,
 7. անչափահասի ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ ընդունում են որոշում անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու (եմանսիպացիա) մասին,
 8. ընդունում են որոշում ընտրված երեխային խնամատար ընտանիքին հանձնելու մասին,
 9. տալիս են համաձայնություն անչափահաս ծնողների երեխային որդեգրելիս՝ վերջինիս ծնողների կամ խնամակալի (հոգաբարձուի) բացակայության դեպքում.
 10. անչափահասների նկատմամբ խնամակալություն և հոգաբարձություն են սահմանում՝ ծնողների, որդեգրողների բացակայության, դատարանով ծնողներին ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության և այլ դեպքերում,
 11. իրավունք ունեն ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնել օրենքով սահմանված դեպքերում,
 12. օրենքով սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Կառավարության որոշում 2011թ. փետրվարի 24-ի N 164-Ն

1

2

3

4

5

6

7

ԼՐԱՍՈՒՄՆԵՐ

Գլուխ 2

Երեխաների եւ ծնողների իրավունքներն ու պարտականությունները

2.1. Երեխաների իրավունքները եւ պարտականությունները

14. Ի՞նչ իրավունքներ ունեն երեխաները:

Երեխաները ունեն հավասար իրավունքներ՝ անկախ իրենց ծնողների կամ այլ ներկայացուցիչների (որդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների), ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի ծննդյան հանգամանքից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքից:

Ստորև թվարկվում են երեխաների հիմնական իրավունքները՝

- Երեխայի կյանքի իրավունք
- Երեխայի անվան և քաղաքացիության իրավունք
- Երեխաների առողջության պահպանման իրավունք
- Երեխայի անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք
- Բռնությունից երեխայի պաշտպանության իրավունք
- Երեխայի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք
- Երեխայի կրթության իրավունք
- Ընտանիքում երեխայի ապրելու իրավունք
- Երեխայի իրավունքների պաշտպանությունն ընտանիքում
- Երեխայի բնակելի տարածության իրավունք
- Ժառանգություն ստանալու իրավունք
- Մշակութային արժեքների պաշտպանության իրավունք
- Երեխայի աշխատանքի իրավունք
- Երեխայի հանգստի իրավունք
- Երեխայի պատվի և արժանապատվության իրավունք
- Երեխայի անվտանգության ապահովման իրավունք

Երեխայի կյանքի իրավունքը՝

Յուրաքանչյուր երեխա ունի կյանքի իրավունք: Պետությունն ու նրա համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի ապրելու և զարգանալու համար:

Երեխայի անվան եւ քաղաքացիության իրավունք՝

Յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ունի անվան և քաղաքացիության

իրավունք: Երեխայի ծննդյան փաստն օրենքով սահմանված կարգով գրանցվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից:

Երեխաների առողջության պահպանման իրավունք՝

Յուրաքանչյուր երեխա ունի առողջության պահպանման և ամրապնդման իրավունք: Պետական համապատասխան մարմիններն ապահովում են առողջապահական ծառայություններից երեխայի անվճար օգտվելու հնարավորությունը՝ ամենամյա առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում:

Երեխայի անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունքը՝

Յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք: Երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հարցում հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները: Ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների կողմից երեխայի համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման անկարողության կամ անհնարինության դեպքում պետությունը ցուցաբերում է համապատասխան օգնություն:

Բռնությունից երեխայի պաշտպանության իրավունքը՝

Յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (ֆիզիկական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության իրավունք: Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի: Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն իրականացնում են երեխայի պաշտպանությունը ցանկացած բռնությունից, շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավելուց, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործումից, դրանց արտադրության կամ առևտրի մեջ ներգրավումից, մուրացկանությունից, անառակությունից, մոլի խաղերից և նրա իրավունքների և օրինական շահերի այլ ոտնահարումից:

Երեխայի մտքի, խղճի եւ դավանանքի ազատության իրավունքը՝

Յուրաքանչյուր երեխա ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք: Երեխայի հայացքները, համոզմունքները և կարծիքը ենթակա են նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրության: Արգելվում է առանց ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնության մինչև 16 տարեկան երեխայի մասնակցությունը կրոնական կազմակերպություններին: Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, որոնելու, ստանալու և հաղորդելու գաղափարներ ու տեղեկատվություն հաղորդակցության ցանկացած միջոցով:



Երեխայի կրթության իրավունքը՝

Յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու և ուսումնական հաստատություն ընտրելու իրավունք: Պետական համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի անհատականության դրսևորման, տաղանդի, մտավոր և ֆիզիկական ունակությունների զարգացման համար՝ հիմնելով հանրակրթական, մասնագիտական դպրոցներ, մարզական, տեխնիկական և մշակութային ստեղծագործական մանկական կենտրոններ և այլն:

Պետական համապատասխան մարմինները մշակում և իրականացնում են տաղանդավոր երեխաների հայտնաբերման, նրանց դաստիարակության և կրթության կազմակերպման համապատասխան ծրագրեր: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

Ընտանիքում երեխայի ապրելու իրավունքը՝

Յուրաքանչյուր երեխա ունի ծնողներին ճանաչելու և նրանց հետ համատեղ ապրելու իրավունք՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այն դեպքերի, երբ դատարանի որոշմամբ ծնողներից կամ ծնողից երեխայի բաժանումը համարվում է անհրաժեշտություն՝ ելնելով երեխայի շահերից:

Երեխայի իրավունքների պաշտպանությունն ընտանիքում՝

Երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացվում են հիմնականում ընտանիքում, որոնց պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև պետության կողմից լիազորված պետական մարմինները: Նրանք ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի լիարժեք զարգացման, դաստիարակության, կրթության, առողջության պահպանման, ընտանիքում և հասարակության մեջ ինքնուրույն կյանքի նախապատրաստման համար:

Երեխայի բնակելի տարածության իրավունքը՝

Բնակելի տարածության վարձակալի կամ սեփականատիրոջ ընտանիքի անդամ հանդիսացող երեխան ունի այդ վարձակալի կամ սեփականատիրոջ զբաղեցրած բնակելի տարածությունում ապրելու իրավունք՝ անկախ իր բնակության վայրից: Երկկողմանի ծնողագուրկ երեխան ունի արտահերթ բնակելի տարածություն ստանալու իրավունք:

Ժառագություն ստանալու իրավունքը՝

Յուրաքանչյուր երեխա (ներառյալ որդեգրված) ծնողի մահվան, ինչպես նաև դատարանի վճռով ծնողին մեռած հայտարարելու դեպքում, անկախ բնակության վայրից, ունի ժառանգություն ստանալու իրավունք:

Մշակութային արժեքների պաշտպանության իրավունքը՝

Յուրաքանչյուր երեխա ունի իր ժողովրդի պատմությանը, ավանդույթներին, հոգևոր արժեքներին և համաշխարհային մշակույթին հաղորդակցվելու իրավունք: Յուրաքանչյուր երեխա ունի գեղարվեստական, գիտական և

տեխնիկական ստեղծագործության ազատության, մշակութային կյանքին մասնակցելու, իր ունակություններն ու հետաքրքրությունները դրսևորելու իրավունք:

Երեխայի աշխատանքի իրավունքը՝

Յուրաքանչյուր երեխա ունի իր տարիքային հնարավորություններին, զարգացման առանձնահատկություններին և ունակություններին համապատասխան մասնագիտություն ստանալու, օրենքով չարգելված աշխատանքային գործունեություն ծավալելու իրավունք: Երեխայի հետ աշխատանքային պայմանագիր կարող է կնքվել նրա 16 տարին լրանալուց հետո, բացառությամբ ժամկետային աշխատանքային պայմանագրերի: Մինչև 16 տարեկան երեխաները կարող են ընդունվել ժամանակավոր աշխատանքի՝ ծնողներից մեկի (որդեգրողի) կամ հոգաբարձուի (խնամակալի) և խնամակալության և հոգաբարձության մարմնի գրավոր համաձայնությամբ, եթե դա չի խանգարում նրանց ուսուցման գործընթացին: Արգելվում է երեխային ներգրավել ալկոհոլային խմիչքների, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի, ծխախոտի, էրոտիկա և սարսափ բովանդակող գրականության և տեսաերիզների արտադրության, օգտագործման կամ իրացման մեջ, ինչպես նաև այնպիսի աշխատանքներում, որոնք կարող են վնասել նրա առողջությանը, ֆիզիկական և մտավոր զարգացմանը, խոչընդոտել կրթություն ստանալուն:

Երեխայի հանգստի իրավունքը՝

Յուրաքանչյուր երեխա ունի հանգստի և ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին և միջոցառումներին ազատորեն մասնակցելու իրավունք: Պետական համապատասխան մարմինները խրախուսում են երեխայի հանգստի և ժամանցի կազմակերպումը՝ ստեղծելով արտադպրոցական, մանկապատանեկան, մշակութային, մարզական, հանգստի և առողջության ամրապնդմանն ուղղված հաստատություններ:

Երեխայի պատվի եւ արժանապատվության իրավունքը՝

Յուրաքանչյուր երեխա ունի պատվի և արժանապատվության իրավունք: Ոչ մի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, գրագրության և հեռախոսային խոսակցության գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության իր իրավունքներն իրականացնելիս չի կարող ենթարկվել կամայական, ապօրինի միջամտության կամ իր պատվի և արժանապատվության նկատմամբ ոտնձգությունների: Երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ, ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում:

Երեխայի անվտանգության ապահովումը՝

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է երեխայի անվտանգությունը: Երեխայի անօրինական տեղաշարժը (այդ թվում՝ այլ պետություններ), առևանգումը, առուծախն առաջացնում է



պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ Օրենքը երեխայի իրավունքների մասին, գլուխ 2

15. Օրենքով սահմանված ի՞նչ պարտականություններ ունեն չափահաս զավակները ծնողների նկատմամբ:

Աշխատունակ չափահաս զավակները պարտավոր են պահել իրենց անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողներին և հոգ տանել նրանց մասին: Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում օգնության կարիք ունեցող ծնողների համար նրանց չափահաս աշխատունակ զավակներից ալիմենտը բռնագանձվում է դատական կարգով: Չավակներից յուրաքանչյուրից բռնագանձվող ալիմենտի չափը՝ կայուն դրամական գումարով, որոշում է դատարանը՝ ելնելով ծնողների և զավակների գույքային ու ընտանեկան դրությունից և ուշադրության արժանի շահերից: Դա ենթակա է վճարման յուրաքանչյուր ամիս: Չափահաս զավակներից յուրաքանչյուրի առնչությամբ ալիմենտի չափը որոշելիս դատարանը կարող է հաշվի առնել տվյալ ծնողի չափահաս աշխատունակ բոլոր զավակներին, անկախ նրանից, թե պահանջը ներկայացվել է նրանցից մեկի, մի քանիսի, թե բոլորի դեմ:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, §.75

16. Ի՞նչ պարտականություններ ունեն երեխաներն իրենց փաստացի խնամողների նկատմամբ:

1. Անաշխատունակ անապահով անձինք, ովքեր իրականացրել են երեխաների փաստացի խնամքը, դատական կարգով իրենց չափահաս գործունակ երեխաներից ապրուստի միջոց պահանջելու իրավունք ունեն, եթե նրանք չեն կարող ապրուստի միջոց ստանալ իրենց չափահաս աշխատունակ զավակներից կամ անուսնուց (նախկին ամուսնուց):
2. Դատարանը կարող է երեխաներին ազատել փաստացի խնամողներին ապրուստի միջոց տրամադրելուց, եթե փաստացի խնամողները նրանց խնամել ու դաստիարակել են հինգ տարուց պակաս ժամկետով, ինչպես նաև, եթե նրանք այդ երեխաներին խնամել ու դաստիարակել են ոչ պատշաճ ձևով:
3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պարտականությունները չեն դրվում խնամակալության (հոգաբարձության) տակ գտնվող անձանց, ինչպես նաև խնամատար ընտանիքներում դաստիարակություն ստացած անձանց վրա:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, §. 84

17. Կարո՞ղ են զավակները ազատվել իրենց աշխատունակ եւ օգնության կարիք ունեցող ծնողների ապրուստը հոգալու պարտականությունից:

Ձավակները կարող են ազատվել իրենց անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողների ապրուստը հոգալու պարտականությունից, եթե դատարանի վճռով կհաստատվի, որ ծնողները ժամանակին խուսափել են իրենց ծնողական պարտականությունները կատարելուց:

Ձավակներն ազատվում են ծնողական իրավունքներից զրկված ծնողներին ալիմենտ վճարելու պարտականությունից:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, §.75

18. Ինչպե՞ս են չափահաս աշխատունակ զավակները մասնակցում անաշխատունակ ծնողների նկատմամբ կատարվող լրացուցիչ ծախսերին:

Անաշխատունակ ծնողների հանդեպ չափահաս աշխատունակ զավակների կողմից հոգատարության բացակայության և բացառիկ հանգամանքների (ծնողի ծանր հիվանդություն, խեղում ստանալ, նրանց կողմնակի խնամքի համար վճարելու անհրաժեշտություն և այլն) առկայության դեպքում նրանք կարող են դատարանի վճռով մասնակից դարձվել այդ հանգամանքներից բխող լրացուցիչ ծախսերը կրելու գործին:

Չափահաս աշխատունակ զավակներից յուրաքանչյուրի կողմից լրացուցիչ ծախսերը կրելու կարգը և այդ ծախսերի չափը որոշում է դատարանը՝ հաշվի առնելով ծնողների և զավակների գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը, պահպանելով սույն օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-5-րդ մասերի պահանջները:

Լրացուցիչ ծախսերը կրելու կարգը և այդ ծախսերի չափը կարող են որոշվել կողմերի համաձայնությամբ:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, §.76

1

2

3

4

5

6

7

ԼՐԱՑՈՒՑԻՉ

2.2. Ծնողների իրավունքները եւ պարտականությունները

19. Ծնողները ունեն հավասար իրավունքներ իրենց երեխաների նկատմամբ:

Ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (ծնողական իրավունքներ): Ծնողական իրավունքները դադարում են երեխաների տասնութ տարեկանը լրանալով, ինչպես նաև սահմանված կարգով երեխաների ամուսնանալով: Օրենքով նախատեսված կարգով մինչև չափահաս դառնալը երեխաների կողմից լրիվ գործունակություն ձեռք բերելու դեպքերում:

20. Օրենքով սահմանված ի՞նչ պարտականություններ ունեն ծնողները իրենց երեխաների նկատմամբ:

- Երեխաներին դաստիարակելու և կրթություն տալու:
- Երեխաների իրավունքները և շահերը պաշտպանելու:
- Երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացումը:
- Խորթ երեխաներին դաստիարակելու և խնամելու:
- Երեխաների ապրուստը հոգալու:

Երեխաներին դաստիարակելու եւ կրթություն տալու՝

Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակելու իրենց երեխաներին:

Ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար: Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին: Ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք:

Ծնողները պարտավոր են ապահովել երեխաների կրթություն ստանալը:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, Հ. 51

Երեխաների իրավունքները եւ շահերը պաշտպանելու՝

Երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը դրվում է նրանց ծնողների վրա: Ծնողները համարվում են իրենց երեխաների օրինական ներկայացուցիչները և նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությամբ առանց լիազորագրի հանդես են գալիս ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ ցանկացած հարաբերություններում, ինչպես նաև դատարանում:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, հ. 52

Երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացումը՝

Երեխայից առանձին ապրող ծնողը իրավունք ունի երեխայի հետ շփվելու, նրա դաստիարակությանը մասնակցելու, երեխայի կրթություն ստանալու հարցերը լուծելու: Ծնողը, որի հետ ապրում է երեխան, չպետք է խոչընդոտի մյուս ծնողի հետ երեխայի շփմանը, եթե նման շփումը վնաս չի պատճառում երեխայի ֆիզիկական ու հոգեկան առողջությանը, նրա բարոյական զարգացմանը: Ծնողներն իրավունք ունեն գրավոր համաձայնություն կնքելու երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման մասին: Եթե ծնողները չեն կարող համաձայնության գալ, ապա նրանց կամ նրանցից մեկի պահանջով խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ վեճը լուծում է դատարանը: Երեխայից առանձին ապրող ծնողն իրավունք ունի իր երեխայի մասին տեղեկատվություն ստանալու դաստիարակչական ու բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից: Տեղեկատվություն տրամադրելը կարող է մերժվել միայն ծնողի կողմից երեխայի կյանքին և առողջությանն սպառնացող վտանգի առկայության դեպքում: Տեղեկատվություն տրամադրելու մերժումը կարող է վիճարկվել դատական կարգով:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, հ. 54

Խորթ երեխաներին դաստիարակելու եւ խնամելու՝

Խորթ ծնողները պարտավոր են դաստիարակել և խնամել իրենց ամուսնու՝ նախկին ամուսնությունից ծնված և իրենց հետ համատեղ ապրող երեխաներին (խորթ երեխաներին):

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, հ. 55



Երեխաների ապրուստը հոգալու՝

Ծնողները պարտավոր են պահել իրենց երեխաներին: Երեխաներին ապրուստի միջոց տրամադրելու կարգն ու պայմանները ծնողները որոշում են ինքնուրույն: Ծնողները կարող են համաձայնություն կնքել իրենց երեխաներին պահելու մասին (ալիմենտ վճարելու վերաբերյալ):

Եթե ծնողները ապրուստի միջոց չեն տրամադրում իրենց երեխաներին, ապա վերջիններիս պահելու համար միջոցները (ալիմենտը) ծնողներից բռնագանձվում են դատական կարգով

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, §. 68

21. Ի՞նչ պարտականություններ ունեն պապերը եւ տատերը իրենց օգնության կարիք ունեցող անչափահաս թոռների նկատմամբ:

Օգնության կարիք ունեցող անչափահաս թոռներն իրենց ծնողներից ապրուստի միջոց ստանալու անհնարինության դեպքում անհրաժեշտ միջոցներ ունեցող իրենց պապերից ու տատերից դատական կարգով ալիմենտ ստանալու իրավունք ունեն: Նույնպիսի իրավունք տրվում է օգնության կարիք ունեցող չափահաս անաշխատունակ թոռներին, եթե նրանք չեն կարող ապրուստի միջոց ստանալ իրենց ամուսիններից (մախկին ամուսիններից) կամ ծնողներից:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, §. 82

2.3. Երեխայի ծննդի գրանցում

22. Ինչպե՞ս է գրանցվում երեխայի ծննդյան փաստը, եթե ծնողների ամուսնությունը գրանցված է:

Երեխայի ծննդի ակտի գրառման մեջ ամուսնության մեջ գտնվող հայրը և մայրը գրառվում են որպես երեխայի ծնողներ՝ նրանցից որևէ մեկի դիմումի հիման վրա: Երեխայի մոր մասին տեղեկությունները երեխայի ծննդի ակտի գրառման մեջ լրացվում են հետևյալ փաստաթղթերի հիման վրա

- ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված բժշկական այն կազմակերպության կողմից, որտեղ տեղի է ունեցել ծնունդը.
- ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված բժշկական այն կազմակերպության կողմից, որը ցուցաբերել է բժշկական օգնություն ծննդի ժամանակ.
- ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական գործունեությամբ զբաղվող անձի կողմից՝ բժշկական կազմակերպությունից դուրս ծննդի դեպքում.

- ծննդյան մասին սահմանված ձևի գրավոր հայտարարությունը՝ տրված ծննդի ժամանակ ներկա գտնված անձի (անձանց) կողմից, և երեխայի առողջության մասին բժշկական կազմակերպության տված տեղեկանքը՝ բժշկական կազմակերպությունից դուրս և առանց բժշկական օգնություն ցուցաբերելու ծննդի դեպքում:

Հոր մասին տեղեկությունները լրացվում են ծնողների ամուսնության վկայականի հիման վրա:

Վկայականը տրվում է անվճար, դիմումը ներկայացնելու և գրանցելու համար օրենքով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու օրը:

ՀՀ Օրենքը՝ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին, գլուխ 2, §.14

23. Ի՞նչ անել, եթե երեխան չունի անձը հաստատող որևէ փաստաթուղթ, անցել է ծննդյան պահից մեկ տարին, կամ չկա նույնիսկ ծննդի փաստը վկայող բժշկական տեղեկանք:

Մեկ տարեկան և ավելի դարձած երեխայի ծննդի պետական գրանցումը բժշկական կազմակերպության կամ բժշկի կողմից ծննդյան մասին տրված սահմանված ձևի փաստաթղթի առկայության դեպքում իրականացվում է ծնողների (ծնողներից մեկի) կամ շահագրգիռ այլ անձանց գրավոր դիմումի հիման վրա:

Երեխայի չափահաս դառնալուց հետո նրա ծննդի պետական գրանցումն իրականացվում է երեխայի դիմումի հիման վրա:

Ծննդի պետական գրանցման հիմքերի բացակայության դեպքում երեխայի ծննդի պետական գրանցումը կատարվում է երեխայի ծննդաբերության փաստը հաստատող՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա:

ՀՀ Օրենքը՝ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին, գլուխ 2, §.21

24. Ինչպե՞ս է գրանցվում երեխայի ծննդյան փաստը, եթե նրա ծնողները գրանցված ամուսնության մեջ չեն գտնվում:

Եթե երեխայի ծնողներն ամուսնության մեջ չեն գտնվում, ապա երեխայի ծննդի ակտի գրառման մեջ երեխայի հոր մասին տեղեկությունները լրացվում են՝

1

2

3

4

5

6

7

ԸՆԴՈՒՄ

ա) հայրության որոշման ակտի գրառման հիման վրա, եթե հայրությունը ճանաչվում և գրանցվում է երեխայի ծննդի պետական գրանցման հետ միաժամանակ.

բ) երեխայի մոր գրավոր հայտարարության հիման վրա, եթե հայրությունը որոշված չէ: Երեխայի հոր ազգանունը գրառվում է մոր ազգանվամբ, հոր անունը և նրա հայրանունը՝ մոր ցուցումով: Երեխայի հոր մասին լրացված տեղեկությունները չեն կարող արգելք հանդիսանալ հայրության որոշման հարցի լուծման համար: Մոր ցանկությամբ երեխայի ծննդի ակտի գրառման մեջ կարող են չլրացվել երեխայի հոր մասին տեղեկությունները:

Վկայականը տրվում է անվճար, դիմումը ներկայացնելու և գրանցելու համար օրենքով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու օրը:

ՀՀ Օրենքը Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին, գլուխ 2, §. 17.3

25. Ինչպե՞ս է գրանցվում երեխայի ծննդյան փաստը, եթե մայրը ամուսնացած չէ:

Գրանցումը կատարվում է.

- Մոր գրավոր դիմումի համաձայն (համապարասխան կարգով վկայագրված),
- Մոր անձը հաստատող փաստաթղթի (Քաղաքացու Անձնական վկայական կամ Անձնագիր),
- Երեխայի ծննդյան մասին բժշկական հիմնարկի կողմից տրված տեղեկանքի կամ դատարանի որոշման կամ քաղաքացիական ակտերի գրանցման մարմնի որոշման հիման վրա:

Վկայականը տրվում է անվճար, դիմումը մտցնելու և գրանցելու համար օրենքով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու օրն և եթ: Դիմում ծննդյան գրանցման մասին կարող է մտցվել ծնողներից մեկի գրանցման տեղի կամ երեխայի ծննդյան տեղի համաձայն Քաղաքացիական Ռեեստրի գործակալության համապատասխան տարածքային ծառայությունում:

ՀՀ Օրենքը Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին, գլուխ 2

26. Ինչպե՞ս է գրանցվում երեխայի ծննդյան փաստը, եթե մեկ տարին արդեն լրացել է:

Մեկ տարեկան և ավելի դարձած երեխայի ծննդի պետական գրանցումը բժշկական կազմակերպության կամ բժշկի կողմից ծննդյան մասին տրված սահմանված ձևի փաստաթղթի առկայության դեպքում իրականացվում է ծնողների (ծնողներից մեկի) կամ երեխայի գտնվելու վայրի համայնքի ղեկավարի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարի) կամ լիազորված անձի կամ շահագրգիռ այլ անձանց գրավոր դիմումի հիման վրա: Երեխայի չափահաս դառնալուց հետո նրա ծննդի պետական գրանցումն իրականացվում է իր դիմումի հիման վրա:

ՀՀ Օրենքը՝ Քաղաքացիական կացութիան ակտերի դրանցման մասին, գլուխ 2, §.21.2

1

2

3

4

5

6

7

ԼՐԱՑՄԱՆ

Գլուխ 3

Ծնողական իրավունքների զրկումը, սահմանափակումը, ընտանիքի անդամների ալիմենտային պարտականությունները

3.1. Ծնողների իրավունքների զրկումը եւ սահմանափակումը

27. Ո՞ր դեպքերում է կատարվում երեխային վերցնելը ծնողներից:

Երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում ԽՅ մարմինն իրավասու է անմիջապես երեխային վերցնելու ծնողներից (նրանցից մեկից) կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան:

Երեխային վերցնելիս ԽՅ մարմինը պարտավոր է անհապաղ ապահովել երեխայի ժամանակավոր տեղավորումը և յոթ օրվա ժամկետում դիմել դատարան՝ ծնողներին (նրանցից մեկին) ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, Հ. 58

28. Ի՞նչ է նշանակում ծնողական իրավունքներից զրկելը:

Ծնողները կամ նրանցից մեկը կարող են զրկվել ծնողական իրավունքներից, եթե նրանք՝

- չարամտորեն խուսափում են ծնողական պարտականությունները կատարելուց, ընդ որում՝ ալիմենտ վճարելուց.
- առանց հարգելի պատճառների հրաժարվում են վերցնել իրենց երեխային ծննդատնից կամ բժշկական այլ կազմակերպությունից, ինչպես նաև դաստիարակչական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից.
- չարաշահում են իրենց ծնողական իրավունքները, ընդ որում՝ իրենց հակաբարոյական վարքագծով վնասակար ազդեցություն են գործում երեխաների վրա.
- դաժանաբար են վարվում երեխաների հետ, ընդ որում՝ ֆիզիկական

կամ հոգեկան բռնություն են գործադրում նրանց նկատմամբ, ոտնձգում են նրանց սեռական անձեռնմխելիությունը.

- տառապում են քրոնիկ ալկոհոլամոլությամբ կամ թմրամոլությամբ, թունամոլությամբ.
- կատարել են իրենց երեխաների դեմ դիտավորյալ հանցագործություն:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, Հ. 59

29. Ի՞նչ կարգով է իրականացվում ծնողական իրավունքներից զրկելը:

Ծնողական իրավունքներից զրկելը կատարվում է դատական կարգով:

Ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ գործերը քննվում են ծնողներից մեկի (օրինական ներկայացուցչի), ինչպես նաև այն մարմինների ու կազմակերպությունների (ԽՅ մարմինների, որբ երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար նախատեսված կազմակերպությունների և այլնի) դիմումի հիման վրա, որոնց վրա դրված են երեխաների իրավունքների պաշտպանության պարտականությունները:

Ծնողական իրավունքներից զրկելու մասին գործերը քննվում են ԽՅ մարմնի պարտադիր մասնակցությամբ:

Եթե դատարանը ծնողական իրավունքներից զրկելու գործը քննելիս ծնողների կամ նրանցից մեկի գործողություններում հայտնաբերում է քրեորեն պատժելի արարքի հատկանիշներ, ապա այդ մասին պարտավոր է տեղեկացնել համապատասխան իրավասու մարմիններին:

Ծնողական իրավունքներից զրկելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում դատարանը պարտավոր է այդ վճռի քաղվածքն ուղարկել երեխայի ծննդի պետական գրանցման վայրի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, Հ. 60

30. Ինչպիսի՞ հետեւանքներ կարող է ունենալ ծնողական իրավունքներից զրկելը:

1. Ծնողական իրավունքներից զրկված ծնողները կորցնում են այն երեխայի հետ ազգակցության փաստի վրա հիմնված բոլոր իրավունքները, որի նկատմամբ ծնողական իրավունքներից նրանք զրկվել են (ընդ որում՝ նրանցից ապրուստի միջոց ստանալու, ինչպես

1
2
3
4
5
6
7
ԸՆԴՀԱՆՈՒՐ

նաև երեխաներ ունեցող քաղաքացիների համար սահմանված արտոնությունների ու պետական նպաստների իրավունքները):

2. Ծնողական իրավունքներից զրկելը ծնողներին չի ազատում իրենց երեխայի ապրուստը հոգալու պարտականությունից:
3. Երեխայի և ծնողական իրավունքներից զրկված ծնողների կամ նրանցից մեկի հետագայում համատեղ ապրելու մասին հարցը լուծվում է դատական կարգով:
4. Ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու դեպքում երեխան պահպանում է բնակելի տարածության սեփականության կամ բնակելի տարածության օգտագործման իր իրավունքը, իսկ բնակելի տարածության բացակայության դեպքում՝ բնակարանային օրենսդրությանը համապատասխան՝ բնակելի տարածություն ստանալու իրավունքը, ինչպես նաև ծնողների և այլ ազգականների հետ ազգակցականության կապի վրա հիմնված գույքային իրավունքները (ընդ որում՝ ժառանգություն ստանալու իրավունքը):
5. Եթե անհնարին է երեխային հանձնել մյուս ծնողին, կամ երկու ծնողներն էլ ծնողական իրավունքներից զրկվել են, ապա նա հանձնվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի խնամքին:
6. Ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու դեպքում երեխային որդեգրել թույլատրվում է ոչ շուտ, քան ծնողական իրավունքներից զրկելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից վեց ամիս հետո:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, §. 61

31. Հնարավոր է արդյոք վերականգնել ծնողական իրավունքները:

Ծնողական իրավունքները կարող են վերականգնվել, եթե ծնողները կամ նրանցից մեկը փոխել են իրենց վարքագիծը, կենսաձևը և (կամ) երեխայի դաստիարակության նկատմամբ վերաբերմունքը:

Ծնողական իրավունքները վերականգնվում են դատական կարգով՝ ծնողական իրավունքներից զրկված ծնողի դիմումի հիման վրա: Ծնողական իրավունքների վերականգնման մասին գործերը քննվում են ԽՀ մարմնի պարտադիր մասնակցությամբ:

Ծնողական իրավունքների վերականգնման մասին դիմումի հետ միաժամանակ կարող է քննության առնվել նաև երեխային ծնողներին կամ նրանցից մեկին վերադարձնելու մասին պահանջը:

Տասը տարին լրացած երեխայի նկատմամբ ծնողական իրավունքների վերականգնումը կատարվում է՝ հաշվի առնելով նրա կարծիքը:

Դատարանը, հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը, իրավունք ունի մերժելու ծնողական իրավունքների վերականգնման հայցը, եթե ծնողական իրավունքների վերականգնումը հակասում է երեխայի շահերին:

Ծնողական իրավունքների վերականգնում չի թույլատրվում, եթե երեխան որդեգրված է, և որդեգրումը սահմանված կարգով չի վերացվել:

ՀՀ Հնասնեկան օրենսդիրք, հ. 62

32. Ի՞նչ է նշանակում ծնողական իրավունքների սահմանափակում:

Ելնելով երեխայի շահերից՝ դատարանը կարող է վճիռ կայացնել ծնողներից (ծնողներից մեկից) երեխային վերցնելու մասին (ծնողական իրավունքների սահմանափակում)՝ առանց ծնողական իրավունքներից զրկելու:

Ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է, եթե երեխային ծնողների կամ նրանցից մեկի հետ թողնելը նրա համար վտանգավոր է ծնողներից կամ նրանցից մեկից անկախ հանգամանքներից (հոգեկան կամ այլ քրոնիկ հիվանդություն, ծանր հանգամանքների առկայություն և այլն):

Ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է նաև այն դեպքերում, երբ թեև երեխային ծնողների կամ նրանցից մեկի մոտ թողնելը վերջիններիս վարքագծի հետևանքով վտանգավոր է երեխայի համար, սակայն բավարար հիմքեր չկան ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու համար: Եթե ծնողները կամ նրանցից մեկը չփոխեն իրենց վարքագիծը, ԽՅ մարմինը ծնողական իրավունքների սահմանափակման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո պարտավոր է հայց ներկայացնել ծնողական իրավունքներից զրկելու մասին: ԽՅ մարմինը կարող է ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու մասին հայց ներկայացնել մինչև այդ ժամկետը լրանալը՝ ելնելով երեխայի շահերից:

Ծնողական իրավունքների սահմանափակման մասին հայց կարող են ներկայացնել երեխայի մերձավոր ազգականները, այն մարմիններն ու կազմակերպությունները, որոնց վրա օրենքով դրված են երեխաների իրավունքների պաշտպանման պարտականություններ, նախադպրոցական, հանրակրթական և այլ կազմակերպություններ:

Ծնողական իրավունքների սահմանափակման մասին գործերը քննվում են

1
2
3
4
5
6
7
ԸՆԴՈՒՄ

ԽՅ մարմնի պարտադիր մասնակցությամբ:

Ծնողների կամ նրանցից մեկի ծնողական իրավունքների սահմանափակման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում դատարանը պարտավոր է վճռի քաղվածքն ուղարկել երեխայի ծննդի պետական գրանցման քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, հ. 63

33. Կարող է արդյոք երեխան շփվել ծնողական սահմանափակ իրավունքներով ծնողների հետ:

Ծնողներին, որոնց ծնողական իրավունքները սահմանված կարգով սահմանափակվել են, կարող է թույլատրվել կապ ունենալ երեխայի հետ, եթե դա երեխայի վրա բացասական ազդեցություն չի ունենա: Երեխայի հետ ծնողների շփումը թույլատրվում է ԽՅ մարմնի, խնամատար ծնողների կամ երեխայի խնամակալի (հոգաբարձուի) կամ այն կազմակերպության ղեկավարի կամ նրան փոխարինողի համաձայնությամբ, որտեղ գտնվում է երեխան:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, հ. 65

34. Հնարավոր է արդյոք վերականգնել սահմանափակված ծնողական իրավունքները:

Եթե վերացել են այն հանգամանքները, որոնց հիման վրա սահմանափակվել են ծնողների կամ նրանցից մեկի ծնողական իրավունքները, ապա դատարանը ծնողների կամ նրանցից մեկի հայցի հիման վրա կարող է վճիռ կայացնել երեխային իր ծնողներին կամ նրանցից մեկին վերադարձնելու և սույն օրենսգրքով նախատեսված սահմանափակումները վերացնելու մասին: Հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը՝ դատարանը կարող է մերժել հայցի բավարարումը, եթե երեխային իր ծնողներին կամ նրանցից մեկին վերադարձնելը հակասում է նրա շահերին:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, հ. 66

3.2. Ծնողների ալիմենտային պարտականությունները

35. Ինչպե՞ս է որոշվում երեխաների համար դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը:

Երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ նրա ծնողների միջև համաձայնության բացակայության դեպքում ծնողներից ալիմենտի բռնագանձումը կատարվում է դատական կարգով՝ հետևյալ չափերով ամենամսյա վճարումներ կատարելու միջոցով՝

- մեկ երեխայի համար ծնողների վաստակի և (կամ) այլ եկամտի մեկ քառորդը.
- երկու երեխաների համար՝ մեկ երրորդը.
- երեք և ավելի երեխաների համար՝ կեսը:

Ամենամսյա վճարումների չափը յուրաքանչյուր երեխայի համար չպետք է պակաս լինի սահմանված նվազագույն աշխատավարձի չափից, իսկ գործազրկության նպաստ ստացող ծնողներից ալիմենտ բռնագանձելիս՝ գործազրկության նպաստի 20 տոկոսից:

ՀՀ Ընտանեկան օրենսգրք, հ. 69

36. Ինչպե՞ս է կատարվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ալիմենտի բռնագանձումը եւ օգտագործումը:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ալիմենտը բռնագանձվում է Ընտանեկան օրենսգրքի 69-71-րդ հոդվածներին համապատասխան և վճարվում է երեխաների խնամակալին (հոգաբարձուին):

Առանց ծնողական խնամքի մնացած և դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններում գտնվող երեխաների համար ծնողներից բռնագանձվող ալիմենտները փոխանցվում են այդ կազմակերպությունների հաշվին, որտեղ դրանք հաշվառվում են յուրաքանչյուր երեխայի համար առանձին:

Նշված կազմակերպությունները կարող են այդ գումարները պահել բանկում: Ալիմենտի գումարի շրջանառությունից ստացված եկամտի հիսուն տոկոսը օգտագործվում է նշված կազմակերպություններում երեխաներին

1
2
3
4
5
6
7
ԸՆԴՈՒՆՈՒՄ

պահելու համար: Կազմակերպությունը, երբ երեխան թողնում է այն, նրա անուճակ ստացված ալիմենտի գումարը և այդ գումարի շրջանառությունից ստացված եկամտի հիսուն տոկոսը փոխանցում է երեխայի անվան բացված բանկային հաշվին

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, Հ 72

37. Ինչպիսի՞ն է ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության կնքումը եւ ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության ձեւը: Ի՞նչ անել, եթե ալիմենտը չի վճարվում:

Ալիմենտ վճարելու վերաբերյալ (ալիմենտի չափի, վճարման պայմանների ու կարգի մասին) համաձայնությունը կնքվում է ալիմենտ վճարելու պարտավոր անձի և խնամակալի միջև, իսկ ալիմենտ վճարելու պարտավորություն ունեցող անձի և (կամ) ալիմենտ ստացողի անգործունակ լինելու դեպքում՝ այդ անձանց օրինական ներկայացուցիչների միջև: Սահմանափակ գործունակ անձինք ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն են կնքում իրենց օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ: Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր և ենթակա է նոտարական վավերացման:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, Հ.Հ. 87, 88, 94

38. Հնարավո՞ր է արդյոք ազատվել ալիմենտի պարտքի վճարումից:

Կողմերի համաձայնության հիման վրա ալիմենտ վճարելու դեպքում ալիմենտային պարտքը վճարելուց ազատելը կամ պակասեցնելը հնարավոր է կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ երեխաների համար ալիմենտ վճարելու դեպքերի:

Դատարանը կարող է ալիմենտ վճարելու պարտավոր անձի հայցով նրան լրիվ կամ մասամբ ազատել ալիմենտային պարտքը վճարելուց, եթե կիսատատի, որ ալիմենտ չվճարելը եղել է այդ անձի հիվանդության կամ այլ հարգելի պատճառներով, և նրա գույքային ու ընտանեկան դրությունը հնարավորություն չի տալիս մարելու կուտակված ալիմենտային պարտքը:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, Հ. 102

39. Ի՞նչ պատասխանատվություն կկրի ծնողը ալիմենտը ժամանակին չվճարելու համար:

Դատարանի վճռով ալիմենտ վճարելու պարտավոր անձի մեղքով պարտք առաջանալիս մեղավոր անձը ալիմենտ ստացողին ուշացրած յուրաքանչյուր օրվա համար տուգանք է վճարում չվճարված ալիմենտի գումարի 0,05 տոկոսի չափով: Ալիմենտ ստացողը կարող է ալիմենտ վճարելու պարտավոր և ալիմենտը ժամանակին չվճարելու համար մեղավոր անձից բռնագանձելու պահանջ ներկայացնել նաև ալիմենտային պարտավորությունների կատարման ուշացմամբ պատճառված վնասների այն մասով, որ չեն ծածկվում տուգանքով:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, հ. 103

Անաշխատունակ չափահաս զավակների ալիմենտի իրավունքը՝

Ծնողները պարտավոր են ապրուստի միջոցներ տրամադրել իրենց օգնության կարիքն ունեցող անաշխատունակ չափահաս զավակներին:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, հ.73

1
2
3
4
5
6
7
ԸՆԴՈՒՆՈՒՄ

Գլուխ 4

Կյանքի դժվարին իրավիճակ, կարիքի գնահատումը: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերումը եւ տեղավորումը:

4.1. Կյանքի դժվարին իրավիճակ, կարիքի գնահատումը

40. Ո՞ր վիճակն է համարվում «Կյանքի դժվարին իրավիճակ»:

Հաշմանդանության, ինքնասպասարկման ունակությունների կորստի, հիվանդության, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատագրկման վայրերից վերադառնալու հետևանքով մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող:

ՀՀ Օրենքը Սոցիալական աջակցության մասին

41. Ովքե՞ր են իրականացնում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կարիքների գնահատումը:

Երեխայի կարիքները գնահատվում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժինների և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների բազմամասնագիտական խմբի (սոցիալական աշխատող, մանկավարժ, բժիշկ, հոգեբան և իրավաբան) կողմից և կազմվում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալական կարիքների գնահատման թերթիկ:

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2007 թ. դեկտեմբերի 4-ի թիվ 163-Ն և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թ. դեկտեմբերի 4-ի թիվ 1180-Ն համատեղ հրամանի հավելված 1-ի (ձևաթուղթ 2):

4.2. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերումը

42. Ուլբե՞ր են առանց ծնողական խնամքի մնացած եւ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխա է համարվում 18 տարին չլրացած այն երեխան, որի ծնողները (կամ միակ ծնողը) մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափում են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք են համարվում 18-23 տարեկան այն անձինք, որոնց ծնողները (կամ միակ ծնողը) մինչև նրանց 18 տարին լրանալը մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափել են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են:

ՀՀ Օրենքը Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին, հ.2

43. Ո՞վ է իրականացնում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների եւ շահերի պաշտպանությունը:

Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը ծնողների մահվան, նրանց ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ծնողներին անգործունակ ճանաչելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու (այդ թվում՝ դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից իրենց երեխաներին վերցնելուց ծնողների հրաժարվելու դեպքերում), ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը դրվում է ԽՅ մարմինների վրա

ՀՀ Ընտանեկան օրենսդիրք, հ. 109

1
2
3
4
5
6
7
ԸՆԿՐՈՒՄ

44. Ո՞վ է բացահայտում եւ հաշվառում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին:

Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը ծնողների մահվան, նրանց ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ծնողների անգործունակ ճանաչելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու (այդ թվում՝ դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից իրենց երեխաներին վերցնելուց ծնողների հրաժարվելու դեպքերում), ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը դրվում է ԽՅ մարմինների վրա:

Հիմնարկների (նախադպրոցական կրթական, հանրակրթական, բժշկական կամ նմանատիպ այլ կազմակերպությունների) պաշտոնատար անձինք, որոնք տեղեկություններ ունեն վերը նշված երեխաների մասին, պարտավոր են այդ մասին հաղորդել ԽՅ մարմիններին՝ ըստ երեխաների փաստացի գտնվելու վայրի:

ԽՅ մարմինը նման տեղեկություն ստանալու պահից երեք օրվա ընթացքում պարտավոր է անցկացնել երեխայի կյանքի պայմանների հետազոտություն և նրա ծնողների կամ ազգականների կողմից խնամքի փաստի բացակայություն բացահայտելիս ապահովել երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը մինչև նրա տեղավորման հարցի լուծումը:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, §. 110

ԽՅ մարմինները բացահայտում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և այն չափահաս անձանց մասին տեղեկությունները, ովքեր ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

ԽՅ մարմինները իրականացնում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց հաշվառումը:

ՀՀ Կառավարության որոշում 2011թ. փետրվարի 24-ի N 164-Ն

45. Ինչպե՞ս է կատարվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հաշվառումը:

ԸԿԵԻՊ բաժինը, խնամակալության և հոգաբարձության մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա լրացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց տարածքային հաշվառման մատյանները և ձևավորում է տվյալ մարզի տարածքում բնակվող առանց

ծնողական խնամքի մնացած երեխաների տվյալների տարածքային շտեմարան և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց տվյալների տարածքային շտեմարան:

ԸԿԵԻՊ բաժինը վարում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների ավտոմատացված տեղեկատվական համակարգը: Այդ համակարգում հաշվառում է երեխաների տվյալները, որոնք իրենց փոխանցում է ԽՅ մարմինը: Համակարգում հաշվառում են հետևյալ երեխաներին՝

- առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց և սահմանված կարգով ներկայացնում Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
- բնակարանի կարիք ունեցող առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին,
- որդեգրել ցանկացող անձին (դրական եզրակացության հիման վրա) որպես որդեգրողի թեկնածու, տվյալները գրանցում է հաշվառման մատյանում, լրացնում որդեգրողի թեկնածուի անձնական քարտը և պատճենը փոխանցում է Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
- որդեգրման ենթակա երեխաներին և անձնական քարտի պատճենները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման վերցնելու համար,
- խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձին (դրական եզրակացության հիման վրա, որպես խնամատար ծնողի թեկնածու, տվյալները գրանցում է հաշվառման մատյանում և լրացնում խնամատար ծնողի թեկնածուի անձնական քարտը և պատճենը փոխանցում է Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
- մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասներին (ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող ծառայություններից ստացված տեղեկատվության համաձայն),
- հանրակրթությունից դուրս մնացած երեխաներին,
- մանկուց հաշմանդամ երեխաներին,
- սոցիալապես անապահով ընտանիքների, բուժական հաստատություններում, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ



հաստատությունում գտնվող երեխաներին:

ԸԿԵԻՊ բաժնի մասնագետը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների մասին տեղեկությունները ուղարկում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման:

ՀՀ Տարածքային կառավարման նախարարի և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010 թ. հուլիսի 13-ի N 07- Ն և N 66-Ն համատեղ հրաման

4.3. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորումը:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները դաստիարակության համար ենթակա են՝

- որդեգրման,
- խնամակալության (հոգաբարձության)
- խնամատար ընտանիքում տեղավորման,
- իսկ նման հնարավորության բացակայության դեպքում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություն:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. նոյեմբերի 9-ի N 1735-Ն

4.3.1. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների որդեգրումը

46. Ի՞նչ է նշանակում որդեգրում:

Որդեգրումը իրավաբանական այն ակտն է, որի համաձայն որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ և այն համարվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորման նախապատվելի ձևը:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, հ. 112

47. Ինչպե՞ս է իրականացվում երեխայի որդեգրման կարգը:

Որդեգրումը կատարում է դատարանը՝ երեխային որդեգրել ցանկացող անձի (անձանց) դիմումով: Երեխաների որդեգրումը հաստատելու մասին գործերը դատարանը քննում է խնամակալության և հոգաբարձության մարմնի և որդեգրել ցանկացող անձի պարտադիր մասնակցությամբ: Դատարանը

պարտավոր է երեխայի որդեգրումը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում այդ վճիռի քաղվածքն ուղարկել քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին՝ ըստ վճիռ կայացնելու վայրի:

Երեխայի որդեգրման համար անհրաժեշտ է մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժնի եզրակացությունը՝ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին՝ նշելով որդեգրվող երեխայի և որդեգրողի (որդեգրողների) անձնական շփումների փաստի վերաբերյալ տեղեկություններ:

Ամուսնության մեջ չգտնվող որդեգրողի և որդեգրվող երեխայի տարիքային տարբերությունը պետք է լինի տասնութ տարուց ոչ պակաս: Տասը տարին լրացած երեխայի որդեգրման համար անհրաժեշտ է նրա համաձայնությունը: Երեխայի որդեգրման մասին վճիռ կայացրած դատավորները կամ որդեգրման պետական գրանցում իրականացնող քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմնի ղեկավարը և աշխատողները, ինչպես նաև որդեգրման մասին տեղյակ այլ անձինք պարտավոր են պահպանել երեխայի որդեգրման գաղտնիքը:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, հ.հ113, 117, 128

48. Ինչպե՞ս են հաշվառվում որդեգրման ենթակա երեխաները:

1. Որդեգրման ենթակա երեխաների հաշվառումն իրականացնում են նրանց փաստացի գտնվելու վայրի մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժինները:
2. Հաշվառումից հետո 3 օրվա ընթացքում որդեգրման ենթակա երեխաների համար ԸԿԵԻՊ բաժինը լրացնում է անձնական քարտի N 1 ձևը և պատճեն ուղարկում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
3. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը որդեգրվող երեխային 3 օրվա ընթացքում վերցնում է կենտրոնացված հաշվառման և լրացնում է N 2 ձևը,
4. Կենտրոնացված հաշվառման վերցնելուց 3 ամիս հետո ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը երեխայի անձնական գործի պատճենահանված մեկ օրինակը հաշվառման մասին տեղեկությունների հետ միասին ուղարկում է Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարություն՝



«Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիայով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից նշանակված կենտրոնական մարմին (այսուհետ՝ կենտրոնական մարմին):

ՀՀ Կառավարության որոշում 2010 թ. մարտի 18-ի N 269-Ն

«Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիա Միավորված Ազգերի Կազմակերպություն 01.06.2007

ՀՀ Ընտանեկան օրենսդիրք, հ.114

49. Ինչպե՞ս են հաշվառվում որդեգրել ցանկացող քաղաքացիները:

1. ՀՀ քաղաքացիները, որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառելու նպատակով անձամբ կամ լիազորված անձի միջոցով դիմում են ԸԿԵԻՊ բաժին, լրացնելով N 3 ձևը:
2. Որդեգրողները ներկայացնում են համապատասխան փաստաթղթերը և նրանց պատճենները,
3. ԸԿԵԻՊ բաժինը կատարում է անձի կենսապայմանների ուսումնասիրություն, կազմում համապատասխան ակտ և տալիս որդեգրման հնարավորության մասին դրական կամ բացասական եզրակացություն:
4. ԸԿԵԻՊ բաժինը որդեգրել ցանկացող անձի համար լրացնում է անհատական քարտ N 4 ձևը 2 օրինակից և իր կողմից տրված դրական եզրակացության, որդեգրել ցանկացող անձի անձնական քարտի, նրա կողմից ներկայացված փաստաթղթերի, անձի կենսապայմանների ուսումնասիրության մասին ակտի հիման վրա որդեգրել ցանկացող անձի համար կազմում է անձնական գործ:
5. Որդեգրել ցանկացող անձի տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, բնակության վայրը, անձնական գործի համարը) գրանցվում են հաշվառման մատյանում կամ շտեմարանում:
6. ԸԿԵԻՊ բաժինը որդեգրել ցանկացող անձի անձնական գործի պատճենը հաշվառման պահից 3 օրվա ընթացքում ուղարկում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման համար:
7. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ստացված անձնական գործի հիման վրա վերցնում է կենտրոնացված հաշվառման և 3 օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է ԸԿԵԻՊ բաժնին, լրացնելով N 5 ձևը:

ՀՀ Կառավարության որոշում, 2010թ. մարտի 18-ի N 269-Ն

50. Ինչպե՞ս են հաշվառվում որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացիները:

1. ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիները, որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառելու նպատակով դիմում են համապատասխան երկրի կենտրոնական մարմին՝ ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր և տվյալ երկրի իրավասու մարմնի թույլտվությունը կամ երաշխավորագիրը ՀՀ-ում որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառելու վերաբերյալ:
2. Որդեգրել ցանկացող անձի կողմից ներկայացված փաստաթղթերը կենտրոնական մարմնի կողմից 7 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է՝ տեղեկությունների և փաստաթղթերի ամբողջականությունն ստուգելու նպատակով,
3. Կենտրոնական մարմինը տեղեկությունների և փաստաթղթերի ամբողջական չլինելու կամ թերությունների հայտնաբերելու դեպքում ընդունող պետության կողմից կենտրոնական մարմին կամ օտարերկրացուն առաջարկում է 60 օրվա ժամկետում վերացնել թերությունները և ներկայացնել պահանջվող փաստաթղթերը:
4. Կենտրոնական մարմինը տեղեկությունները և փաստաթղթերը ուսումնասիրելուց հետո 3 օրվա ընթացքում դրանք ուղարկում է որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողով:
5. Հանձնաժողովը, ուսումնասիրելով կենտրոնական մարմնից ստացված փաստաթղթերը, 1 ամսում տալիս է որդեգրման հնարավորության մասին դրական կամ բացասական եզրակացություն և 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում կենտրոնական մարմնին՝ դիմողին կամ պետության կենտրոնական մարմնին տեղեկացնելու համար:
6. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ստացված փաստաթղթերի հիման վրա իրականացնում է կենտրոնական հաշվառում և որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացու վերաբերյալ լրացնում է անձնական քարտ N 4 ձևը, 2 օրինակից:
7. Անձնական քարտի, ներկայացված փաստաթղթերի հիման վրա ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կազմում է անձնական գործ, որը համարակալվում է և անցկացվում է շտեմարանում:
8. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 3 օրվա ընթացքում հաշվառման մասին տեղեկացնում է հանձնաժողովին և կենտրոնական մարմնին՝ լրացնելով N 6 ձևը:
9. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կենտրոնական մարմին է ուղարկում նաև հաշվառված որդեգրողի անձնական գործը:

ՀՀ Կառավարության որոշում, 2010 թ. մարտի 18-ի N 269-Ն

1

2

3

4

5

6

7

ԵՐԵՎԱՆ

51. Ինչպե՞ս է հանվում հաշվառումից որդեգրել ցանկացող անձը:

- իր դիմումի համաձայն,
- դրական եզրակացության 12 ամիսը լրանալու դեպքում,
- երեխայի որդեգրման դեպքում(եթե որդեգրել է իր դիմումում նշված թվով երեխա),
- իր մշտական բնակության երկիրը փոխելու դեպքում:
- Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առաջացման դեպքում:

ՀՀ Կառավարության որոշում 2010 թ. մարտի 18-ի N 269-Ն

ՀՀ Ընտանեկան օրենսգրք, հ. 116

52. Ի՞նչ փաստաթղթեր է ներկայացնում երեխա որդեգրող օտարերկրյա քաղաքացին:

- անձը հաստատող փաստաթուղթ,
- բնակության պայմանների մասին տեղեկանք՝ տրված բնակության վայրից,
- ընտանիքի կազմի մասին տեղեկանք՝ տրված բնակության վայրից,
- զբաղեցրած պաշտոնի, աշխատավարձի և այլ եկամուտների մասին տեղեկանք,
- անձի պատշաճ վարքագծի մասին անձնական երաշխավորություն՝ տրված կազմակերպության կամ առնվազն երեք անձանց կողմից,
- բժշկական փաստաթուղթ այն մասին, որ երեխա որդեգրող անձը հիվանդ չէ ՀՀ Կառավարության 2005թ. մայիսի 5-ի N 517-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված հիվանդություններից որևէ մեկով,
- եթե ամուսնացած է, ապա ամուսնության վկայականի պատճենը,
- երեխայի՝ անուսիններից մեկի կողմից որդեգրման դեպքում մյուս ամուսնու գրավոր համաձայնությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ամուսինները դադարեցրել են ամուսնական հարաբերությունները, մեկ տարվանից ավելի համատեղ չեն ապրում, և մյուս ամուսնու բնակության վայրն անհայտ է,
- տեղեկանք որդեգրման պահին մարդու դեմ ուղղված կամ հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատվածություն չունենալու մասին:

- տվյալ երկրի իրավասու մարմնի թույլտվությունը կամ երաշխավորագիրը Հայաստանի Հանրապետությունում որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու վերաբերյալ:

Որդեգրման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են բնագրով՝ ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված կարգով և ՀՀ օրենսգրքայամբ սահմանված կարգով՝ հայերեն թարգմանված:

ՀՀ Կառավարության որոշում 2010 թ. մարտի 18-ի N 269-Ն

53. Ինչպե՞ս են հաշվառվումից հանվում որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացիները:

Որդեգրել ցանկացող քաղաքացիները հաշվառումից հանվում են՝

- իր դիմումի համաձայն,
- դրական եզրակացության 12 ամիսը լրանալու դեպքում,
- երեխայի որդեգրման դեպքում (եթե որդեգրել է իր դիմումում նշված թվով երեխա),
- ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 116-հոդվածի նախատեսված հիմքերից որևէ մեկի առաջացման հիմքում:

ՀՀ Կառավարության որոշում 2010 թ. մարտի 18-ի N 269-Ն

54. Ո՞ր կառույցը, ի՞նչ հիմքերով է տալիս եզրակացություն երեխա որդեգրել ցանկացող անձի վերաբերյալ:

Անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի ամբողջական և անթերի լինելու, որդեգրումն արգելող օրենքով նախատեսված հիմքերի բացակայության դեպքերում, անձի կենսապայմանների ուսումնասիրության ակտի հիման վրա, ԸԿԵԻՊ բաժինը տալիս է դրական եզրակացություն, որը ուժի մեջ է այն տալու օրվանից 12 ամիս: Իսկ եթե տեղեկությունները ամբողջական չեն, դրանցում թերություններ հայտնաբերելու դեպքում դիմողին գրավոր առաջարկում են 30-օրյա ժամկետում ներկայացնել պահանջվող տեղեկությունները կամ ուղղել փաստաթղթերում թերությունները: Դրական եզրակացության հիման վրա 3 օրվա ընթացքում հաշվառվում է որպես որդեգրել ցանկացող անձ, իսկ բացասական եզրակացության դեպքում 3 օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է դիմողին:

ՀՀ Ընտանեկան օրենսգրք, հ. 114

ՀՀ Կառավարության որոշում 2010 թ. մարտի 18-ի N 269-Ն

1
2
3
4
5
6
7
ԸՆԹԱՍԽՈՒՄ

55. Ինչպիսի՞ փաստաթղթեր է ներկայացնում երեխա որդեգրող ՀՀ քաղաքացին:

- անձը հաստատող փաստաթուղթ.
- բնակարանային պայմանների մասին տեղեկանք՝ տրված բնակության վայրից,
- ընտանիքի կազմի մասին տեղեկանք՝ տրված բնակության վայրից,
- զբաղեցրած պաշտոնի, աշխատավարձի և այլ եկամուտների մասին տեղեկանք.
- անձի պատշաճ վարքագծի մասին անձնական երաշխավորություն՝ տրված կազմակերպության կամ առնվազն երեք անձանց կողմից,
- բժշկական փաստաթուղթ այն մասին, որ երեխա որդեգրել ցանկացող անձը հիվանդ չէ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թ. մայիսի 5-ի N 517-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված հիվանդություններից որևէ մեկով,
- ամուսնության վկայականի պատճենը (եթե ամուսնացած է),
- երեխայի՝ ամուսիններից մեկի կողմից որդեգրման դեպքում մյուս ամուսնու գրավոր համաձայնությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ամուսինները դադարեցրել են ամուսնական հարաբերությունները, մեկ տարվանից ավելի համատեղ չեն ապրում, և մյուս ամուսնու բնակության վայրն անհայտ է,
- տեղեկանք որդեգրման պահին մարդու դեմ ուղղված կամ հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատվածություն չունենալու մասին:

ՀՀ Կառավարության որոշում 2010 թ. մարտի 18-ի N 269-Ն

56. Ովքե՞ր որդեգրելու իրավունք չունեն:

- դատարանի կողմից անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձիք,
- ամուսիններ, որոնցից մեկը դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- դատական կարգով ծնողական իրավունքներից զրկված կամ ծնողական իրավունքները սահմանափակված անձանց,
- օրենքով իրենց վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար խնամակալի (հոգաբարձուի) պարտականություններից հեռացված անձիք,
- նախկին որդեգրողներ, եթե որդեգրումը դատարանով վերացվել է նրանց մեղքով,

- այն անձիք, որոնք առողջական վիճակով չեն կարող իրականացնել ծնողական իրավունքներ (ՀՀ Կառավարության որոշում 05.05.2005թ. 517-Ն),
- այն անձիք, որոնք որդեգրման պահին չունեն այնպիսի եկամուտ, որը կապահովի որդեգրվող երեխայի նվազագույն կենսապայմանները,
- այն անձիք, որոնք չունեն մշտական բնակության վայր, ինչպես նաև այնպիսի բնակելի տարածություն, որը համապատասխանում է սանիտարական և տեխնիկական սահմանված պահանջներին,
- որդեգրման պահին մարդու դեմ ուղղված կամ հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատվածություն ունեցող անձիք:
- ամուսնության մեջ չգտնվող անձիք չեն կարող համատեղ որդեգրել միևնույն երեխային:
- միևնույն երեխային միաժամանակ որդեգրել ցանկացող մի քանի անձանց առկայության դեպքում նախապատվության իրավունք տրվում է երեխայի ազգականներին և խորթ ծնողներին, այն պայմանով, որ կպահպանվեն որդեգրվող երեխայի շահերը:

ՀՀ Ընտանեկան օրենսդիրք, Հ.116

57. Ի՞նչ փաստաթղթեր են հարկավոր ներկայացնել երեխային որդեգրելու համար:

Երեխային որդեգրելու համար անհրաժեշտ է նրա ծնողների գրավոր համաձայնությունը:

Անչափահաս ծնողների երեխային որդեգրելիս անհրաժեշտ է նաև նրանց ծնողների կամ խնամակալների (հոգաբարձուների) համաձայնությունը, իսկ ծնողների կամ խնամակալի (հոգաբարձուի) բացակայության դեպքում՝ ԽՀ մարմնի համաձայնությունը:

Երեխային որդեգրելու համար ծնողների համաձայնությունը պետք է արտահայտվի դիմումով՝ հաստատված նոտարական կարգով կամ այն կազմակերպության ղեկավարի կողմից, որտեղ գտնվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխան, ինչպես նաև համաձայնությունը կարող է արտահայտվել անմիջականորեն դատարանում որդեգրման վարույթի ժամանակ:

Ծնողները կարող են հետ վերցնել երեխային որդեգրելու համար իրենց տված համաձայնությունը մինչև նրան որդեգրելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

Ծնողները կարող են համաձայնություն տալ երեխային որդեգրելու որոշակի անձի կողմից կամ առանց նշելու որոշակի անձի:

Երեխա որդեգրելու համար համաձայնությունը կարող է տրվել միայն



երեխայի ծնվելուց հետո:

Խնամակալության (հոգաբարձության) տակ գտնվող երեխաներին որդեգրելու համար անհրաժեշտ է նրանց խնամակալների (հոգաբարձուների) գրավոր համաձայնությունը:

Խնամատար ընտանիքներում գտնվող երեխաներին որդեգրելու համար անհրաժեշտ է խնամատար ծնողների գրավոր համաձայնությունը:

ՀՀ Ընտանեկան օրենսդիրք, Հ.Տ. 118, 120

58. Հնարավոր է արդյոք երեխայի որդեգրումն առանց ծնողների համաձայնության:

Երեխային որդեգրելու համար նրա ծնողների համաձայնությունը չի պահանջվում այն դեպքերում, երբ`

- նրանք անհայտ են, կամ դատարանը ճանաչել է անհայտ բացակայող,
- դատարանը նրանց ճանաչել է անգործունակ,
- դատարանը նրանց զրկել է ծնողական իրավունքներից,
- նրանք դատարանով անհարգելի ճանաչված պատճառներով մեկ տարուց ավելի երեխայի հետ համատեղ չեն ապրում և խուսափում են նրան դաստիարակելուց ու պահելուց:

ՀՀ Ընտանեկան օրենսդիրք, Հ.119

59. Ինչպիսի՞ն է որդեգրված երեխայի անունը, հայրանունը եւ ազգանունը, ծննդյան ժամանակի եւ ծննդյան վայրի փոփոխման կարգը:

Որդեգրված երեխայի համար կարող է պահպանվել նրա անունը, հայրանունը և ազգանունը: Որդեգրողի խնդրանքով որդեգրված երեխային տրվում է որդեգրողի ազգանունը, ինչպես նաև նրա նշած անունը: Որդեգրված երեխայի անվան, հայրանվան և ազգանվան փոփոխման մասին նշվում է նրա որդեգրման մասին դատարանի վճռի մեջ:

Տասը տարին լրացած որդեգրված երեխայի անվան, հայրանվան և ազգանվան փոփոխում կարող է կատարվել միայն նրա համաձայնությամբ:

Որդեգրման գաղտնիքն ապահովելու համար որդեգրողի խնդրանքով կարող են փոփոխվել որդեգրվող երեխայի ծննդյան ժամանակը, բայց ոչ ավելի, քան երեք ամիս, ինչպես նաև նրա ծննդյան վայրը: Որդեգրված երեխայի ծննդյան ժամանակի փոփոխում թույլատրվում է միայն մինչև մեկ տարեկան երեխայի որդեգրելիս: Որդեգրված երեխայի ծննդյան ժամանակի և կամ վայրի փոփոխման մասին նշվում է նրան որդեգրելու մասին դատարանի վճռի մեջ:

ՀՀ Ընտանեկան օրենսդիրք, Հ.Տ. 123, 124

60. Պահպանվում է որդեգրված երեխայի կենսաթոշակի իրավունքը:

Երեխան, որը որդեգրվելու պահին ունեցել է ծնողների մահվան պատճառով կենսաթոշակի իրավունք, պահպանում է դա նաև որդեգրվելուց հետո:

ՀՀ Ընտանեկան օրենսգրք, հ. 127

61. Հնարավոր է արդյոք վերացնել երեխայի որդեգրումը:

Երեխայի որդեգրումը վերացվում է դատական կարգով: Երեխայի որդեգրման վերացման մասին գործը քննվում է ԽՀ մարմնի պարտադիր մասնակցությամբ: Դատարանը պարտավոր է երեխայի որդեգրումը վերացնելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում այդ վճռի քաղվածքն ուղարկել որդեգրման պետական գրանցման վայրի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին:

Երեխայի որդեգրումը վերացնելու պահանջի իրավունք ունեն նրա ծնողները, երեխայի որդեգրողները, խնամակալության և հոգաբարձության մարմինը, ինչպես նաև տասնութ տարին լրացած որդեգրվածը: Երեխայի որդեգրման վերացում չի թույլատրվում, եթե որդեգրումը վերացնելու մասին պահանջ ներկայացնելու պահին որդեգրված երեխան դարձել է չափահաս, բացի այն դեպքերից, երբ նման վերացման համար առկա են որդեգրողի և որդեգրված երեխայի, ինչպես նաև որդեգրված երեխայի ծնողների փոխադարձ համաձայնությունը, եթե ծնողները ողջ են, զրկված չեն ծնողական իրավունքներից, կամ դատարանը նրանց անգործունակ չի ճանաչել:

ՀՀ Ընտանեկան օրենսգրք, հ.հ. 129, 131

62. Ինչպե՞ս կարելի է ստանալ որդեգրվող երեխայի մասին տեղեկություններ:

Որդեգրման ենթական երեխաների մասին տեղեկություններ ստանալու նպատակով հաշվառված ՀՀ քաղաքացիները դիմում են իրենց բնակության մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմ կամ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, իսկ օտարերկրա քաղաքացիները կենտրոնական մարմին: Որդեգրող ցանկացողները կարող են ծանոթանալ երեխաների անձնական գործին:

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը որդեգրման ենթակա երեխաների մասին տեղեկությունների գրավոր հարցումների

1

2

3

4

5

6

7

ԵՐԵՎԱՆ

հիման վրա 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է հանձնաժողովին՝ նրանց գրավոր հարցումների հիման վրա:

Նախատեսված տեղեկությունը ստանալուց հետո մեկ օրվա ընթացքում նախարարությունը կասեցնում է որդեգրման ենթակա երեխայի տվյալների տրամադրումը:

Եթե որդեգրման ենթակա միևնույն երեխային որդեգրելու ցանկություն են հայտնել մեկից ավելի որդեգրել ցանկացող ՀՀ քաղաքացիներ, ապա երեխայի հետ հանդիպումը կազմակերպվում է ըստ նրանց դիմումները տալու հերթականությամբ:

ՀՀ Կառավարության որոշում, 2010 թ. մարտի 18-ի N 269-Ն

4.3.2. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների եւ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց նկատմամբ խնամակալության կամ հոգաբարձության սահմանումը

63. Ո՞ր երեխաների նկատմամբ է սահմանվում խնամակալություն կամ հոգաբարձություն:

Խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանվում է այն երեխաների նկատմամբ, ովքեր մնացել են առանց ծնողական խնամքի՝ նրանց պահելու, դաստիարակելու և կրթություն տալու, ինչպես նաև նրանց իրավունքները և շահերը պաշտպանելու նպատակներով:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, §. 134

64. Ովքե՞ր կարող են հանդիսանալ երեխաների համար խնամակալներ կամ հոգաբարձուներ:

Երեխաների խնամակալներ (հոգաբարձուներ) կարող են նշանակվել միայն չափահաս գործունակ անձինք՝ իրենց համաձայնությամբ:

Երեխայի խնամակալ (հոգաբարձու) նշանակելիս հաշվի են առնվում՝

- խնամակալի (հոգաբարձուի) բարոյական և անձնական այլ հատկանիշները,
- խնամակալի (հոգաբարձուի) պարտականությունները կատարելու նրա ունակությունները,

- խնամակալի (հոգաբարձուի) և երեխայի փոխհարաբերությունները,
- երեխայի նկատմամբ խնամակալի (հոգաբարձուի) ընտանիքի անդամների վերաբերմունքը,
- երեխայի ցանկությունը, եթե դա հնարավոր է:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, Գ.135

65. Ովքե՞ր չեն կարող հանդիսանալ երեխաների համար խնամակալներ կամ հոգաբարձուներ:

Խնամակալ (հոգաբարձու) չեն նշանակվում՝

- քրոնիկ ալկոհոլամոլությամբ կամ թմրամոլությամբ հիվանդ անձինք,
- թունամոլությամբ հիվանդ անձինք,
- կյանքի և առողջության նկատմամբ դիտավորյալ հանցագործություններ կատարած անձինք,
- խնամակալների (հոգաբարձուների) պարտականություններից հեռացված անձինք,
- ծնողական իրավունքներից զրկված անձինք,
- ծնողական սահմանափակ իրավունքներով անձինք,
- նախկին որդեգրողները, եթե որդեգրումը վերացվել է նրանց մեղքով,
- անձինք, ովքեր առողջական վիճակով չեն կարող իրականացնել երեխայի դաստիարակության պարտականությունը:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, Գ. 135

66. Ինչպե՞ս է իրականացվում խնամակալությունը (հոգաբարձությունը) դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության տակ գտնվող երեխաների նկատմամբ:

Դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններում պետության լրիվ խնամքի տակ գտնվող երեխաների նկատմամբ խնամակալ (հոգաբարձու) չի նշանակվում: Նրանց պարտականությունների կատարումը դրվում է այդ կազմակերպությունների վրա:

Խնամակալների (հոգաբարձուների) կողմից երեխաներին ժամանակավորապես տեղավորելը վերը նշված հաստատություններում, չի դադարեցնում այդ երեխաների նկատմամբ խնամակալի (հոգաբարձուի) իրավունքներն ու պարտականությունները:

Դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական

1

2

3

4

5

6

7

ԼՐԱՍԽԱՆՈՒՄ

պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպությունները իրավունք չունեն խոչընդոտելու ծնողների և մերձավոր այլ ազգականների հետ երեխայի շփվելուն, բացառությամբ, երբ նման շփումը չի համապատասխանում երեխայի շահերին:

Խնամակալն ու հոգաբարձուն խնամակալության (հոգաբարձության) տակ գտնվող երեխայի նկատմամբ խնամակալության և հոգաբարձության պարտականությունները կատարում են անհատույց:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, հ. 136

67. Որո՞նք են խնամակալների եւ հոգաբարձուների պարտականությունները:

1. Խնամակալության և հոգաբարձության պարտականությունները կատարվում են անհատույց, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
2. Անչափահաս քաղաքացիների խնամակալները և հոգաբարձուները պարտավոր են իրենց խնամարկյալների հետ ապրել համատեղ: Տասնվեց տարին լրացած խնամարկյալից հոգաբարձուի առանձին ապրելը թույլատրում է խնամակալության և հոգաբարձության մարմինը, եթե դա անբարենպաստ չի անդրադառնում խնամարկյալի դաստիարակության, նրա իրավունքների ու շահերի պաշտպանության վրա: Խնամակալները և հոգաբարձուները պարտավոր են խնամակալության ու հոգաբարձության մարմիններին տեղեկացնել իրենց բնակության վայրը փոփոխելու մասին:
3. Խնամակալները և հոգաբարձուները պարտավոր են հոգալ իրենց խնամարկյալների ապրուստը, ապահովել նրանց խնամքն ու բուժումը, կրթությունը և դաստիարակությունը, պաշտպանել նրանց իրավունքներն ու շահերը:
4. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված պարտականությունները չեն դրվում դատարանով սահմանափակ գործունակ ճանաչված չափահաս քաղաքացիների հոգաբարձուների վրա:
5. Եթե վերացել են այն հիմքերը, որոնց ուժով քաղաքացին ճանաչվել էր անգործունակ կամ սահմանափակ գործունակ, ապա խնամակալը կամ հոգաբարձուն պարտավոր է միջնորդել դատարան՝ խնամարկյալին գործունակ ճանաչելու և նրա նկատմամբ սահմանված խնամակալությունը կամ հոգաբարձությունը վերացնելու համար:

ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հ. 38

68. Ի՞նչ կարգով են խնամակալներին եւ հոգաբարձուներին ազատում իրենց պարտականությունների կատարումից:

1. Խնամակալության և հոգաբարձության մարմինը խնամակալին կամ հոգաբարձուին ազատում է իր պարտականությունների կատարումից՝ անչափահասին իր ծնողներին վերադարձնելու կամ նրան որդեգրելու դեպքում:
2. Խնամարկյալին համապատասխան դաստիարակչական, բուժական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նման այլ հաստատությունում տեղավորելիս՝ խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտականությունների կատարումից ազատում է նախկինում նշանակված խնամակալին կամ հոգաբարձուին, եթե դա չի հակասում խնամարկյալի շահերին:
3. Հարգելի պատճառների (հիվանդություն, գույքային դրության փոփոխություն, խնամարկյալի հետ փոխադարձ ըմբռնման բացակայություն և այլն) առկայության դեպքում խնամակալը կամ հոգաբարձուն իր խնդրանքով կարող է ազատվել պարտականությունների կատարումից:
4. Խնամակալի կամ հոգաբարձուի կողմից իր պարտականությունները անպատշաճ կատարելու՝ ներառյալ խնամակալությունը կամ հոգաբարձությունը շահադիտական նպատակներով օգտագործելու կամ խնամարկյալին առանց հսկողության և անհրաժեշտ օգնության թողնելու դեպքերում, խնամակալության ու հոգաբարձության մարմինը կարող է խնամակալին կամ հոգաբարձուին ազատել այդ պարտականությունների կատարումից և անհրաժեշտ միջոցներ հարցերի և պատասխանների ժողովածուել նրան՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու համար:

ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, Հ. 41

69. Ե՞րբ է դադարում խնամակալությունը եւ հոգաբարձությունը:

1. Չափահաս քաղաքացիների նկատմամբ խնամակալությունը և հոգաբարձությունը դադարում են խնամակալի, հոգաբարձուի կամ խնամակալության ու հոգաբարձության մարմնի դիմումի հիման վրա՝ խնամարկյալին գործունակ ճանաչելու կամ նրա գործունակության սահմանափակումները վերացնելու մասին դատարանի վճռով:
2. Փոքրահասակ խնամարկյալի տասնչորս տարին լրանալիս նրա նկատմամբ խնամակալությունը դադարում է, իսկ խնամակալի

1

2

3

4

5

6

7

ԼՐԱՍԽՆՈՒՄ

պարտականություններ իրականացնող քաղաքացին, առանց այդ մասին լրացուցիչ որոշման, դառնում է անչափահասի հոգաբարձուն:

3. Անչափահասի նկատմամբ հոգաբարձությունն առանց հատուկ որոշման դադարում է նրա տասնութ տարին լրանալիս, ինչպես նաև մինչև չափահաս դառնալը՝ նրա ամուսնության և լրիվ գործունակություն ձեռք բերելու այլ դեպքերում (24 հոդվածի 2-րդ և 3-րդ կետեր):

ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, Հ. 42

70. Ո՞ր մարմիններն են վերահսկում խնամակալների ու հոգաբարձուների գործունեությունը:

Խնամարկյալների բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը հսկողություն է իրականացնում խնամակալների ու հոգաբարձուների գործունեության նկատմամբ:

ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, Հ. 36.3

4.3.3. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամատար ընտանիք հանձնելու կարգը

71. Ինչպե՞ս է կազմակերպվում դաստիարակության համար երեխային խնամատար ընտանիք հանձնելու գործընթացը, ին՞չ է այն իր մեջ ներառում:

Խնամատար ընտանիքը առանց ծնողական խնամքի մնացած երեխայի (երեխաների) դաստիարակության համար տեղավորման ձևերից մեկն է:

Երեխայի (երեխաների) դաստիարակությունը կարող է իրականացվել խնամատար ընտանիքում երեխային (երեխաներին) ընտանիք դաստիարակության հանձնելու մասին պայմանագրի հիման վրա:

Քաղաքացիները (ամուսինները կամ առանձին անձինք), որոնք ցանկություն են հայտնել դաստիարակության վերցնել առանց ծնողական խնամքի մնացած երեխա (երեխաներ), համարվում են խնամատար ծնողներ: Խնամատար ընտանիք դաստիարակության համար հանձնվող երեխան (երեխաները) համարվում է հոգեզավակ, իսկ խնամատար ծնողներից և հոգեզավակներից կազմված ընտանիքը՝ խնամատար ընտանիք:

Երեխային (երեխաներին) ընտանիք հանձնելու մասին պայմանագիրը

կնքվում է ԽՅ մարմնի ու խնամատար ծնողների (ամուսինների կամ առանձին քաղաքացիների, ովքեր ցանկանում են դաստիարակության նպատակով երեխաներին վերցնել իրենց ընտանիք) միջև:

Երեխային (երեխաներին) խնամատար ընտանիքում դաստիարակվելու նպատակով հանձնում են մինչև նրա չափահաս դառնալը՝ պայմանագրով նախատեսված ժամկետով:

Դաստիարակության համար երեխային (երեխաներին) ընտանիք հանձնելու մասին պայմանագրով պետք է նախատեսվեն երեխայի (երեխաների) ապրուստի, դաստիարակության և կրթության պայմանները, խնամատար ծնողների իրավունքներն ու պարտականությունները, խնամատար ընտանիքի նկատմամբ ԽՅ մարմնի պարտականությունները, ինչպես նաև այդ պայմանագրի դադարեցման հիմքերն ու հետևանքները:

Դաստիարակության համար երեխային (երեխաներին) ընտանիք հանձնելու մասին պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել խնամատար ծնողների նախաձեռնությամբ, հարգելի պատճառների (հիվանդություն, ընտանեկան կամ գույքային դրության փոփոխում, երեխայի (երեխաների) հետ փոխըմբռնման բացակայություն, երեխաների միջև բախումներ և այլն) առկայության դեպքում, ինչպես նաև ԽՅ մարմնի նախաձեռնությամբ՝ խնամատար ընտանիքում երեխային (երեխաներին) պահելու, դաստիարակելու և կրթության համար անբարենպաստ պայմաններ առաջանալու կամ երեխային (երեխաներին) ծնողներին վերադարձնելու կամ երեխային (երեխաներին) որդեգրելու դեպքերում:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, հ. 137

ՀՀ Կառավարության որոշում 2008 թ. մայիսի 8-ի N 459-Ն

72. Ովքե՞ր կարող են համարվել խնամատար ծնողներ:

Խնամատար ծնողներ կարող են լինել ՀՀ տարածքում բնակվող չափահաս քաղաքացիները: Խնամատար ծնողների ընտրությունն իրականացնում են ԽՅ մարմինները: Խնամատար ծնողները դաստիարակության հանձնված երեխայի (երեխաների) նկատմամբ ձեռք են բերում խնամակալի (հոգաբարձուի) իրավունքներ ու պարտականություններ:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, հ.138

ՀՀ Կառավարության որոշում, 2008 թ. մայիսի 8-ի N 459-Ն

1

2

3

4

5

6

7

ԵՐԵՎԱՆ

73. Ովքե՞ր չեն կարող են համարվել խնամատար ծնողներ:

- Դատարանի կողմից անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք,
- ամուսիններ, որոնցից մեկին դատարանը ճանաչել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
- դատական կարգով ծնողական իրավունքներից զրկված կամ ծնողական սահմանափակ իրավունքներով անձինք,
- օրենքով իրենց վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու պատճառով խնամակալի (հոգաբարձուի) պարտականություններից հեռացված անձինք,
- նախկին որդեգրողներ, եթե որդեգրումը դատարանով վերացվել է նրանց մեղքով,
- այն անձինք, որոնք առողջական վիճակի պատճառով չեն կարող իրականացնել ծնողական իրավունքներ,
- այն անձինք, որոնք չունեն մշտական բնակության վայր, ինչպես նաև այնպիսի բնակելի տարածություն, որը համապատասխանում է սանիտարական և տեխնիկական սահմանված պահանջներին,
- այն անձինք, որոնք այդ պահին ունեն դատվածություն մարդու դեմ ուղղված կամ հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար:

ՀՀ Հնտանեկան օրենսդիրք, հ. 138

ՀՀ Կառավարության որոշում, 2008 թ. մայիսի 8-ի N 459-Ն

74. Ո՞ր երեխան է (երեխաները) հանձնվում խնամատար ընտանիք:

Խնամատար ընտանիքին դաստիարակության համար հանձնվում է առանց ծնողական խնամքի մնացած (այդ թվում՝ դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններում գտնվող) երեխան (երեխաները):

ՀՀ Հնտանեկան օրենսդիրք, հ.139

ՀՀ Կառավարության որոշում, 2008 թ. մայիսի 8-ի N 459-Ն

75. Ո՞ր երեխան (երեխաները) չի հանձնվում խնամատար ընտանիք:

Խնամատար ընտանիքին դաստիարակության չեն կարող հանձնվել սուր կամ քրոնիկ վարակիչ հիվանդությամբ տառապող երեխաները, եթե խնամատար ընտանիքը հակառակը չի պնդում:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, 4.139

ՀՀ Կառավարության որոշում, 2008 թ. մայիսի 8-ի N 459-Ն

76. Ինչպե՞ս կարող է խնամատար ծնողը ստանալ տեղեկություններ խնամատար ընտանիք տեղավորման ենթակա երեխայի մասին:

Խնամատար ծնող լինելու հնարավորության մասին դրական եզրակացություն ստացած անձը դաստիարակության համար խնամատարության ընտանիք տեղավորման ենթակա երեխայի մասին տեղեկատվություն ստանալու համար դիմում է իր բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմին կամ մարզպետարան, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարան կամ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՀՀ Կառավարության որոշում, 2008 թ. մայիսի 8-ի N 459-Ն

77. Ի՞նչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել խնամատար ծնող դառնալու համար:

Երեխա դաստիարակության վերցնելու ցանկություն ունեցող անձը խնամատար ծնող դառնալու հնարավորության մասին եզրակացություն ստանալու համար իր բնակության վայրի մարզպետարան, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարան է ներկայացնում դիմում, որում նշվում է նաև խնամատար ընտանիքում դաստիարակության համար հայցվող երեխաների թիվը, անձի համաձայնությունը կենսապայմանների ուսումնասիրության նպատակով տնային այցելություն կատարելու մասին: Դիմումին կցվում են՝

- անձնագրի պատճենը,
- տեղեկանք բնակության վայրից (համատիրության կամ ԲՀԿ-ի կողմից տրված)՝ բնակարանային պայմանների և ընտանիքի կազմի մասին,
- տեղեկանք աշխատավայրից՝ զբաղեցրած պաշտոնի և աշխատավարձի չափի մասին (աշխատելու դեպքում),
- ամուսնության վկայականի պատճենը (եթե ամուսնացած է),

1

2

3

4

5

6

7

ԵՐԵՎԱՆ

- բժշկական փաստաթուղթ այն մասին, որ խնամատար ընտանիք դաստիարակության համար երեխա վերցնել ցանկացող անձը (անձինք) չի տառապում (չեն տառապում) Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թ. մայիսի 5-ի N 517-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված հիվանդություններից որևէ մեկով,
- ամուսիններից մեկի կողմից երեխա դաստիարակության վերցնելու դեպքում մյուս ամուսնու գրավոր համաձայնությունը: Երկու ամուսինների կողմից երեխա դաստիարակության վերցնելու դեպքում տրվում է համատեղ դիմում:

ՀՀ Կառավարության որոշում, 2008 թ. մայիսի 8-ի N 459-Ն

78. Ի՞նչ կարգով է իրականացվում երեխաների հանձնելը խնամատար ընտանիք:

Խնամատար ընտանիքին հանձնելու համար երեխայի (երեխաների) նախնական ընտրությունն իրականացնում են երեխային (երեխաներին) դաստիարակության համար ընտանիք ընդունել ցանկացող անձինք՝ ԽՀ մարմինների համաձայնությամբ:

Արգելվում է եղբայրներին ու քույրերին առանձին խնամատար ընտանիքներ հանձնելը, բացառությամբ այն դեպքերի, եթե դա բխում է նրանց շահերից: Երեխային (երեխաներին) խնամատար ընտանիք հանձնելը իրականացվում է հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը:

1. Մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժինը, դիմումը և նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո, մեկամսյա ժամկետում իրականացնում է դիմումատուի կենսապայմանների ուսումնասիրություն և կազմում համապատասխան ակտ:
2. Կենսապայմանների ուսումնասիրության ակտի և նախատեսված փաստաթղթերի հիման վրա մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժինը, 5-օրյա ժամկետում կազմում և անձին է տրամադրում խնամատար ծնող դառնալու հնարավորության վերաբերյալ եզրակացություն, որը ուժի մեջ է մեկ տարվա ընթացքում: Բացասական եզրակացության դեպքում, եզրակացության հետ մեկտեղ դիմումատուին են վերադարձվում նրա կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը: Խնամատար ծնող լինելու հնարավորության մասին դրական եզրակացությունը հիմք է հանդիսանում խնամատար ընտանիք դաստիարակության հանձնելու նպատակով երեխայի ընտրության համար:

3. Խնամատար ծնող լինելու հնարավորության մասին դրական եզրակացություն ստացած անձը, ընտրված երեխային դաստիարակության համար, խնամատար ընտանիքում տեղավորման մասին դիմումը ներկայացնում է երեխայի բնակության (գտնվելու) վայրի ԽՅ մարմին, որը դիմումն ստանալուց հետո ոչ ուշ, քան 5-օրյա ժամկետում խնամատար ընտանիք դաստիարակության հանձնվող երեխայի մասին տեղեկություն ստանալու համար հարցում է ուղարկում երեխայի խնամքն իրականացնող համապատասխան դաստիարակչական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպության ղեկավարին կամ այն անձին, որի մոտ գտնվում է երեխան:
4. Ընտրված երեխային խնամատար ընտանիք դաստիարակության հանձնելու մասին որոշումն ընդունում է երեխայի բնակության (գտնվելու) վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը փաստաթղթերն ստանալուց հետո 3-օրյա ժամկետում:
5. Երեխային խնամատար ընտանիք դաստիարակության հանձնելու մասին որոշումը և կարգով սահմանված փաստաթղթերը երեխայի բնակության (գտնվելու) վայրի ԽՅ մարմինն անձին է տրամադրում երեխային խնամատար ընտանիք դաստիարակության հանձնելու մասին որոշման ընդունման պահից 3-օրյա ժամկետում:
6. Երեխային խնամատար ընտանիք հանձնելու մասին պայմանագիրը կնքվում է խնամատար ծնողի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնի ու խնամատար ծնողների միջև՝ երեխային խնամատար ընտանիք դաստիարակության հանձնելու մասին որոշման հիման վրա:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, հ. 139

ՀՀ Կառավարության որոշում, 2008 թ. մայիսի 8-ի N 459-Ն

1

2

3

4

5

6

7

ԵՐԵՎԱՆ

79. Ի՞նչ կարգով է իրականացվում երեխաների խնամքը պաշտպանություն իրականացնող հաստատությունում մինչև երեխայի հանձնումը խնամատար ընտանիք:

Երեխայի խնամքն իրականացնող համապատասխան դաստիարակչական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպության ղեկավարը (կամ անձը, որի մոտ գտնվում է երեխան) հարցումն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում երեխայի բնակության (գտնվելու) վայրի խնամակալության և հոգաբարձության մարմին է

Ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- երեխայի ծննդյան վկայականը,
- երեխային դաստիարակության համար խնամատար ընտանիք հանձնելու իրավական հիմքերը հաստատող փաստաթղթեր՝ (ծնողների (կամ միակ ծնողի) մահվան վկայականների պատճենները կամ ծնողական իրավունքներից զրկելու, կամ ծնողին անգործունակ ճանաչելու, կամ ծնողին անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու փաստը հաստատող դատական ակտի պատճենները, երեխայի ընկեցիկությունը հաստատող փաստաթուղթ (ակտ)),
- երեխայի առողջական վիճակի, մտավոր և ֆիզիկական զարգացման մասին համապատասխան եզրակացություն՝ տրված բժշկական հաստատության կողմից,
- քաղվածք երեխայի զարգացման պատմությունից (նորածնի պատմությունից) նրա առողջական վիճակի մասին.
- երեխայի կրթության մասին փաստաթուղթ (դպրոցական տարիքի երեխաների համար),
- տեղեկանք եղբայրների և քույրերի գոյության և գտնվելու վայրի մասին (առկայության դեպքում),
- երեխային պատկանող գույքի անվանացանկը և դրա պահպանման համար պատասխանատու անձանց մասին տեղեկություններ (առկայության դեպքում),
- անշարժ գույքի նկատմամբ երեխայի սեփականության կամ օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- ալիմենտ բռնագանձելու մասին դատական ակտի պատճենը (առկայության դեպքում),
- փաստաթղթեր, որոնք հաստատում են երեխայի կենսաթոշակ ստանալու իրավունքը, կենսաթոշակ ստացող երեխայի կենսաթոշակի գրքույկը, բանկում երեխայի անվան բացված հաշվի առկայության մասին փաստաթուղթը (առկայության դեպքում):

ՀՀ Կառավարության որոշում 2008 թ. մայիսի 8-ի N 459-Ն

80. Ի՞նչ իրավունքներ է պահպանում խնամատար ընտանիք հանձնված երեխան:

Խնամատար ընտանիք հանձնված երեխան (երեխաները) պահպանում է իրեն հասանելիք ալիմենտի, կենսաթոշակի նկատմամբ իրավունքը, ինչպես նաև բնակելի տարածության սեփականության, օգտագործման իրավունքը, իսկ բնակելի տարածության բացակայության դեպքում՝ բնակարանային օրենսդրությանը համապատասխան՝ բնակելի տարածություն ստանալու իրավունքը:

ՀՀ Ընտանեկան օրենսգրք, 4.139

ՀՀ Կառավարության որոշում 2008 թ. մայիսի 8-ի N 459-Ն

81. Ի՞նչ կարգով է իրականացվում խնամատար ընտանիք հանձնված երեխային (երեխաներին) պահելը:

Յուրաքանչյուր երեխայի պահելու համար խնամատար ընտանիքին ամսական վճարվում են դրամական միջոցներ:

Յուրաքանչյուր երեխայի պահելու, ինչպես նաև խնամատար ծնողների աշխատանքի վարձատրության համար տրվող դրամական միջոցների ֆինանսավորումը իրականացնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

ԽՀ մարմինը պարտավոր է խնամատար ընտանիքին ցուցաբերել անհրաժեշտ օգնություն, նպաստել երեխայի (երեխաների) կյանքի ու դաստիարակության համար պայմանների ստեղծմանը, ինչպես նաև վերահսկողություն իրականացնել խնամատար ծնողների վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ:

ՀՀ Ընտանեկան Օրենսգրք, 4.140,

ՀՀ Կառավարության որոշում 2008 թ. մայիսի 8-ի N 459-Ն.

1
2
3
4
5
6
7
ԸՆԿՐՈՒՄ

Գլուխ 5

Երեխայի խնամքը եւ պաշտպանությունը հաստատություններում

82. Ո՞ր կառույցն է իրականացնում գործունեություն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորման ուղղությամբ:

Միայն ԽՅ մարմինն է իրականացնում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորումը երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ: Այլ մարմիններ (իրավաբանական և ֆիզիկական անձիք), բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, սլյալ ուղղությամբ գործունեություն չեն իրականացնում:

ՀՀ ԼՆստանեկան օրենսգիրք, 2 Հ, 109.

83. Ո՞ր պետական կառույցներն են իրենց վրա վերցնում առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամքը եւ պաշտպանությունը:

Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերն են՝

- Մանկատները,
- երեխաների բժշկասոցիալական վերականգնողական հաստատությունները,
- երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատությունները,
- երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունները,
- երեխաների խնամքի ցերեկային հաստատությունները,
- երեխաների նախադպրոցական հաստատությունները,
- պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունները:

ՀՀ Կառավարության որոշում 24 մարտի 2005թ. N 381-Ն

5.1. Մանկատներ

84. Ի՞նչ տիպի մանկատներ գոյություն ունեն:

Մանկատները բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ են, որոնք իրականացնում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքը և դաստիարակությունը՝ մինչև նրանց 18 տարին լրանալը կամ մինչև կենսաբանական ընտանիք վերադարձնելը, կամ որդեգրման հանձնելը, կամ խնամակալություն, կամ հոգաբարձություն սահմանելը, կամ խնամատար ընտանիքում տեղավորելը: Մանկատները լինում են ընդհանուր տիպի և մասնագիտացված:

Ընդհանուր տիպի մանկատները դասակարգվում են ըստ տարիքային խմբերի՝

- մինչև 6 տ. երեխաների ընդհանուր տիպի մանկատուն,
- 6-18 տ. երեխաների ընդհանուր տիպի մանկատուն,
- մինչև 18 տ. երեխաների ընդհանուր տիպի մանկատուն,
- Մասնագիտացված մանկատները իրականացնում են հատուկ կարիք ունեցող երեխաների խնամքն ու դաստիարակությունը, դասակարգվում են հետևյալ խմբերի՝
- մինչև 6 տ. երեխաների մասնագիտացված մանկատուն,
- 6-18 տ. երեխաների մասնագիտացված մանկատուն:

ՀՀ Կառավարության որոշում 24 մարտի 2005թ. N 381-Ն

85. Ինչպե՞ս են երեխաները տեղավորվում մանկատուն և որո՞նք են այդ չափանիշները:

Երեխաները մանկատանը տեղավորվում են ՀՀ Կառավարության 2005թ. մարտի 24-ի, ՀՀ-ում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը, դրանցում երեխաների տեղավորման չափանիշները հաստատելու մասին N381-Ն որոշմամբ սահմանված ընդունելության չափանիշներին համապատասխան:

Ընդհանուր տիպի մանկատուն կարող են տեղավորվել մինչև 18 տարեկան երեխաները, ում ծնողները՝

- մահացել են,
- զրկված են ծնողական իրավունքից,
- ինքնակամ հրաժարվել են ծնողական պարտականությունների կատարումից և տվել են որդեգրման մասին գրավոր համաձայնություն՝ հաստատված նոտարով,

1

2

3

4

5

6

7

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԵՎԱՆ

- անհայտ են (ընկեցիկ)
- դատարանի կողմից ճանաչվել են անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,
- չունեն երեխային խնամելու հնարավորություն՝ ազատազրկման ձևով պատիժ են կրում կամ նախնական քննության կալանքի տակ են գտնվում:
- խուսափում են երեխայի դաստիարակությունից կամ նրա իրավունքների և շահերի պաշտպանությունից:

Մասնագիտացված մանկատներ կարող են տեղավորվել մինչև 18տ. հատուկ կարիք ունեցող երեխաները, ովքեր ունեն՝

- բնածին կամ ձեռքբերովի արատներ,
- խորը մտավոր թերզարգացումներ կամ զուգակցված ֆիզիկական արատներ:

Մանկատանը չեն կարող տեղավորվել բժշկական ժամանակավոր հակացուցումներ ունեցող երեխաները:

Մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժինը կամ ԽՅ մարմինը մանկատանը ժամանակավոր տեղավորվող երեխայի ծնողներին նախազգուշացնում է այն մասին, որ, եթե երեխային մանկատանը տեղավորելու հիմքերը վերանալուց հետո նրանք խուսափեն իրենց երեխային ընտանիք վերադարձնելուց, ապա երեխան կարող է հանձնվել որդեգրության, խնամակալության կամ խնամատար ընտանիք՝ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ Կառավարության որոշում 24 մարտի 2005թ. N 381-Ն

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. նոյեմբերի 9-ի N 1735-Ն

86. Ի՞նչ կարգով է իրականանում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորումը մանկատուն:

1. Երեխայի փաստացի գտնվելու վայրի ԽՅ մարմինը, ստանալով տեղեկություններ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի մասին 3 օրվա ընթացքում անցկացնում է երեխայի կյանքի պայմանների հետազոտություն, երեխայի ծնողների կամ ազգականների կողմից երեխայի խնամքի բացակայության փաստի բացահայտման դեպքում ապահովում է երեխաների ժամանակավոր տեղավորումը՝ դրա մասին տեղեկացնելով մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժին: Տեղեկությունները կարող են տրամադրվել նախադպրոցական, հանրակրթական, բժշկական, ՀՀ ոստիկանության ԱԳԲ, ԱԾՏԳ-ան, պաշտոնատար անձինք կամ տեղական, միջազգային ՀԿ-ը, ինչպես նաև քաղաքացիները:

2. ԽՅ մարմինը երեխայի կյանքի պայմանների հետազոտության ընթացքում նախապատրաստում և մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին է ներկայացնում փաստաթղթեր՝

- ծննդյան վկայականը (բնօրինակը) կամ երեխայի հայտնաբերման մասին արձանագրությունը,
- բժշկական տեղեկանք երեխայի առողջական վիճակի մասին (առկայության դեպքում),
- բնակության վայրից տեղեկանք ընտանիքի անդամների մասին (առկայության դեպքում),
- ծնողների մահվան վկայականը կամ տեղեկանք ծնողներին ծնողական իրավունքից զրկելու կամ անգործունակ, կամ սահմանափակ գործունակ, կամ անհայտ բացակայող, կամ մահացած ճանաչելու մասին դատարանի վճիռը, կամ ծնողների՝ կալանավայրում կամ նախնական քննության ընթացքում կալանքի տակ կամ ստացիոնար բուժման մեջ գտնվելու մասին(տրված համապատասխան մարմինների կողմից) կամ ծնողական իրավունքներից ինքնական հրաժարվելու և որդեգրության հանձնելու մասին ծնողների (կամ միակ ծնողի) գրավոր հայտարարագիրը, որը վավերացված է նոտարի կողմից՝ պահպանելով դրա գաղտնիությունը (առկայության դեպքում),
- ծնողի կամ երեխայի օրինական ներկայացուցչի անձը և ընտանեկան կարգավիճակը հաստատող փաստաթուղթը (առկայության դեպքում),
- տեղեկանք դպրոց հաճախելու մասին՝ դպրոցահասակ երեխաների համար,
- տեղեկանք երեխայի բնակության վայրի շրջապատի համաճարակային վիճակի մասին (բնակության վայրը հայտնի լինելու դեպքում):

3. Մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժինը առանց ծնողական խնամքի մնացած երեխայի մասին տեղեկությունները (կետ1) և փաստաթղթերը (կետ2) ստանալուց հետո 5 օրվա ընթացքում իրականացնում է երեխայի բժշկական և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն և տալիս եզրակացություն երեխային մանկատանը տեղավորելու մասին:

4. Մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժինը երեխային մանկատանը տեղավորելու մասին եզրակացության մեկ օրինակը ներկայացնում է ԽՅ մարմին (բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ է պահպանել գաղտնիությունը), իսկ մյուս օրինակը

1

2

3

4

5

6

7

ԸՆԴՈՒՑ

և վերը նշված փաստաթղթերը՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

5. Նախարարությունը նարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժնի կողմից տրված եզրակացության և փաստաթղթերի հիման վրա՝ եռօրյա ժամկետում երեխային ուղեգրում է համապատասխան մանկատուն:
6. ԸԿԵԻՊ բաժնի կողմից տրամադրված եզրակացությունն օրենսդրորեն հիմնավորված չլինելու դեպքում ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը երեխայի փաստաթղթերը հետ է ուղարկում նարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժին:
7. Երեխայի ընդունելությունը մանկատուն ձևակերպվում է տնօրենի հրամանով:
8. Երեք ամսվա ընթացքում ՀՀ ոստիկանության տարածքային մարմնի ղեկավարը հայտնաբերված երեխայի ծնողներին (կամ ծնողին) հայտնաբերելու կամ չհայտնաբերելու մասին գրավոր տեղեկացնում է այն հաստատությանը, որտեղ գտնվում է երեխան:
9. Մանկատանը տեղավորված երեխային բուժման նպատակով հիվանդանոցում կամ առողջարանում տեղավորելիս՝ մանկատան տնօրինությունը դրա մասին գրավոր տեղեկացնում է նրա ծնողներին կամ հարազատներին, եթե կան:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. նոյեմբերի 9-ի N 1735-Ն

87. Ի՞նչ գործառույթներ է իրականացնում մանկատունը:

Մանկատունը բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն է, որն ապահովում է մինչև 18 տարեկան՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական վերականգնումը, այն է՝

- մշտական խնամքն ու դաստիարակությունը,
- ֆիզիկական, մտավոր և հոգևոր զարգացումը,
- իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Մանկատունը այս գործառույթները իրականացնում է մինչև նրանց կենսաբանական ընտանիք վերադարձնելը կամ որդեգրման հանձնելը, կամ խնամակալություն, կամ հոգաբարձություն սահմանելը, կամ խնամատար ընտանիքում տեղավորելը:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. նոյեմբերի 9-ի N 1735-Ն

88. Ինչպե՞ս են մանկատուն տեղավորվում նույն ընտանիքի երեխաները:

Մանկատանը տեղավորման ենթակա նույն ընտանիքի երեխաները (քույրեր և եղբայրներ) տեղավորվում են միևնույն մանկատանը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բժշկական ժամանակավոր հակացուցումներով այդ երեխաների խնամքն ու դաստիարակությունն անհնար է իրականացնել միասին:

ՀՀ Կառավարության որոշում 2006թ. նոյեմբերի 9-ի N 1735-Ն

89. Ի՞նչ տեղեկություններ են անհրաժեշտ գրանցել երեխայի մասին մանկատանը:

Մանկատան հաշվառման մատյանում գրանցվում են երեխայի մասին հետևյալ տեղեկությունները՝

- անունը, ազգանունը, հայրանունը,
- (ընկեցիկ երեխայի համար՝ ընկեցիկ երեխայի հայտնաբերման մասին արձանագրության համարը, տարեթիվը, ամիսը, օրը),
- ծննդյան տարեթիվը, վայրը,
- սեռը,
- երեխայի վերջին բնակության վայրը (եթե հայտնի է),
- մինչև մանկատանը տեղավորելը՝ երեխայի հայտնաբերման վայրը,
- տեղեկություններ երեխայի ծնողների կամ ազգականների մասին (առկայության դեպքում),
- երեխային մանկատանը տեղավորելու պատճառները,
- երեխային մանկատուն ընդունելու և դուրս գրելու ամսաթվերը,
- երեխային բացահայտած խնամակալության և հոգաբարձության մարմնի մասին տվյալները:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. նոյեմբերի 9-ի N 1735-Ն

90. Ի՞նչ փաստաթղթային գործավարություն է վարում մանկատունը:

1. Մանկատանը տեղավորված երեխաների մասին տեղեկությունները գրանցվում են մանկատան հաշվառման մատյանում, որը համարակալվում, թելակարվում և հաստատվում է մանկատան կնիքով: Երեխայի մասին տվյալները մանկատան հաշվառման մատյանում լրացվում են անձը հաստատող փաստաթղթի, իսկ դրա բացակայության դեպքում՝ երեխայի բանավոր հայտարարության

1

2

3

4

5

6

7

ԸՆԴՈՒՆՄԱՆ

հիման վրա: Երեխայի մասին տվյալների գրանցման ժամանակ նշվում է տվյալների աղբյուրը: Երեխայի մասին տվյալները նրա բանավոր հայտարարության կամ ընկեցիկ երեխայի հայտնաբերման մասին արձանագրության հիման վրա գրանցելու դեպքում նշվում են նաև երեխայի անհատականացման հնարավոր նշանները՝ սեռը, մոտավոր տարիքը, մազերի ու աչքերի գույնը և այլ անհատականացման նշաններ:

2. Մանկատուն ընդունված երեխայի համար լրացվում է բժշկական քարտ, որում գրանցվում են նրա անձնական տվյալները, կատարված առաջին բուժզննության հիման վրա իրականացված կլինիկալաբորատոր հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև մանկատանը գտնվելու ժամանակաընթացքում ցույց տրված բժշկական օգնությունը:
3. Մանկատուն ընդունված յուրաքանչյուր երեխայի համար ստեղծվում է գործ, որում պահվում են մանկատան ղեկավարի հրամանը, բժշկական քարտը, երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագիրը, երեխայի փաստաթղթերի բնօրինակները: Գործերի համարները պետք է համընկնեն մանկատան հաշվառման մատյանում գրանցված երեխաների հաշվառման համարներին: Երեխայի դուրս գրվելուց կամ այլ մանկատուն տեղափոխվելուց, կամ որդեգրվելուց հետո գործերը պահվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետով:
4. Մանկատանը տեղավորված յուրաքանչյուր երեխայի համար կազմվում է երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագիր, և հետագայում երեխայի խնամքը կազմակերպվում է ծրագրին համապատասխան, որը վերանայվում է յուրաքանչյուր տարի:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. նոյեմբերի 9-ի N 1735-Ն

91. Ո՞ր կառույցներից կարող է երեխան տեղավորվել մանկատուն:

Մանկատանը տեղավորվում են երեխաներ՝

- բժշկական հաստատություններից,
- ՀՀ ոստիկանությունից,
- ընտանիքներից,
- երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատություններից:

Բժշկական հաստատություններից և երեխաների ժամանակավոր

տեղավորման շուրջօրյա հաստատություններից երեխաներն անմիջապես տեղավորվում են մանկատան համապատասխան խմբում, իսկ ընտանիքներից և ՀՀ ոստիկանության մարմիններից՝ մանկատան մեկուսարանում: ՀՀ ոստիկանության մարմինների կողմից հայտնաբերված երեխան մանկատանը տեղավորվում է հայտնաբերման օրը, որի մասին տեղեկացվում է երեխայի հայտնաբերման վայրի խնամակալության և հոգեբարձության հանձնաժողովին:

ՀՀ Կառավարության որոշում, 2005թ. մարտի 24-ի N 381-Ն

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. նոյեմբերի 9-ի N 1735-Ն

92. Կարո՞ղ է երեխան մի մանկատանից տեղափոխվել մյուսը, ինչպե՞ս է այն իրականանում:

Երեխաները մի մանկատանից այլ մանկատուն տեղափոխվում են տվյալ պահին երեխայի գտնվելու մանկատան ղեկավարության առաջարկությամբ՝ հաշվի առնելով երեխայի տարիքը և առողջական վիճակը: Երեխան մի մանկատանից այլ մանկատուն տեղափոխվում է նախարարության վերաուղեգրման միջոցով:

Երեխային մի մանկատանից այլ մանկատուն տեղափոխելիս՝ համապատասխանաբար փոխանցվում են երեխային վերաբերող բոլոր փաստաթղթերը:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. նոյեմբերի 9-ի N 1735-Ն

93. Ինչպե՞ս է մանկատանը տեղավորված երեխան վերադարձվում ծնողներին:

Մանկատանը տեղավորված երեխային ծնողներին են վերադարձնում նրանց դիմումի և ծնողների բնակության վայրի մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժնի եզրակացության հիման վրա, որի մեկական օրինակը տրվում է նախարարությանը և երեխայի բնակության վայրի ԽՀ մարմնին:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. նոյեմբերի 9-ի N 1735-Ն

94. Ինչպե՞ս է երեխան դուրս գրվում մանկատանից:

Երեխան կարող է մանկատանից դուրս գրվել մինչև նրա 18 տարին լրանալը՝ նրան կենսաբանական ընտանիք վերադարձնելու, կամ որդեգրման հանձնելու, կամ այլ մանկատուն տեղափոխելու, կամ նրան խնամատար ընտանիք՝ դաստիարակության հանձնելու դեպքերում:

1

2

3

4

5

6

7

ԸՆԴՈՒՍՈՒՄ

Մանկատնից երեխայի դուրսգրման մասին համապատասխան գրառումներ են կատարվում մանկատան հաշվառման մատյանում:

Որդեգրման հանձնված երեխայի դուրսգրման դեպքում մանկատան հաշվառման մատյանում նշվում է միայն «որդեգրված» բառը, իսկ նրան վերաբերող փաստաթղթերը (երեխայի առողջության մասին բժշկական փաստաթղթերը, անձնական գործը, երեխայի որդեգրման մասին դատարանի վճռի պատճենը և այլն) պահվում են չիրկիզվող պահարանում՝ առանձին կնքված ծրարով, և հրապարակման ենթակա չեն:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. նոյեմբերի 9-ի N 1735-Ն

5.2. Երեխաների բժշկասոցիալական վերականգնողական հաստատություններ

95. Ի՞նչ գործառույթներ է իրականացնում երեխաների բժշկասոցիալական վերականգնողական հաստատությունը:

Սա բուժական հաստատություն է, որն իրականացնում է հատուկ կարիքով երեխաների բուժումը, խոսքի խանգարումների շտկումը, համալիր վերականգնողական միջոցառումներ, տրամադրում է հոգեբանական աջակցություն, ինչպես նաև բուժման ընթացքում կազմակերպում է երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքները:

ՀՀ Կառավարության որոշում, 2005թ. մարտի 24-ի N 381-Ն

96. Ո՞ր երեխաները կարող են ստանալ բժշկասոցիալական վերականգնողական հաստատության ծառայությունները:

Երեխաների բժշկասոցիալական վերականգնողական հաստատություն կարող են տեղավորվել մինչև 18տ. երեխաները, ովքեր ունեն՝

- նյարդաբանական և հոգեկան քրոնիկ խանգարումներ
- զարգացման հապաղումներ,
- հոգեբանական խնդիրներ,
- բռնության ենթարկվածություն,
- բժշկասոցիալական վերականգնման, խնամքի և դաստիարակության և ուսուցման հատուկ կարիք:

ՀՀ Կառավարության որոշում, 2005թ. մարտի 24-ի N 381-Ն

5.3. Երեխաների խնամքի եւ պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ

97. Ի՞նչ գործառույթներ է կատարում երեխաների խնամքի եւ պաշտպանության գիշերօթիկ հաստատությունը:

Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկը դա բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն է, որը իրականացնում է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, սոցիալապես անապահով ընտանիքի՝ 6-18 տարեկան երեխաների խնամքը և դաստիարակությունը:

Գիշերօթիկ հաստատությունը կազմակերպում է երեխայի կրթությունը մոտակա հանրակրթական դպրոցում:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. նոյեմբերի 9-ի N 1735-Ն, Հավելված 2

98. Ո՞ր երեխաները կարող են տեղավորվել գիշերօթիկ հաստատություն:

Երեխաները գիշերօթիկ հաստատությունում տեղավորվում են ՀՀ Կառավարության 2005թ. մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը, դրանցում երեխաների տեղավորման չափանիշները հաստատելու մասին» N 381-Ն որոշմանը համապատասխան: Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն կարող են հաճախել՝ սոցիալապես անապահով ընտանիքների 6-18տ. երեխաները:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. նոյեմբերի 9-ի N 1735-Ն, Հավելված 2

99. Ինչպե՞ս են երեխաները տեղավորվում գիշերօթիկ հաստատություն:

1. Երեխային գիշերօթիկ հաստատությունում տեղավորելու համար երեխայի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը երեխայի բնակչության վայրի մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժին է ներկայացնում փաստաթղթեր:
2. Մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժինը, ընտանեկան նպաստի իրավունք ունենալու մասին տեղեկանքի բացակայության դեպքում, 3 օրվա ընթացքում դիմում է երեխայի

1

2

3

4

5

6

7

ԸՆԴՈՒՍՏՈՒՄ

բնակության վայրի ՍԾՏԳ՝ երեխայի ընտանիքի անապահովության գնահատումն իրականացնելու և սոցիալական աջակցության խորհրդի կողմից առաջարկությունն ստանալու համար:

3. Մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժինը համապատասխան փաստաթղթերի հիման վրա 5 օրվա ընթացքում կատարում է երեխայի կյանքի պայմանների ուսումնասիրություն և տալիս եզրակացություն երեխային գիշերօթիկ հաստատությունում տեղավորելու մասին:
4. Մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժինը երեխային գիշերօթիկ հաստատությունում տեղավորելու մասին եզրակացությունը և փաստաթղթերը 3 օրյա ժամկետում ներկայացնում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:
5. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժնի կողմից ստացված եզրակացության և փաստաթղթերի հիման վրա 3 օրյա ժամկետում երեխային ուղեգրում է գիշերօթիկ հաստատություն՝ կցելով երեխային վերաբերող բոլոր փաստաթղթերը:
6. Մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժնի կողմից տրված եզրակացությունն օրենսդրորեն հիմնավորված չլինելու դեպքում նախարարությունը երեխայի փաստաթղթերը հետ է ուղարկում մարզպետարան (Երևանի քաղաքապետարան) ԸԿԵԻՊ:
7. Երեխայի ընդունելությունը գիշերօթիկ հաստատություն ձևակերպվում է տնօրենի հրամանով:
8. Գիշերօթիկ հաստատությունում տեղավորված երեխային բուժման նպատակով հիվանդանոց տեղափոխելու անհրաժեշտության դեպքում տնօրինությունը դրա մասին անհապաղ տեղեկացնում է երեխայի ծնողներին:
9. Մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժինը գիշերօթիկ հաստատությունում տեղավորվող երեխայի ծնողներին գրավոր նախազգուշացնում է այն մասին, որ, եթե նրանք խուսափեն իրենց երեխային այցելելուց կամ ուսումնական արձակուրդների ժամանակահատվածում երեխային ընտանիքում պահելուց, ապա երեխան կարող է տեղափոխվել մանկատուն կամ հանձնվել ընտանիք՝ դաստիարակության՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, առանց ծնողներին լրացուցիչ տեղեկացնելու:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. նոյեմբերի 9-ի N 1735-Ն, Հավելված 2

100. Ինչպե՞ս են տեղավորվում գիշերօթիկ հաստատություն ևույն ընտանիքի երեխաները:

Գիշերօթիկ հաստատությունում տեղավորման ենթակա նույն ընտանիքի երեխաները (քույրեր և եղբայրներ) տեղավորվում են միևնույն հաստատությունում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բժշկական հակացուցումներով այդ երեխաների խնամքն ու դաստիարակությունն անհնար է իրականացնել միասին:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. նոյեմբերի 9-ի N 1735-Ն, Հավելված 2

101. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ երեխային գիշերօթիկ հաստատություն տեղավման համար:

- դիմում
- ծննդյան վկայական (բնօրինակը և պատճենը),
- բժշկական տեղեկանքներ երեխայի առողջական վիճակի մասին,
- բնակության վայրից տեղեկանք ընտանիքի անդամների մասին,
- տեղեկանք ընտանեկան նպաստի իրավունք ունենալու մասին (առկայության դեպքում),
- ծնողի կամ երեխայի օրինական ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- տեղեկանք երեխայի բնակության վայրի շրջապատի համաճարակային վիճակի մասին:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. նոյեմբերի 9-ի N 1735-Ն

5.4. Ցերեկային խնամքի տրամադրում

102. Ի՞նչ է նշանակում երեխային ցերեկային խնամքի տրամադրում:

Երեխային ցերեկային խնամքի տրամադրումը սոցիալական ծառայությունների հիմնական տեսակներից մեկն է:

Այն ցերեկային հաստատություն է, որը իրականացնում է երեխայի խնամքի, սոցիալ-հոգեբանական, կրթական և դաստիարակչական աշխատանքները:

Երեխային հաստատության կողմից խնամքը տրամադրվում է ցերեկային ժամերին՝ հաստատությունում և տնային պայմաններում, մինչև նրա սոցիալ-հոգեբանական վերականգնումը:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. դեկտեմբերի 7-ի N 1877-Ն

ՀՀ Կառավարության որոշում, 2005թ. մարտի 24-ի N 381-Ն

1

2

3

4

5

6

7

ԸՆԴՈՒՆՈՒՄ

103. Ո՞ր տարիքի երեխաներին է հաստատությունը տրամադրում ցերեկային խնամք:

Հաստատությունը ցերեկային խնամք տրամադրում է երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի կամ համաձայնության, իսկ 14-18 տարեկան երեխաներին՝ նաև երեխայի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. դեկտեմբերի 7-ի N 1877-Ն

104. Որտեղի՞ց է հաստատությունը ձեռք բերում երեխայի մասին տեղեկություններ:

Հաստատությունը երեխայի մասին տեղեկություններ ձեռք բերելու համար համագործակցում է ԽՅ մարմինների, մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժինների, սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների, հանրակրթական, բժշկական կամ նմանատիպ այլ կազմակերպությունների հետ:

Հաստատությունը նման երեխաներին կարող է հայտնաբերել նաև սեփական նախաձեռնությամբ:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. դեկտեմբերի 7-ի N 1877-Ն

105. Ի՞նչ կարգով է կազմակերպվում երեխայի ցերեկային խնամքի տրամադրումը:

Հաստատությունը հաճախող երեխայի խնամքի տրամադրումը ձևակերպվում է հաստատության ղեկավարի հրամանով, որը գրանցվում է հրամանների հաշվառման մատյանում:

Հաստատությունը երեխային ցերեկային խնամք տրամադրելու մասին գրավոր տեղեկացնում է երեխայի բնակության վայրի ԽՅ մարմնին:

Երեխայի մասին տեղեկություն ստանալուց հետո 15 օրվա ընթացքում հաստատության մասնագետների խումբն իրականացնում է երեխայի կենսապայմանների ուսումնասիրություն և կարիքների գնահատում, որի արդյունքների հիման վրա կազմում է երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագիրը:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. դեկտեմբերի 7-ի N 1877-Ն

106. Ի՞նչ փաստաթղթեր են լրացվում երեխայի համար ցերեկային խնամքի հաստատությունում:

Հաստատությունում հաշվառված երեխայի համար լրացվում է հաշվառման քարտ, որում գրանցվում են նրան վերաբերող հետևյալ տեղեկությունները՝

- անունը, ազգանունը, հայրանունը,
- ծննդյան տարեթիվը, վայրը,
- սեռը,
- ծննդյան ակտի գրանցման համարը, վայրը և ժամանակը,
- երեխայի բնակության վայրը,
- երեխային և նրա ընտանիքին վերաբերող տեղեկությունները,
- երեխային ցերեկային խնամք տրամադրելու պատճառները,
- երեխայի՝ հաստատություն հաճախելու ժամանակաշրջանը,
- տվյալներ երեխայի առողջական վիճակի մասին:
- Հաստատություն ընդունվող երեխայի համար կազմվում է անձնական գործ, որում ընդգրկվում են հետևյալ փաստաթղթերը՝
- հաստատության ղեկավարի հրամանը՝ երեխայի խնամքի տրամադրման մասին,
- երեխայի լուսանկարը,
- հաշմանդամ երեխայի համար՝ հաշմանդամությունը հավաստող փաստաթուղթը,
- երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր դիմումը կամ համաձայնությունը, իսկ 14-18 տարեկան երեխաների դեպքում՝ նաև երեխայի գրավոր համաձայնությունը,
- երեխայի հաշվառման քարտը,
- երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագիրը,
- երեխայի հետ իրականացվող սոցիալ-հոգեբանական աշխատանքի օրագիրը,
- երեխայի կարիքների գնահատման թերթիկը,
- երեխայի ծննդյան վկայականի պատճենը:

Նույն հաստատություն կրկին հաճախելու դեպքում երեխայի հաշվառման քարտում կատարվում է համապատասխան նշում:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. դեկտեմբերի 7-ի N 1877-Ն

1

2

3

4

5

6

7

ԸՆԴՈՒՆՈՒՄ

107. Ի՞նչ ծառայություններ է մատուցում երեխային ցերեկային խնամքի հաստատությունը:

Երեխան հաստատությունում գտնվելու ընթացքում ստանում է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2004թ. օգոստոսի 5-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 1324-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին համապատասխան խնամք և դաստիարակություն, ինչպես նաև երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրով նախատեսված սոցիալ-հոգեբանական և իրավաբանական աջակցություն:

Հաստատությունը երեխայի բժշկական օգնությունը կազմակերպում է տվյալ համայնքի տեղամասային պոլիկլինիկայում:

Հաստատությունը հարցերի և պատասխանների միջոցով հավաքում է անհրաժեշտ տվյալներ՝ ուսումնական հաստատություններից դուրս մնացած երեխաներին կրթական հաստատություններում տեղավորելու համար, կազմակերպում է երեխայի դասապատրաստումը դպրոցական ժամերից հետո, աջակցում երեխաների աշխատանքային հմտությունների ձևավորմանը, կազմակերպում երեխայի ազատ ժամանցը՝ մարզական և մշակութային միջոցառումներին մասնակցելու միջոցով, ինչպես նաև աջակցում է նրանց իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքներին:

ՀՀ Կառավարության որոշում 2006թ. դեկտեմբերի 7-ի N 1877-Ն

108. Ո՞ր դեպքերում է դադարեցվում երեխային տրամադրվող խնամքը:

Երեխային տրամադրվող խնամքը դադարեցվում է՝

- հաստատության մասնագետների խմբի կողմից երեխայի վիճակը կայուն գնահատելու դեպքում,
- երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի, իսկ 14-18 տարեկանների համար՝ նաև երեխայի՝ խնամք ստանալուց հրաժարվելու դեպքում:

Երեխային տրամադրվող խնամքը դադարեցնելուց հետո հաստատությունն այցելությունների միջոցով իրականացնում է շարունակական մոնիթորինգ՝ երեխայի վիճակի կայունության պահպանման նպատակով:

ՀՀ Կառավարության որոշում 2006թ. դեկտեմբերի 7-ի N 1877-Ն

5.5. Նախադպրոցական հաստատություններ

109. Ի՞նչ գործառույթներ է իրականացնում երեխաների նախադպրոցական հաստատությունը:

Երեխաների նախադպրոցական հաստատությունը իրականացնում է մինչև 6 տարեկան երեխաների խնամքը և դաստիարակությունը:

ՀՀ Կառավարության որոշում, 2005թ. մարտի 24-ի N 381-Ն

1

110. Ի՞նչ նախադպրոցական հաստատություններ գոյություն ունեն:

Երեխաների նախադպրոցական հաստատությունը դասակարգվում է ըստ հետևյալ տիպերի՝

- մսուր-մասնկապարտեզ,
- մանկապարտեզ:

ՀՀ Կառավարության որոշում, 2005թ. մարտի 24-ի N 381-Ն

2

3

4

5.6. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ

111. Ո՞ր երեխաներն են համարվում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:

Այն երեխան, ում ֆիզիկական և (կամ) մտավոր, հոգեկան զարգացման առանձնահատկությունները խոչընդոտում են կրթական ծրագրերի յուրացմանը՝ առանց կրթության առանձնահատուկ պայմանների:

ՀՀ Օրենքը Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին , Հ.1

6

7

ՀԱՅԿՍՏԱՆԻ
ԼՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

112. Ի՞նչ է նշանակում կրթության առանձնահատուկ պայմաններ:

Կրթության առանձնահատուկ պայմաններ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթության և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ հատուկ կրթական ծրագրեր և ուսուցման մեթոդներ, ուսուցման անհատական տեխնիկական միջոցներ,

կենսագործունեության միջավայր, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական և այլ ծառայություններ, առանց որոնց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրերի յուրացումը դժվար է կամ անհնարին:

ՀՀ Օրենքը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին, Հ.1

113. Կարո՞ղ է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան ստանալ տնային ուսուցում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տնային ուսուցում նշանակում է առողջական վիճակի պատճառով ժամանակավորապես կամ մշտապես ուսումնական հաստատություն չհաճախող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար համապատասխան ուսումնական հաստատության մանկավարժների կողմից տվյալ անձի տանը իրականացվող հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրերի ուսուցման կազմակերպում:

ՀՀ Օրենքը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին Հ.10

114. Կարո՞ղ է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան ուսուցումը ստանալ ստացիոնար բուժական հաստատության պայմաններում:

Երեխայի կրթության իրավունքն ապահովելու նպատակով կրթության և առողջապահության մարմինները պարտավոր են հանրակրթական ծրագրերին համապատասխան կազմակերպել ստացիոնար բուժական հաստատություններում երկարատև (ոչ պակաս, քան 21 օր) բուժման մեջ զտնվող երեխաների ուսուցումը:

Ստացիոնար բուժական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթությունն իրականացվում է տվյալ բուժական հաստատության և օրենքով սահմանված կարգով իրավասու համարվող ուսումնական հաստատության միջև պայմանագրի հիման վրա: Պայմանագրի պատճենը ներկայացվում է Կառավարության պետական կառավարման լիազոր մարմին:

Ստացիոնար բուժական հիմնարկի պայմաններում ուսուցումը կազմակերպելու պայմանագրի տիպային ձևը հաստատում են կրթության և առողջապահության պետական կառավարման լիազոր մարմինները:

ՀՀ Օրենքը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին, Հ.11

115. Ի՞նչ նպատակ ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը:

Իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան և առողջությանը համարժեք ուսումնական միջավայրում նրանց հասարակական հարմարեցման, ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերման, աշխատանքային, մասնագիտական գործունեության և ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովումն է:

ՀՀ Օրենքը Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին, Հ.4

116. Ովքե՞ր են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները:

Հատուկ կրթական հաստատություններում և ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում պետական աջակցությունից օգտվում են հետյալ երեխաները՝

- խոսքի ծանր խանգարումներ, հնչյունահնչույթային և խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաները,
- լսողության խանգարում՝ չլսող (խուլ), թույլ լսող և լսողության կորուստ,
- տեսողության խանգարում՝ կույր, թույլ տեսնող, ուշ կուրացած, շլոթյուն,
- մտավոր հետամնացություն,
- հենաշարժական համակարգի խախտումներ,
- հոգեբանական զարգացման խնդիրներ՝ ուսումնական ունակությունների զարգացման յուրահատուկ խանգարումներ,
- վարքային և հուզականային ոլորտի խանգարումներ:

ՀՀ Օրենքը Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին, Հ.5

117. Ո՞ր կառույցն է հաստատում եւ սահմանում, այն փաստը, որ երեխան ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք:

Երեխաների ֆիզիկական, մտավոր և (կամ) հոգեկան զարգացման առանձնահատկությունների բացահայտման և գնահատման, նրանց ընդունակություններին և կարողություններին համապատասխան կրթության իրականացման ձևի ընտրության նպատակով ձևավորվում են բժշկահոգեբանամանկավարժական (ԲՀՄ) գնահատման կենտրոններ:

ՀՀ Օրենքը Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին, Հ.14

1
2
3
4
5
6
7
ԸՆԴՈՒՆՈՒՄ

118. Ի՞նչ գործառույթներ են իրականացնում բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնները:

Բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնները՝

- սահմանում են երեխաների զարգացման առանձնահատկությունների առավել վաղ շրջանում բացահայտման, գնահատման և կրթության համար համարժեք պայմանների ապահովման հիմքերը,
- կազմում են համապատասխան եզրակացություն՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության համար համարժեք պայմանների վերաբերյալ,
- մատուցում են խորհրդատվություն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողներին (այլ օրինական ներկայացուցիչներին),
- մատուցում են խորհրդատվություն մանկավարժության, առողջապահության և սոցիալական ոլորտների աշխատակիցներին՝ երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կամ նրանց ծնողներին(օրինական ներկայացուցիչների) իրավունքների վերաբերյալ,
- ձևավորում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վերաբերյալ տվյալների բազա և օրենքով սահմանված կարգով այն տրամադրում են համապատասխան շահագրգիռ կազմակերպություններին:

ՀՀ Օրենքը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին, հ.14

119. Ինչպե՞ս են ներկայանում բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն:

Կրթության առանձնահատուկ պայմաններ սահմանելու նպատակով երեխան կարող է ներկայացվել բժշկահոգեբանամանկավարժական գնահատման՝

- ծնողների (այլ օրինական ներկայացուցիչների) դիմումի հիման վրա՝ իր նախաձեռնությամբ կամ կրթության, առողջապահության և սոցիալական ապահովության համակարգի իրավասու մարմինների և հասարակական կազմակերպությունների առաջարկով,
- դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշման հիման վրա:

Երեխայի բժշկահոգեբանամանկավարժական գնահատումը կազմա-

կերպվում է ծնողի (կամ նրա այլ օրինական ներկայացուցչի) մասնակցությամբ:

ՀՀ Օրենքը Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին, Հ.15

120. Ինչպե՞ս են վկայագրվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները:

Բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի գնահատման արդյունքների վերաբերյալ եզրակացության հիման վրա տարածքային կառավարման պետական մարմինը (Երևանում՝ Երևանի քաղաքապետը) վկայագրում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի և այդ վկայագիրը հիմք է երեխային ուսումնական հաստատությունն ընտրելու համար:

ՀՀ Տարածքային կառավարման նախարարի և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010 թ. հուլիսի 13-ի N 07- Ն և N 66-Ն համատեղ հրաման,

ՀՀ Օրենքը Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին, Հ.16

121. Ինչպե՞ս է իրականացվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման նկատմամբ վերահսկողությունը:

Կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են կրթության պետական կառավարման լիազոր մարմինը, պետական կառավարման տարածքային մարմինները, հիմնադիրները և ՀՀ օրենքներով լիազորված այլ մարմիններ:

ՀՀ Օրենքը Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին, Հ.21

122. Ինչպիսի՞ն է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման ֆինանսավորումը:

Հատուկ կրթության հաստատություններում, ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություններում, տնային ուսուցման պայմաններում, ստացիոնար բուժական

1
2
3
4
5
6
7
ԸՆԴՈՒՑ

հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն իրականացվում է ֆինանսավորման բարձրացված չափաքանակով:

ՀՀ Օրենքը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին, Գ. 22.5

5.7. Հանրակրթական եւ հատուկ ուսումնական հաստատություններ

123. Ի՞նչ գործառույթներ է իրականացնում պետական հանրակրթական ուսումնական հատուկ հաստատությունը:

Հանրակրթական հատուկ պետական հաստատությունները ապահովում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը և խնամքը:

ՀՀ Կառավարության որոշում 2005թ. մարտի 24-ի N 381-Ն

124. Ի՞նչ պետական հանրակրթական ուսումնական հատուկ հաստատությունների տիպեր գոյություն ունեն:

Պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունները դասակարգվում են հետևյալ տիպերի՝

- լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն,
- տեսողական խանգարումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն,
- խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն,
- հենաշարժողական խանգարումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն,
- մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հատուկ(օժանդակ) հանրակրթական ուսումնական հաստատություն,
- հակասոցիալական վարք ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն,
- արտակարգ ունակություններ դրսևորած երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն:

ՀՀ Կառավարության որոշում 2005թ. մարտի 24-ի N 381-Ն

125. Ո՞ր երեխաները կարող են հաճախել պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն:

Պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն կարող են հաճախել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները:

ՀՀ Կառավարության որոշում 2005թ. մարտի 24-ի N 381-Ն

5.8. Երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատությունը

126. Ի՞նչ կառույց է երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատությունը:

Երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատությունը դա բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն է, որը համաձայն ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 148-րդ հոդվածի, իրականացնում է երեխաների ժամանակավոր խնամքի ապահովումը՝ մինչև երեխային ծնողին վերադարձնելը կամ երեխայի նկատմամբ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ տեղավորելը մանկատուն:

ՀՀ Կառավարության որոշում, 2005թ. մարտի 24-ի N 381-Ն

127. Ո՞ր կառույցն է ՀՀ-ում ներկայացնում երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատությունը:

ՀՀ-ում երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատությունն է ներկայացնում Երեխաների ընդունման և կողմնորոշման կենտրոնը (2008 թ.-ի գարնանից այն վերանվանվել է «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի):

www.cscf-far.am

128. Ո՞ր երեխաները կարող են ստանալ ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատության ծառայությունները:

Երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա կենտրոնում տեղավորվում են հետևյալ չափանիշներով մինչև 18 տարեկան երեխաները՝ ա) թափառաշրջիկ, մուրացիկ,

1

2

3

4

5

6

7

ԸՆԴՈՒՆՈՒՄ

բ) ծնողների խնամքից զրկված (լքված):

«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատությունը ծառայություններ է մատուցում 3-18 տարեկան կյանքի դժվար վիճակում հայտնված երեխաներին Հայաստանից, ինչպես նաև Արցախից: Դրանք են՝

- Փողոցի երեխաները (անապաստան, թափառաշրջիկ, մուրացիկ և այլն),
- Բռնության ենթարկված երեխաները,
- Լքված երեխաները,
- Վաղ տարիքից աշխատանքի մեջ ներգրավված երեխաները,
- Կախվածություն ունեցող երեխաները (ալկոհոլից, թմրադեղերից և այլն),
- Վարքային խնդիրներ ունեցող երեխաները,
- Օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաները,
- Կրթության համակարգից դուրս մնացած երեխաներ,
- Խոցելի խմբերին պատկանող և աղքատությունից տուժող երեխաները,
- Կոնֆլիկտներից և աղետներից տուժած երեխաները և նրանց ընտանիքները:

ՀՀ Կառավարության որոշում, 2005թ. մարտի 24-ի N 381-Ն

129. Ի՞նչ ծառայություններ է մատուցում «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատությունը:

Կենտրոնի ծրագրերն աշխատում են կանխարգելման, պաշտպանության, և վերականգնման ոլորտներում: Կենտրոնը տրամադրում է ինչպես ուղիղ աջակցություն, այնպես էլ խորհրդատվություն, լուծում կրթության խնդիրներ, իրագործում շահերի պաշտպանություն, իրականացնում տարբեր երեխայակենտրոն ծրագրեր, մասնակցային վերապատրաստումներ, մասնագետների և ընտանիքների կարողությունների զարգացում և հետազոտություններ՝ ուղղված երեխայի և ընտանիքի կարիքներին և պաշտպանության ծառայությունների հասցեականությանը: Կենտրոնը աշխատանքները իրականացնում է 24 ժամ: Կենտրոնը մատուցում է նաև բժշկական վերականգնում, սոցիալ-հոգեբանական աջակցություն, ընտանեկան թերապիա ռիսկային վիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների համար: Թերապևտիկ և շտկողական աշխատանքներն իրականացվում է բազմամասնագիտական թիմի (հոգեբան, սոցիալական աշխատող, բժիշկ, ոստիկան) կողմից՝ ապահովելով երեխայի համար ապահով, սիրալիր և ջերմ մթնոլորտ: Կենտրոնը նաև արտակենտրոնային

աջակցության ծրագրով ծառայություններ է մատուցում 0-18 տարեկան բոլոր այն երեխաներին և նրանց ընտանիքներին, ովքեր տարբեր պատճառներով հայտնվել են դժվար վիճակում (լքվել են, դուրս մնացել կրթական համակարգից, բռնությունների ենթարկվել, անտեսվել, անապաստան մնացել և այլն):

130. Ի՞նչ է նշանակում Երեխաների պաշտպանության «Թեժ գիծ»:

Երեխայի պաշտպանության հեռախոսային «Թեժ գիծ» ծառայությունները արագ արձագանքի ծառայություններ են մատուցում խնամքի և պաշտպանության կարիք ունեցող երեխաներին, ինչպես նաև ուղղորդում համապատասխան ծառայություններ՝ երկարաժամկետ վերականգնողական ծառայություններ ստանալու նպատակով: Ձանգելը «Թեժ գիծ» ծառայությանը կատարվում է անվճար ստացիոնար հեռախոսային ցանցից ՀՀ ցանկացած բնակավայրից: Յուրաքանչյուր երեխա կամ անհանգստացած մեծահասակ կարող է զանգահարել երեխայի պաշտպանության հեռախոսահամարներով՝ շուրջօրյա:

ՀՀ-ում գործում են երեխաների պաշպանության «Թեժ գծեր»՝

«Հույս եւ Օգնություն» ՀԿ

թեժ գիծ հեռախոսահամար՝ 080-080-801

www.hopehelp@web.am

«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ

թեժ գիծ հեռախոսահամար՝ 080 061 111

www.cscf-far.am

1

2

3

4

5

6

7

ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԼՐԱՑՈՒՄ

Գլուխ 6

Երեխաների սոցիալական աջակցություն եւ պաշտպանություն

6.1. Պետության աջակցության տեսակները

131. Պետության կողմից ինչպիսի՞ դրամական նպաստներ եւ օգնություններ է սահմանված երեխաների համար:

Պետության կողմից տրամադրվում է՝

- Երեխայի ծննդյան միանվագ օգնություն
ՀՀ Օրենքը Պետական նպաստների մասին, Հոդվածներ 12, 13,
- Երեխայի առաջին դասարան ընդունվելու միանվագ օգնություն
ՀՀ Օրենքը Պետական նպաստների մասին, Հոդվածներ 14, 15,
- Երեխայի ծննդյան միանվագ նպաստ
ՀՀ Օրենքը Պետական նպաստների, Հոդվածներ 21, 22,
- Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի միանվագ նպաստ
ՀՀ Օրենքը Պետական նպաստների, Հոդվածներ 21, 22,

132. Սոցիալական ծառայությունների ի՞նչ տեսակներ գոյություն ունեն:

- 1) խորհրդատվական օգնության տրամադրում,
- 2) վերականգնողական օգնության տրամադրում,
- 3) դրամական օգնության տրամադրում,
- 4) բնափրային օգնության տրամադրում,
- 5) ժամանակավոր օթևանի տրամադրում,
- 6) խնամքի կազմակերպում,
- 7) իրավաբանական օգնության տրամադրում,
- 8) սոցիալական ծառայությունների՝ օրենքով չարգելված այլ տեսակներ:
ՀՀ Օրենքը Սոցիալական աջակցության մասին, 4.7

133. Ի՞նչ տեղեկություններ է հավաքագրում ՍԾՏԳ-ը սոցիալական ծառայություններ տրամադրելու համար:

ՍԾՏԳ-ը պարզում է հետևյալ հարցերը՝

- ստանում է արդյոք ընտանիքը կենսաթոշակ, թե ոչ,
- գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության իրավունքի հետ կապված հարցը և եթե այն չի լինում, ապա ուղղորդում է զբաղվածության պետական ծառայություն,
- անհրաժեշտության դեպքում կազմակերպում է խնամքի տրամադրում տնային պայմաններում կամ սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունենալու դեպքում նրան ներկայացնում է բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն,
- պարզում է դրամական օգնություն ստանալու իրավունքը,
- պարզում է առողջապահական պետական ծրագրերում անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի հարցը,
- պարզում է ընտանեկան նպաստի ստանալու իրավունքը
ՀՀ Կառավարության որոշում, 2006թ. Հունվարի 12-ի N110-Ն,
- պարզում է բնափրային օգնություն ստանալու իրավունքը
ՀՀ Կառավարության որոշում. 2006թ.. Հունիսի 22-ի N958-Ն,
- ուսումնասիրում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձի բնակարանային պայմանները
ՀՀ Կառավարության որոշում, 2003թ. Հուլիսի 23-ի N983-Ն,

134. Ի՞նչ է նշանակում դրամական օգնություն:

- Դրամական օգնությունը՝
- պետական նպաստներն են,
 - նպատակային նշանակություն ունեցող դրամական օգնությունն է,
 - քաղաքացիների որոշակի ծախսերի մասնակի հատուցումն է:
ՀՀ Օրենքը Սոցիալական աջակցության մասին, Գ.10

135. Ի՞նչ կարգով է տրամադրվում դրամական օգնությունը:

Գործողություններ՝

- Վարչական շրջանի ՍԾՏԳ հայտնաբերում է աղքատ ընտանիքներին,
- քաղաքացին դիմում է ներկայացնում սոցիալական աջակցություն ստանալու նպատակով,
- ՍԾՏԳ ապահովում է անհրաժեշտ խորհրդատվություն այն ընտանիքին, ով դիմել է սոցիալական աջակցություն ստանալու համար,
- ՍԾՏԳ աշխատակիցները կատարում են տնային այցելություն՝ ընտանիքի սոցիալական և նյութական պայմանները ուսումնասիրելու նպատակով,
- տվյալ ընտանիքին սոցիալական աջակցություն տրամադրելու հարցը առաջարկության է ներկայացվում,
- քաղաքացին գրում է դիմում, նպաստ նշանակելու համար և ներկայացնում համապատասխան փաստաթղթեր՝ այն է
 - գրավոր դիմում հայտարագիր, որը լրացվում է տեղում,
 - անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ,
 - տեղեկանք փաստացի բնակության վայրից,
 - հաշմանդամի և այլ սոց. խմբերի ներկայացուցիչների համապատասխան կարգավիճակը հաստատող այլ փաստաթղթեր:
- ՍԾՏԳ ներկայացված փաստաթղթերի հավաստիությունն է պարզում
- Կատարվում է ընտանիքի անապահովության գնահատում (ընտանիքների անապահովության միավորների հաշվարկ),
- կազմվում, լրացվում է ընտանիքի սոցիալական անձնագիրը,
- տեղեկատվական բազայում ընտանիքի մասին տեղեկություններ են ամրագրվում,
- նպաստի իրավունքի դեպքում՝ նպաստի նշանակման կարգադրությունն է ստացվում (բաժնի պետի կողմից),
- նպաստ ստանալու ժամկետն է սահմանվում,
- նպաստի գործն է կազմվում (անհրաժեշտ փաստաթղթեր, դիմում հայտարագիր, կարգադրություններ և այլ փաստաթղթեր):

ՀՀ Կառավարության որոշումը ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության նշանակման և վճարման կարգը Հաստատելու մասին N 110

136. Ի՞նչ է նշանակում բնաիրային օգնություն:

Բնաիրային օգնությունը տրամադրվում է սննդի կազմակերպման, հագուստի, կոշիկի, հիգիենայի միջոցների, երեխաների խնամքի պարագաների և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների, օրենքով

սահմանված դեպքերում բնակելի տարածության, հատուկ տրամսպորտային միջոցների, հաշմանդամների վերականգնողական տեխնիկական միջոցների տրամադրման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով:

Կառավարության որոշում «Բնաիրային օգնության տրամադրման կարգը Հաստատելու մասին» 2006թ. Հունիսի 14 N 958-Ն

ՀՀ Օրենքը Սոցիալական աջակցության մասին, Գլուխ 2 Հոդված 12

137. Ինչպե՞ս է կազմվում բնաիրային օգնություն տրամադրելու ծրագիրը եւ ինչ է այն իր մեջ ներառում:

Բնաիրային օգնություն տրամադրելու համար կազմվում է բնաիրային օգնություն տրամադրելու ծրագիր: Այն հաստատվում է գործընթացն սկսվելուց առնվազն մեկ ամիս առաջ: Բնաիրային ծրագիրը իր մեջ ներառում է հետևյալ տեղեկությունները՝

- Ծրագրի անվանումը և նպատակները,
- Ծրագիրը իրականացնող կազմակերպությունները,
- Ծրագրի իրականացման վայրը,
- Մեկ բաժին օգնության նկարագիրը (տեսականի, չափի միավոր, մեկ չափաքանակի պարունակություն),
- Բնաիրային օգնության ծրագրի ծավալը հաճախորդների քանակը և տրամադրման հիմքը,
- Ծրագրի ժամկետը՝ սկիզբը և ավարտը:

ՀՀ Օրենքը Սոցիալական աջակցության մասին,

ՀՀ Կառավարության որոշում 2006թ. Հունիսի 12 N 958-Ն, Բնաիրային օգնության տրամադրման կարգ

138. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ ներկայացնել բնաիրային օգնություն ստանալու համար:

Բնաիրային օգնության ստանալու համար անհրաժեշտ է՝

- գրավոր դիմում հայտարագիր, որը լրացվում է տեղում,
- անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ,
- տեղեկանք փաստացի բնակության վայրից,
- այլ փաստաթղթեր (հաշմանդամի և այլ սոց. խմբերի ներկայացուցիչների համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթղթեր):

ՀՀ Կառավարության որոշում 2006թ. Հունիսի 12 N 958-Ն, Բնաիրային օգնության տրամադրման կարգ



139. Ի՞նչ տեսքով կարող է լինել վերականգնողական օգնությունը:

Վերականգնողական օգնությունը տրամադրվում է կյանքի դժվար իրավիճակում հայտնված քաղաքացուն համաձայն կազմված սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրի (տես հարց N-143): Վերականգնողական օգնության տրամադրման ձևերն են՝

- բժշկական վերականգնման,
- վերականգնման տեխնիկայի միջոցների,
- օժանդակ սարքերի,
- հոգեբանական վերականգնման,
- մասնագիտական վերականգնման,
- աշխատանքի թերապիայի,
- այլ չարգելված ձևերի:

ՀՀ Օրենքը Սոցիալական աջակցության մասին, գլուխ 2, Հ. 9

ՀՀ Կառավարության որոշում 2006թ. սեպտեմբերի 22-ի N1369-Ն

140. Ինչպե՞ս է տրամադրվում վերականգնողական օգնություն:

Վերականգնողական օգնությունը տրամադրվում է՝ սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրին համաձայն:

Այն կազմում է ՍԾՏԳ-ի բաժնի պետի տեղակալը կամ գլխավոր մասնագետը՝ սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության կողմից ընտանիքի դիմումի հիման վրա: Գործակալությունը ծրագիրը հաշվառում է անհատական ծրագրերի հաշվառման գրանցամատյաններում, որտեղ նշվում է ծրագրի հերթական համարը, ծրագրի կազմելու ամսաթիվը, հաճախորդի անունը, բնակության վայրը:

Սոցիալական ծառայությունների տարածքային բաժինների օրինակելի կանոնադրություն:

Վերականգնողական օգնության տեսքով են նաև տրամադրվում պրոթեզաօրթոպեդիկ պարագաները, վերականգնողական տեխնիկական կամ այլ միջոցները:

Պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնողական տեխնիկական կամ այլ միջոցների տրամադրումն իրականացվում է համաձայն ՀՀ Կառավարության 2003թ. դեկտեմբերի 24-ի N1780-Ն որոշման:

Հավելված ՀՀ Կառավարության 2006թ. սեպտեմբերի 22-ի N 1369-Ն որոշման

1
2
3
4
5
6
7
ԼՐԱՍԽԻՇ

141. Ո՞ր կազմակերպություններն են տրամադրում վերականգնողական օգնություն:

Բժշկական վերականգնողական օգնությունը տրամադվում է՝

- համապատասխան բուժօգնության տեսակ իրականացնող հանրապետական, մարզային, քաղաքային և համայնքային բժշկական հաստատություններում,
- վերականգնողական կենտրոններում և առողջարաններում:

Հոգեբանական վերականգնողական օգնությունը տրամադրվում է՝

- հոգեբանական օգնություն տրամադրող մասնագիտացված հաստատություն-ներում, հանրապետական, մարզային, քաղաքային և համայնքային բժշկական հաստատություններում,
- վերականգնողական կենտրոններում, որոնք տրամադրում են հոգեբանական ծառայություններ

Մասնագիտական վերականգնման օգնությունը տրամադրվում է՝

- ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունում և նրա տարածքային մարմիններում:
- միջին մասնագիտական և պետական բարձրագույն ուսումնական հաստատությունում:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ., սեպտեմբերի 22-ի N1369-Ն

142. Ի՞նչ է սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագիրը:

Ծրագիրը կազմվում է երեխայի ուսումնասիրման և սոցիալական կարիքների գնահատման արդյունքների հիման վրա (տես՝ ձևաթուղթ 3):

Երեխայի կարիքների գնահատման հիման վրա համապատասխան մասնագետների կողմից կազմվում է ծրագիրը, որը ներառում է մի շարք վերականգնողական միջոցառումներ և ծառայություններ, ուղղված՝

1. երեխայի առողջության վերականգնմանը և զարգացմանը,
2. երեխայի հոգեբանական վերականգնմանը և զարգացմանը,
3. երեխայի սոցիալ-կենցաղային հարմարեցմանը, սոցիալական վերականգնմանը և զարգացմանը,
4. երեխայի կրթադաստիարակչական գործընթացի իրականացմանը,
5. ընտանիքում երեխայի ունեցած միջամձնային խնդիրների լուծմանը:

ՀՀ Կառավարության 2007թ., նոյեմբերի 8-ի N1288-Ն որոշման, հավելված 1

143. Ովքե՞ր են մշակում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագիրը:

Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների (այսուհետ՝ երեխա) իրավունքների պաշտպանության և սոցիալ-հոգեբանական վերականգնմանն ու զարգացմանն ապատակով սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) կազմում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժինները, երեխաների խնամք ու պաշտպանություն իրականացնող հաստատությունները և ապահովում դրանց իրականացմանը:

ՀՀ Տարածքային կառավարման նախարարի և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010 թ. հուլիսի 13-ին N 07- Ն և N 66-Ն համատեղ հրաման

144. Ո՞րն է սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրի արդյունքը:

- Ծրագրի արդյունքը երեխայի բժշկասոցիալական, հոգեբանական վերականգնումն ու հասարակությանը նրա ինտեգրումն է:
- Ծրագիրն ըստ անհրաժեշտության ենթակա է փոփոխության:
- Ծրագիրը վերանայվում է յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ, իսկ հատուկ կարիքներ ունեցող երեխաների դեպքում՝ յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ:
- Ծրագրի իրականացումը վերահսկվում է ծրագիրը կազմող կազմակերպության կամ մարմնի ղեկավարի կողմից:

ՀՀ կառավարության որոշում՝ 8 նոյեմբերի 2008թ. N1288-Ն

145. Ի՞նչ փաստաթղթեր են լրացվում երեխայի համար ժամանակավոր օթևանում:

Յուրաքանչյուր երեխայի համար կազմվում է անհատական գործ, որն իր մեջ ներառում է.

- հատատության ղեկավարի որոշում,
- երեխայի լուսանկար,
- երեխայի հաշվառման քարտ,
 - անուն ազգանուն,
 - ծննդյան տարեթիվ, վայր,

- սեռը,
- երեխայի վերջին բնակության վայրը,
- երեխայի հայտնաբերման վայրը,
- երեխայի ընտանեկան դրությունը,
- երեխային հաստատություն տեղավորելու պատճառը,
- օթևան ընդունելու և դուրս գրելու ամսաթիվը,
- ԽՅ մարմնի տվյալները, ով տրամադրել է ինֆորմացիա,

Կրկին անգամ նույն հաստատությունում ընդունվելու դեպքում երեխայի հաշվառման քարտում կատարվում է նշում:

- բժշկական քարտ,
- երեխայի սոցիալ հոգեբանական անհատական ծրագիր,
- փաստաթղթերի պատճեններ:

ՀՀ Օրենքը Սոցիալական աջակցության մասին

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ., ապրիլի 13-ի N 614-Ն

146. Ի՞նչ է նշանակում խորհրդատվական օգնություն:

Խորհրդատվական օգնությունը տրամադրվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացուն ստեղծված իրավիճակից դուրս գալու, նրա սոցիալական խնդիրների լուծման ուղիներ և եղանակներ գտնելու միջոցների մասին խորհուրդների և առաջարկությունների, ինչպես նաև համարժեք սոցիալական ծառայություններ ստանալու վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու ձևով:

ՀՀ Օրենքը Սոցիալական աջակցության մասին, Գլուխ 2, Հ.8.

147. Ի՞նչ է նշանակում իրավաբանական օգնության տրամադրում:

Իրավաբանական օգնությունը կարող է տրամադրվել կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխայի ընտանիքին:

Իրավաբանական օգնության տրամադրում նշանակում է՝

- իրավաբանական խորհրդատվություն,
- իրավունքների և օրինական շահերի պաշտպանության փաստաբանական օգնության կազմակերպում:

ՀՀ Օրենքը Սոցիալական աջակցության մասին, Գլուխ 2, Հ.14

1

2

3

4

5

6

7

ԼՐԱՍԽԻՇ

6.2. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սոցիալական աջակցություն

148. Ինչպե՞ս է իրականանում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանությունը:

Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնները, դաստիարակչական, բուժական և խնամակալական կազմակերպությունները, անկախ կազմակերպական-իրավական ձևից, կազմում են երեխաների կյանքի որակի նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրեր:

Սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագիրն իր մեջ ներառում է երեխայի վիճակի գնահատականը, այդ թվում՝ երեխայի առողջական վիճակի գնահատականը, հոգեբանական և այլ հակաճգնաժամային միջոցներ, ինչպես նաև երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնմանն ուղղված երկարաժամկետ միջոցառումներ, որոնք իրականացնում են սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնները՝ ինքնուրույն կամ կրթական, բուժական կամ այլ կազմակերպությունների հետ համատեղ:

ՀՀ Օրենքը Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին, Հ. 11, կետ 2

149. Ինչպե՞ս են կատարվում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կարիքների գնահատումը եւ ո՞րն է գնահատման նպատակը:

Երեխայի կարիքների գնահատման նպատակով ուսումնասիրվում են երեխայի սոցիալական, կրթական, հոգեբանական և առողջության հետ կապված հիմնական խնդիրները:

Կարիքների գնահատման նպատակն է երեխայի վաղ հայտնաբերումը, ուսումնասիրումն ու երեխայի սոցիալ-հոգեբանական անհատական ծրագրի ապահովումը:

ՀՀ Ընտանեկան օրենսգրքով սահմանված կարգով տեղեկատվություն ստանալուց հետո մասնագիտական խումբը իրականացնում է երեխայի հիմնական տվյալների հավաքագրումը:

Երեխայի մասին հիմնական տվյալները հավաքագրելու նպատակով մասնագիտական խումբը հավաքագրում է հետևյալ փաստաթղթերը՝

1. երեխայի անձնագրի/ծննդյան վկայականի պատճենը (առկայության դեպքում),
2. երեխայի փաստացի բնակության վայրից տեղեկանք,
3. ծնողների կամ օրինական ներկայացուցիչների անձնագրերի պատճենները (առկայության դեպքում):

Հիմնական տվյալները հավաքագրելուց հետո մասնագիտական խմբի կողմից իրականացվում է տունայց՝ երեխայի ընտանիք (առկայության դեպքում):

Տունայց կատարելու նպատակն է պարզել երեխայի և նրա ընտանիքի սոցիալական, տնտեսական, հոգեբանական և առողջական վիճակը:

Երեխայի և նրա ընտանիքի ուսումնասիրությունից հետո մասնագիտական խումբը վերլուծում է կատարված աշխատանքի արդյունքները՝ գնահատելով կարիքները ըստ առաջնահերթության և լրացնում է կարիքների գնահատման թերթիկը:

Երեխայի կարիքների գնահատման հիման վրա կազմվում է երեխայի սոցիալ-հոգեբանական անհատական ծրագիրը:

ՀՀ Տարածքային կառավարման նախարարի և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010 թ. հուլիսի 13-ի N 07- ն և N 66-ն համատեղ հրաման

150. Ի՞նչ է նշանակում ժամանակավոր օթևան:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան երեխաներին տրամադրվում է ժամանակավոր օթևան, նրանց սոցիալական խնդիրներին լուծումներ գտնելու և խախտված իրավունքները վերականգնելու նպատակով:

Օթևան կարող են տրամադրել երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող երեխայի ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատությունները:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ., ապրիլի 13-ի N 614-Ն

151. Ի՞նչպես է երեխան հայտնվում ժամանակավոր օթևանում:

- կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի մասին կրթական, բժշկական, ուստիկանության պաշտոնատար անձինք տեղեկությունները հաղորդում են երեխայի փաստացի գտնվելու վայրի ԽՅ մարմին,
- երեխայի մասին տեղեկություններ ստանալուց հետո ԽՅ մարմինն

1

2

3

4

5

6

7

ԼՐԱՍՈՒՑ

անմիջապես երեխային տեղավորում է հատատությունում,

- երեխային հաստատություն ընդունելը ձևավորվում է հաստատության ղեկավարի հրամանով,
- ԽՅ մարմինը երեխային հատատությունում տեղավորելուց հետո 3 օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է մարզպետարանի (քաղաքապետարանի) ԸԿԵԻՊ բաժին,
- ԸԿԵԻՊ բաժնի մասնագետը և հաստատության մասնագետը համատեղ երկու ամսվա ընթացքում իրականացնում են երեխայի կյանքի պայմանների հետազոտություն, կարիքների գնահատում, որի արդյունքների հիման վրա կազմում են երեխայի սոցիալիոգեբանական վերականգնողական անհատական ծրագիրը,
- կատարված աշխատանքների արդյունքների հիման վրա ԸԿԵԻՊ բաժինը տալիս է եզրակացություն երեխայի հետագա խնամքը կազմակերպելու մասին,
- օբևանը տրամադրվում է 60 օրով:

ՀՀ Օրենքը Սոցիալական աջակցության մասին

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ., ապրիլի 13-ի N 614-Ն

152. Ինչպիսի՞ աջակցություն է տրամադրվում երեխային ժամանակավոր օթևանում:

Ժամանակավոր օթևանում երեխային տրամադրվում է հետևյալ աջակցությունը՝

- ընդունվելուց 2 ժամվա ընթացքում երեխան ենթարկվում է սանիտարական մշակման,
- 1-3 օր պահվում է կարանտինի պայմաններում,
- երեխայի սոցիալ-հոգեբանական անհատական ծրագրին համապատասխան երեխան կարող է ստանալ աջակցության հետևյալ տեսակները՝
 - բժշկական,
 - իրավական,
 - հոգեբանական,
 - սոցիալական,
 - նյութական (անհարժեշտ պարագաներ, հագուստ, հիգիենայի պարագաներ), ինչպես նաև՝
 - խնամք և դաստիարակություն:

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ., ապրիլի 13-ի N 614-Ն

ՀՀ Օրենքը Սոցիալական աջակցության մասին

ՀՀ Կառավարության որոշում 2004թ. օգոստոսի 5-ի N 1324-Ն

153. Ինչպե՞ս է երեխան դուրս գրվում ժամանակավոր օթևանից:

- հաստատությունը մեկ օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է ԸԿԵԻՊ բաժին,
- ԸԿԵԻՊ բաժինը նման տեղեկություն ստանաուց հետո 3 օրվա ընթացքում տեղեկացնում է՝
 - ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը,
 - ԽՀ մարմնին՝ ով երեխայի մասին նախնական տեղեկություններ է հաղորդել,
 - երեխայի նոր բնակության վայրի ԽՀ մարմնին:

ՀՀ Օրենքը Սոցիալական աջակցության մասին

ՀՀ Կառավարության որոշում, 2006թ., ապրիլի 13-ի N 614-Ն

6.3. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանություն

154. Ի՞նչպես է պահպանվում ԱԾԽՄ երեխաների խնամքը:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքները և օրինական շահերը ուղղակիորեն պահպանելու նպատակով առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին հասցված վնասի փոխհատուցումը դատարանի վճռով գանձվում է մեղավոր անձանցից՝ հաշվի առնելով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական ադապտացման և սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացումը:

ՀՀ Օրենքը Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին, Հ.11

155. Ի՞նչ է նշանակում խնամքի տրամադրում եւ ինչպիսի տեսքով է այն տրամադրվում:

Խնամքի տրամադրումը առանց ծնողական խնամք մնացած երեխաներին դա ընտանեկանին առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմանները ապահովելու նպատակով անհրաժեշտ օգնությունն է:

Խնամքը տրամադրվում է սննդի, այդ թվում՝ դիետիկ, բժշկական, սանհիտարահիգիենիկ սպասարկման, հագուստի, կոշիկի և առաջին անհրաժեշտության այլ պարագաների տրամադրման, մշակութային,

1
2
3
4
5
6
7
ԼՐԱՍԽԻՇ

կրթական, ժամանցի, անհրաժեշտության դեպքում՝ հաճախորդների դիսպանսերիզացման և հոսպիտալացման, իրավաբանական օգնության և այլ միջոցառումների կազմակերպման միջոցով:

ՀՀ Օրենքը Սոցիալական աջակցության մասին, Գլուխ 2, Հ.13

156. Որտե՞ղ է տրամադրվում խնամքը:

Խնամքը տրամադրվում է տնային պայմաններում կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում կամ սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում:

Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունն ապահովում է երկարաժամկետ կացարան, շուրջօրյա լրիվ խնամք, իսկ սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոնը՝ խնամքի տրամադրում ցերեկային ժամերին տնային պայմաններում և (կամ) կենտրոնում:

ՀՀ Օրենքը Սոցիալական աջակցության մասին, Գլուխ 2, Հ.13

ՀՀ Կառավարության որոշում 24 մարտի 2005թ. N 381-Ն

157. Ի՞նչ սոցիալական չափորոշիչներ է սահմանում պետությունը առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար:

- Հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթություն,
- անվճար բժշկական օգնություն և սպասարկում, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սննդի ապահովում՝ սննդի նվազագույն չափորոշիչներին համապատասխան,
- երեխաների առողջության վերականգնման և հանգստի կազմակերպում,
- 16 տարին լրացած առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար մասնագիտական կողմնորոշում, գործունեության բնագավառի ընտրություն, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի տեղավորում, աշխատանքի պաշտպանություն,
- սոցիալական աջակցության՝ սոցիալական ադապտացման և սոցիալ-հոգեբանական վերականգնման միջոցառումներ՝ օրենքով սահմանված կարգով,
- բնակարանի իրավունքի ապահովում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- անվճար իրավաբանական օգնության ցուցաբերում:

ՀՀ Օրենքը Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին, Հ.6

158. Ի՞նչ իրավունքներ եւ արտոնություններ ունեն առանց ծնողական խնամքի մնացած երեխաները կրթական համակարգում:

ԱԾԽՄ երեխաները պետական միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատությունների նախապատրաստական դասընթացներ ընդունվում և սովորում են անվճար: Ընդհանուր մրցույթով պետական միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար համակարգ ընդունվում են վճարովի համակարգի համար առևձայգը անցումային միավորներ հավաքելու դեպքում: Պետական միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին անհրաժեշտ առաջադիմություն ունենալու դեպքում վճարվում է կրթաթոշակ՝ տվյալ ուսումնական հաստատությունում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով:

ՀՀ Օրենքը Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին, Հ.7

159. Ինչպե՞ս է ապահովվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների առողջության պահպանման իրավունքը:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին տրամադրվում է անվճար բժշկական օգնություն պետական պատվերի շրջանակներում:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին կարող են տրամադրվել սպորտ-առողջարարական ճամբարների, հանգստյան տների, համապատասխան բժշկական ցուցումների առկայության դեպքում՝ առողջարանային բուժման ուղեգրեր՝ պետական և համայնքային բյուջեներից այդ նպատակով նախատեսված միջոցների և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

ՀՀ Օրենքը Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին, Հ.8

160. Ինչպե՞ս է ապահովվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բնակելի տարածության իրավունքը:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները բուժական, դաստիարակչական, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական



ծնից, գտնվելու կամ բնակվելու, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու, հանրապետության զինված ուժերում ծառայելու կամ ազատագրկման վայրերում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում պահպանում են իրենց բնակելի տարածության սեփականության կամ բնակելի տարածության օգտագործման իրավունքը:

18 տարին լրացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, որոնք չունեն սեփականության կամ օգտագործման իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն և վերջին 5 տարիների ընթացքում չեն օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունը, իրավունք ունեն ստանալու նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան բնակելի տարածություն:

Բնակելի տարածություն չունեցող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակտարածությունը տրվում է արտահերթ՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից:

ՀՀ Օրենքը Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին, Հ.9

ՀՀ Կառավարության որոշում Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը Հաստատելու մասին, 23 Հուլիսի 2003թ., N 983-Ն

161. Ու՞ր եւ ինչպե՞ս պետք է դիմի ԱԾԽՄ երեխան (կամ այդ թվին պատկանող) իրեն բնակարան տրամադրելու համար:

- Բնակարանի կարիք ունեցող անձինք հաշվառման վերցնելու մասին դիմումը ներկայացնում են նրանց փաստացի բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմին:
- Դիմումին կցվում է որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա հաշվառված լինելու մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից տրված տեղեկանքը, իսկ 1985-1990 թվականներին ծնված անձինք՝ առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից տրված տեղեկանքը, վերջին 5 տարվա ընթացքում բնակարան կամ բնակելի տարածություն օտարած չլինելու մասին Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված տեղեկանքը և փաստացի բնակության վայրի մասին տեղեկանքը:
- Դիմումները գրանցվում են բնակարանի կարիք ունեցող անձանց դիմումների հաշվառման ընդհանուր մատյանում (N 1 ձև):

ՀՀ Կառավարության որոշում Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը Հաստատելու մասին, 23 Հուլիսի 2003թ., N 983-Ն

162. Ի՞նչ քայլեր է կատարում ՏԻՄ-ը դիմումը ուսումնասիրելու համար:

Տեղական ինքնակառավարման մարմինը դիմումն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում դիմումի պատճենը և անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթն ուղարկում է տվյալ տարածքն սպասարկող սոցիալական ծառայության տարածքային գործակալություն:

- Բնակարանի կարիք ունեցող անձանց բնակարանային պայմանները մանրակրկիտ ուսումնասիրում է սոցիալական ծառայության տարածքային գործակալության՝ առնվազն 3 անձից բաղկացած հանձնաժողովը, որի կազմում կարող են ընդգրկվել նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, և կազմում է համապատասխան ակտ (N 2 ձև):
- Սոցիալական ծառայության տարածքային գործակալությունը դիմումն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում՝ բնակարանային պայմանների ուսումնասիրության ակտը և ստացված փաստաթղթերն ուղարկում է տեղական ինքնակառավարման մարմին:
- Հաշվառման վերցնելու մասին դիմումները նրանց բնակարանային պայմանների ուսումնասիրության ակտի և մյուս անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին մեկամսյա ժամկետում քննության են առնվում (անհրաժեշտության դեպքում՝ դիմողների ներկայությամբ) համայնքի ավագանու նիստում և հաշվառման են վերցվում:
- Դիմողները մեկշաբաթյա ժամկետում գրավոր տեղեկացվում են ընդունված որոշման մասին: Հաշվառման վերցնելու մասին դիմումը մերժելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:
- Հաշվառման վերցված բնակարանի կարիք ունեցող անձանց գրանցում են տեղական ինքնակառավարման մարմնի՝ բնակարանի կարիք ունեցող անձանց հաշվառման մատյանում (N 3 ձև), որը պետք է լինի համարակալված, թելակարված և տեղական ինքնակառավարման մարմնի կնիքով կնքված:

ՀՀ Կառավարության որոշում Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը Հաստատելու մասին, 23 Հունիսի 2003թ., N 983-Ն

163. Ո՞ր դեպքում են հանվում հաշվառումից բնակարանի կարիք ունեցողները:

- Բնակարանի կարիք ունեցող անձինք բնակարանային հաշվառումից հանվում են՝
 - ա) բնակարանով ապահովվելու,
 - բ) Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, այլ



պետությունն մշտական բնակության փոխադրվելու,
գ) բնակարանի կարիք ունենալու մասին կեղծ տեղեկություններ ներկայացնելու,
դ) երկրորդ անգամ հատկացված բնակարանից հրաժարվելու դեպքերում:

- Հաշվառումից հանելու հարց առաջանալու դեպքում՝ բնակարանի կարիք ունեցող անձը հրավիրվում է մասնակցելու համայնքի ավագանու նիստին, որտեղ որոշվում է նրան հաշվառումից հանելու հարցը: Բնակարանի կարիք ունեցող անձի՝ անհարգելի պատճառով նիստին չներկայանալը չի կարող խոչընդոտել հարցի լուծմանը: Բնակարանի կարիք ունեցող անձին ընդունված որոշման մասին տեղեկացվում է գրավոր:

ՀՀ Կառավարության որոշում Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը Հաստատելու մասին, 23 Հուլիսի 2003թ., N 983-Ն

164. Ի՞նչ առաջնահերթությամբ են տրամադրվում բնակարանները:

- Տեղական ինքնակառավարման մարմիններում կազմվում են հաշվառման վերցված բնակարանի կարիք ունեցող անձանց ցուցակները՝ ըստ հետևյալ առաջնահերթության՝
 - ա) 3 և ավելի անչափահաս երեխա ունեցող անձինք,
 - բ) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներ,
 - գ) 2 անչափահաս երեխա ունեցող անձինք,
 - դ) մեկ անչափահաս երեխա ունեցող անձինք,
 - ե) միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ ավարտածներ,
 - զ) բնակության համար ոչ պիտանի վայրերում բնակվողներ,
 - է) ժամկետային զինվորական ծառայություն անցածներ,
 - ը) ժամանակավոր կացարաններում բնակվողներ,
 - թ) ազգականների մոտ բնակվողներ,
 - ժ) վարձով բնակվողներ,
 - ի) ազատագրված վայրերից վերադարձածներ,
 - լ) բնակարանի կարիք ունեցող մյուս անձինք:
- Նշված ցուցակները հաստատվում են համայնքի ղեկավարի կողմից, և դրանց մեկ օրինակը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, մյուսը՝ պահվում տեղական ինքնակառավարման մարմնում:

ՀՀ Կառավարության որոշում Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը Հաստատելու մասին, 23 Հուլիսի 2003թ., N 983-Ն

165. Ինչպե՞ս է իրականանում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանությունն զբաղվածության բնագավառում:

Ջբաղվածության պետական ծառայությունն իրեն դիմած 16 տարին լրացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար իրականացնում է մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ և հաշվի առնելով նրանց աշխատանքային ունակություններն ու առողջական վիճակը, աջակցում է նրանց աշխատանքի տեղավորմանը:

Խնամակալական կազմակերպություններում, անկախ կազմակերպական-իրավական ձևից, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար կարող են ստեղծվել մասնագիտացված աշխատատեղեր:

Կազմակերպության լուծարման դեպքում գործատուները պարտավոր են կազմակերպել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասնագիտական ուսուցումը և այլ գործատուների մոտ նրանց աշխատանքի տեղավորումը:

ՀՀ Օրենքը Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին, Հ.10

1

2

3

4

5

6

7

ԼՐԱՍՈՒՑԻՉ

166. Ի՞նչ է նշանակում «մարդկանց թրաֆիքինգ» արտահայտությունը:

Եվրոպայի խորհրդի 2005թ. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիայի (այսուհետ՝ ԵԽ 2005թ. կոնվենցիա) 4-րդ հոդվածի «ա» ենթակետում տրված բնորոշման համաձայն մարդկանց թրաֆիքինգ է շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը՝ ուժի սպառնալիք կամ ուժ գործադրելու կամ հարկադրանքի որևէ այլ ձև կիրառելու, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ այլ անձնավորության նկատմամբ որոշակի վերահսկողություն իրականացնող որևէ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով դրանական միջոցներ կամ այլ օգուտներ տրամադրելու կամ ստանալու եղանակով:

Այս հասկացությանը թղթակցում է ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված արարքը:

Որպես կանոն, թրաֆիքինգը կրում է անդրազգային հանցավոր բնույթ և կատարվում է հանցավոր խմբերի կամ դրանց սերտ համագործակցության պայմաններում:

167. Ըստ Կոնվենցիայում տրված թրաֆիքինգի հասկացության այն կատարվում է «շահագործման նպատակով»: Ի՞նչ է շահագործումը «մարդկանց թրաֆիքինգի» համատեքստում:

ԵԽ 2005թ. կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն «շահագործումը ներառում է այլ անձանց մարմնավաճառության կամ սեքսուալ այլ շահագործումը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը հավասարազոր վիճակ, տաժանակիր աշխատանքները կամ օրգանների հեռացումը»:

ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 5-րդ մասում տրվել է թրաֆիքինգի հանցակազմին վերաբերող շահագործման հասկացությունը, որի համաձայն, մարդու շահագործում են համարվում այլ անձի պոռնկության ներգրավելը կամ

սեռական շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը նմանվող վիճակը, մարդու մարմնի մասերը կամ հյուսվածքները վերցնելը:

168. Ո՞վ է համարվում թրաֆիքինգի զոհ:

Թրաֆիքինգի զոհ է համարվում այն անձը, ում շահագործման նպատակով հավաքագրել կամ տեղափոխել են կամ փոխանցել են կամ թաքցրել են կամ ընդունել են, կամ այդ բոլոր գործողությունները կամ դրանց մի մասը կատարվել է միաժամանակ կամ հաջորդաբար:

Չափահաս անձանց դեպքում անձը կհամարվի թրաֆիքինգի զոհ այն դեպքում, երբ վերը թվարկված գործողությունները կատարվել են ուժի սպառնալիք կամ ուժ գործադրելու կամ հարկադրանքի որևէ այլ ձև կիրառելու կամ առևանգման կամ խարդախության կամ խաբեության կամ իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ այլ անձնավորության նկատմամբ որոշակի վերահսկողություն իրականացնող որևէ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով դրամական միջոցներ կամ այլ օգուտներ տրամադրելու կամ ստանալու եղանակով:

Այսպես, անձը կհամարվի թրաֆիքինգի զոհ, եթե նրան, օրինակ, հավաքագրել են խարդախության միջոցով՝ աշխատանքային շահագործման նպատակով: Կամ, օրինակ, եթե շահագործման նպատակով առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրմամբ մարդուն թաքցրել են կամ առևանգել են, կամ վաճառել են և այլն:

Անչափահաս անձանց դեպքում անձը կհամարվի թրաֆիքինգի զոհ նույնիսկ այն դեպքում, երբ սույն հարցի շրջանակում պատասխանի 2-րդ պարբերությունում նշված միջոցները չեն կիրառվել:

Այսպես, անչափահասը կհամարվի թրաֆիքինգի զոհ, եթե նրան, օրինակ, հավաքագրում են աշխատանքային շահագործման նպատակով: Կամ, օրինակ, եթե շահագործման նպատակով անչափահասին թաքցրել են կամ առևանգել են, կամ վաճառել են և այլն:

169. Կարելի՞ է, արդյոք, շահագործման եղանակները պայմանականորեն դասակարգել:

Շահագործման հասկացությունում նշված շահագործման ձևերը կարելի է պայմանականորեն խմբավորել հետևյալ երեք խմբերի՝

- սեռական և այլ սեքսուալ շահագործում,
- աշխատանքային շահագործում,
- մարմնի մասերը և հյուսվածքները կորզելը:

1

2

3

4

5

6

7

ԼՐԱՍՈՒՑԻՉ

170. Ինչպե՞ս է արտահայտվում թրաֆիքինգի հետ կապված սեռական շահագործումը:

Թրաֆիքինգի հետ կապված այլ անձի պոռնկության (մարմնավաճառության) շահագործումը նշանակում է, որ մարմնավաճառին սեռական հարաբերություններ ունենալուն հարկադրելով կամ պարտադրելով՝ երրորդ անձինք որոշակի շահ են ստանում: Ընդ որում, շահը կարող է լինել նաև ոչ նյութական: Օրինակ, երբ մարմնավաճառին մատուցում են որպես նվեր կամ նա տրամադրվում է անհատույց ժամանակավոր օգտագործման: Շահագործումը առկա է նաև այն դեպքում, երբ կնոջ մատուցած սեռական հարաբերության համար գումարը չեն վճարում կամ վճարում են գումարի մի մասը:

Նշենք, որ ՀՀ քր.օր-ի 132 հոդվածում ձևակերպված «Շահագործում» հասկացությունը ներառում է նաև սեռական շահագործման այլ ձևերը: Դա նշանակում է, որ շահ ստանալու նպատակով տուժողին ստիպում են սեռական բնույթ կրող, բայց մարմնավաճառություն չհանդիսացող այլ գործողություններ կատարել: Այդպիսի շահագործման թվին կարող են դասվել, օրինակ, մարդկանց (ներառյալ՝ երեխաների) օգտագործումը պոռնկագրական ֆիլմերում կամ նյութերում և այլն:

171. Ինչպե՞ս է արտահայտվում թրաֆիքինգի հետ կապված հարկադիր կամ պարտադիր աշխատանքը:

Հարկադիր կամ պարտադիր աշխատանք է համարվում որևէ պատժի սպառնալիքի տակ անձից պահանջվող որևէ աշխատանք կամ ծառայություն, որի համար այդ անձը կամավոր չի առաջարկել իր ծառայությունները: Այդպես է բնորոշվել հարկադիր կամ պարտադիր աշխատանքը «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» Աշխատանքի Միջազգային Կազմակերպության 1930թ. հունիսի 29-ի թիվ 29 կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասում:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի հինգերորդ պարբերության հարկադիր աշխատանքն արգելվում է: Աշխատանքը պետք է լինի միայն կամովի, և աշխատողները ազատ են աշխատանքի ընտրության մեջ: Բացառություն են կազմում դատարանի կողմից նշանակված հանրային աշխատանքները (ինչպես նաև այլ դեպքեր), որոնք հարկադիր և պարտադիր են, բայց այստեղ կոնկրետ աշխատանքի տեսակը ընտրելիս հաշվի են առնվում անձի հնարավորությունները, սեռը, տարիքը, մասնագիտական ունակությունները և այլ պայմաններ:

Թրաֆիքինգի հետ կապված հարկադիր աշխատանքներն ու

ծառայությունները իրականացվում են շահագործման նպատակով՝ բռնության, դրա սպառնալիքի, առևանգման, խարդախության, վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ զոհին վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար վճարումներ կամ բարիքներ տալու կամ ստանալու միջոցով:

172. Ո՞ր հարկադիր կամ պարտադիր աշխատանքը չի գնահատվում որպես թրաֆիքինգ:

Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին կոնվենցիայի (թիվ 29) համաձայն հարկադիր կամ պարտադիր աշխատանք չի համարվում՝

1. պարտադիր զինվորական ծառայության մասին օրենքով պահանջվող և զուտ զինվորական բնույթի ցանկացած աշխատանքը կամ ծառայությունը,
2. ինքնակառավարվող երկրի քաղաքացիների սովորական քաղաքացիական պարտականությունների մաս կազմող ցանկացած աշխատանքը կամ ծառայությունը,
3. դատարանի կայացրած դատավճռով անձից պահանջվող ցանկացած աշխատանքը կամ ծառայությունը՝ այն պայմանով, որ այդ աշխատանքը կամ ծառայությունը կատարվի պետական մարմնի վերահսկողության կամ հսկողության ներքո, և որ նշված անձը չփոխանցվի կամ չհանձնվի մասնավոր անձանց, ընկերությունների կամ ընկերակցությունների տնօրինմանը,
4. արտակարգ իրավիճակների պայմաններում պահանջվող ցանկացած աշխատանքը կամ ծառայությունը, այսինքն՝ պատերազմի, տարերային աղետի կամ դրա սպառնալիքի դեպքում, ինչպիսիք են հրդեհները, ջրհեղեղները, սովը, երկրաշարժը, սուր համաճարակները կամ տնային կենդանիների համաճարակները, կենդանիների, միջատների կամ մակաբույծների հարձակումները և ընդհանրապես այն իրավիճակները, որոնց դեպքում վտանգի են ենթարկվում կամ կարող են ենթարկվել ամբողջ բնակչության կամ նրա մի մասի կյանքը կամ նորմալ կենսապայմանները,
5. համայնքային բնույթի փոքր ծավալի աշխատանքները, որոնք կատարվում են տվյալ համայնքի անդամների անմիջական օգուտի համար, և որոնք, հետևաբար, կարող են համարվել համայնքի անդամների սովորական քաղաքացիական պարտականություններ՝ պայմանով, որ համայնքի անդամները կամ նրանց անմիջական ներկայացուցիչները իրավունք ունենան այդ աշխատանքների նպատակահարմարության վերաբերյալ արտահայտել իրենց կարծիքը:

1

2

3

4

5

6

7

ԼՐԱՍՈՒՑԻՉ

173. Ո՞ր դեպքերում է հարկադիր կամ պարտադիր աշխատանքը թույլատրելի:

Այդպիսի աշխատանքի իրականացումը թույլատրելի է, եթե՝

- կատարվող աշխատանքը կամ ծառայությունը ուղղակի և էական հետաքրքրություն է ներկայացնում այն կատարող համայնքի համար,
- այդ աշխատանքի կամ ծառայության կատարման համար անհնարին էր ստանալ կամավոր աշխատուժ՝ թեև առաջարկվել էին տվյալ տարածքում համանման աշխատանքի կամ ծառայության համար ոչ պակաս նպաստավոր աշխատավարձ և աշխատանքի պայմաններ,
- այդ աշխատանքը կամ ծառայությունը ներկա կամ մոտակա անհրաժեշտություն է,
- այդ աշխատանքը կամ ծառայությունը շատ ծանր բեռ չի լինի բնակչության համար՝ հաշվի առնելով առկա աշխատուժը և տվյալ աշխատանքը կատարելու բնակչության ունակությունները:

174. Ի՞նչ է թրաֆիքինգի հետ կապված ստրկությունը կամ ստրկությանը նմանվող վիճակը:

Ստրկության վերաբերյալ 1926թ. սեպտեմբերի 25-ի ՄԱԿ-ի կոնվենցիայի (1953թ. դեկտեմբերի 7-ի Արձանագրությամբ կատարված փոփոխություններով) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն, «ստրկությունը» մարդու վիճակն է կամ դրությունը, երբ նրա նկատմամբ իրականացվում են սեփականության իրավունքին բնորոշ բոլոր կամ որոշակի լիազորությունները:

Ստրկությանը նմանվող վիճակները պայմանականորեն բաժանվում են 4 խմբի՝

1. Պարտապանի ստրկացում՝ այնպիսի վիճակ կամ դրություն, երբ պարտապանը, որպես պարտքի ապահովման միջոց գրավ է դնում կամ իր աշխատանքը, կամ իրենից կախյալ վիճակում գտնվող անձի աշխատանքը, եթե կատարվող աշխատանքի արժեքը չի հաշվակցվում տվյալ պարտքի մարմանը, կամ եթե այդ աշխատանքի տևողությունը չի սահմանափակվում և դրա բնույթը չի կոնկրետացվում:
2. Ճորտական վիճակ՝ հողի այնպիսի օգտագործումը, որի դեպքում օրենքով, ավանդույթի ուժով կամ փոխադարձ համաձայնության հիման վրա օգտագործողը պարտավոր է ապրել և աշխատել ուրիշին պատկանող հողատարածքի վրա և վարձատրությամբ կամ առանց դրա որոշակի աշխատանք կատարել այդ սեփականատիրոջ օգտին ու չի կարող փոփոխել իր նման վիճակը:
3. Կնոջ ազատ ամուսնանալու իրավունքը ոտնահարող, կնոջը այլ

անձի վարձակալությամբ կամ այլ պայմանով կամ ժառանգությամբ փոխանցելու ցանկացած ինստիտուտ կամ ավանդույթ, երբ՝

ա) կնոջ ծնողները, խնամակալը, ընտանիքը կամ յուրաքանչյուր այլ անձ կամ անձանց խումբ դրամով կամ բնեղենով վարձատրելու դիմաց խոստանում են ամուսնացնել կամ ամուսնացնում են այդ կնոջը, առանց նրան մերժելու իրավունք վերապահելու,

բ) կնոջ ամուսինը, վերջինիս ընտանիքը կամ տոհմը իրավունք ունեն վարձատրությամբ կամ այլ պայմանով փոխանցելու տվյալ կնոջն այլ անձի,

գ) ամուսնու մահից հետո կինը ժառանգաբար փոխանցվում է մեկ այլ անձի:

4. Երեխային շահագործման նպատակով այլ անձի փոխանցելու ցանկացած ինստիտուտ կամ ավանդույթ, այսինքն, երբ երեխան (մինչև 18 տարեկան անձը) ծնողների կամ նրանցից մեկի կամ խնամակալի կողմից վարձատրությամբ կամ առանց դրա փոխանցվում է մեկ այլ անձի՝ այդ երեխայի կամ նրա աշխատանքի շահագործման նպատակով:

Չարկադիր աշխատանքի հատուկ դրսևորում է տնային ստրկությունը:

1
2
3
4
5
6
7
ԼՐԱՍԽԻՉ

175. Ինչպե՞ս տարբերակել թրաֆիքինգի հետ կապված ստրկությունը ստրկությանը նմանվող վիճակից:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ստրկությանը նմանվող վիճակի տարբերությունը ստրկությունից կայանում է նրանում, որ ստրկությանը նմանվող վիճակը թեև ենթադրում է «ազատությունը մերժելու առանձնապես ծանր ձև», երբ մարդը հնարավորություն չունի փոփոխելու իր վիճակը, այն այնուամենայնիվ չունի սեփականության իրավունքին բնորոշ հատկանիշներ, որոնց առկայությունը բնութագրում է ստրկությունը: Այդ եզրահանգմանն են եկել Մարդու իրավունքների Եվրոպական Չանձնաժողովի Կոնվենցիոն մարմինները Վան Դրուզենբրոկի գործում (1982թ. հունիսի 24-ի որոշում, սերիա Ա, թիվ 50, էջ 32, կետ 58):

176. Ի՞նչ է թրաֆիքինգի հետ կապված մարդու մարմնի մասերը կամ հյուսվածքները կորզելը:

«Մարդու օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստման մասին» ՀՀ օրենքով սահմանված են այն դեպքերը և պայմանները, երբ կարող է կատարվել փոխպատվաստումը, սահմանված է նաև փոխպատվաստում իրականացնելու կարգը:

Չարկ է նշել, որ օրգանների և հյուսվածքների կորզմամբ շահագործումը

չի սահմանափակվում միայն փոխադաստանմանը, դրանք կարող են օգտագործվել նաև բժշկական փորձերի, հանիբալիզմի, կրոնական ծիսակատարությունների համար և այլ նպատակներով: Թրաֆիքինգի նպատակով մարմնի մասերը կամ հյուսվածքները կորզելը շահագործման եղանակներից է:

177. Ինչպե՞ս է իրականացվում թրաֆիքինգը:

Թրաֆիքինգի դեպքում մարդուն հավաքագրում են, փոխադրում են, հանձնում են, թաքցնում են կամ ստանում են՝ շահագործման նպատակով:

178. Ինչպե՞ս է իրականացվում հավաքագրումը շահագործման նպատակով:

Հավաքագրումը կարող է կատարվել օրինական կամ անօրինական եղանակներով: Աշխատանքային տեղերը գովազդվում են զանգվածային լրատվության միջոցներով, աշխատանքի տեղավորման գործակալություններում, տուրիստական գործակալություններում, ինտերնետի գլոբալ ցանցում, ընտանիքի անդամների, ընկերների, մտերիմների կամ ծանոթների միջոցով:

Մարդկանց հավաքագրման եղանակները կախված են այն խոցելի խմբից, որին ուղղված են գործողությունները (կանայք, աղջիկներ, երեխաներ, ծնողագուրկ երեխաներ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ կամ այլ խմբեր):

Մարդկանց կարող է դիտավորությամբ ներկայացվել աշխատանքի իրական պայմանների մի մասը (օրինակ, անօրինական պայմաններում աշխատելու հնարավորության մասին), միաժամանակ լռելով այն մասին, որ մարդը հարկադրված կլինի աշխատելու շահագործման պայմաններում:

179. Ինչպե՞ս է իրականացվում փոխադրումը շահագործման նպատակով:

Փոխադրելը (տեղափոխելը) - գործողություններ են, որոնք ենթադրում են տուժողին մեկ վայրից այլ վայր տեղափոխելը երկրի ներսում կամ երկրից դուրս կամ աջակցությունը սահմանը անօրինական հատելու հարցում, ինչպես նաև տարանցիկ կամ նշանակետ երկրում անօրինական կացության կազմակերպումը:

Այն բանից հետո, երբ անձինք համաձայնվել են ընդունել աշխատանքի առաջարկությունը, թրաֆիքինգ իրականացնողները աջակցում են սահմանանցմանը կամ երկրի ներսում այլ վայրեր հասնելուն: Սովորաբար, փոխադրման կազմակերպման, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերը

ստանալու համար (ինչպիսիք են հրավերը, վիզան, աշխատանքի թույլտվությունը և այլն) գանձվում է բարձր վճար կամ այն տրամադրվում է պարտքով՝ բարձր տոկոսներով: Թրաֆիքինգ իրականացնողները կազմակերպում են փոխադրումը, միջոցների և բնակվելու համար պիտանի տարածքների հատկացումը՝ ստեղծելով պայմաններ պարտապանի ստրկացման համար:

180. Ինչպե՞ս է իրականացվում հանձնումը շահագործման նպատակով:

Հանձնելը ենթադրում է զոհի փոխանցումը այլ անձանց՝ նրան վաճառելուց կամ այլ եղանակով օտարելուց հետո (նվիրատվություն, պարտքի մարում, վնասի փոխհատուցում և այլն): Հանձնելը զոհին համապատասխան անձանց (ընդունողների) տրամադրության տակ թողնելն է: Ջոհի հանձնումը համարվում է կայացած այն պահից, երբ նա հայտնվում է ընդունող անձի տրամադրության տակ և վերջինս կարող է նրան շահագործել ըստ իր նպատակների:

181. Ինչպե՞ս է իրականացվում ստանալը շահագործման նպատակով:

Ստանալը գործողություն է, որը ենթադրում է փոխանցման, նվիրատվության, փոխանակության, փոխառության կամ այլ գործարքի արդյունքում թրաֆիքինգի զոհի ձեռք բերում: Ստանալը կարող է լինել հատուցելի կամ անհատույց, որոշակի ժամկետով կամ անժամկետ, որոշակի պայմաններով կամ առանց դրանց:

182. Ինչպե՞ս է իրականացվում թաքցնելը շահագործման նպատակով:

Թաքցնելը գործողություն է, որն ուղղված է թրաֆիքինգի զոհին հանրությունից առանձնացված պահելուն: Այն կարող է արտահայտվել բնակելի տարածք, կացարան կամ այլ վայր հատկացնելով (օրինակ, զոհին պահեստային տարածքում պահելը):

183. Որո՞նք են մարդկանց թրաֆիքինգին նպաստող գործոնները:

Մարդկանց թրաֆիքինգին նպաստող առավել տարածված գործոններն են՝

- աղքատությունը,

1

2

3

4

5

6

7

ԼՐԱՑՈՒՑՐԻՉ

- աշխատաշուկայի անկայունությունը, ռեսուրսների անմատչելիությունը (որակյալ կրթություն, առողջապահություն, զբաղվածություն),
- բնակչության ցածր կենսամակարդակը, ինչպես նաև ճգնաժամային վիճակը,
- անգրագիտությունը,
- ցածր իրազեկվածությունը,
- բռնությունը ընտանիքում,
- սոցիալական որբությունը,
- ընտանիքի քայքայումը,
- խտրականությունները, կարծրատիպերը:

184. Ինչպիսի՞ հարկադրանքի եղանակներ են հաճախ կիրառում թրաֆիքինգ իրականացնողները:

Հարկադրանքի եղանակներ են՝

- վիճակի խոցելիության օգտագործումը,
- բռնության սպառնալիքի կամ բռնության գործադրումը,
- խարդախությունը, որը ներառում է խաբեությունը և վստահության չարաշահումը,
- առևանգումը,
- իշխանության չարաշահում,
- հարկադրանքի այլ միջոցների կիրառումը (պարտապանություն, փաստաթղթերի առգրավում, հոգեբանական ազդեցություն և այլն):

185. Ի՞նչ է վիճակի խոցելիության օգտագործելը շահագործման նպատակով:

Տուժողի վիճակի խոցելիության չարաշահումը ենթադրում է այնպիսի իրավիճակի չարաշահում, երբ անձը չունի որևէ իրական և ընդունելի այլընտրանք, քան շահագործման ենթարկվելը: Խոցելիությունը կարող է լինել ցանկացած բնույթի՝ ֆիզիկական, հոգեբանական, զգացմունքային, ընտանեկան, սոցիալական կամ տնտեսական: Վերոհիշյալ իրավիճակներից կարող է լինել զոհի իրավական կարգավիճակի անապահովությունը կամ անօրինականությունը, տնտեսական կախվածությունը կամ թույլ առողջական վիճակը: Այնպիսի իրավիճակ, որում գտնվելով անձը դրդված է լինում համաձայնվել շահագործման ենթարկվելուն:

186. Ի՞նչ է բռնությունը կամ բռնության սպառնալիքի գործադրումը շահագործման նպատակով:

Բռնություն կամ բռնության սպառնալիքի գործադրումը՝ ֆիզիկական ուժի, կամ դրա սպառնալիքի գործադրում է ապագա զոհի դիմադրությունը հաղթահարելու նպատակով: Ընդ որում բռնության կամ սպառնալիքի գործադրելը կարող է իրականացվել ինչպես տուժողի, այնպես էլ նրա մերձավորների նկատմամբ:

187. Ի՞նչ է հարկադրանքի այլ ձևերի գործադրումը շահագործման նպատակով:

Հարկադրանքի այլ ձևեր են համարվում տուժողի դիմադրությունը ճնշելուն ուղղված այնպիսի եղանակները, որոնք չեն հանդիսանում բռնություն կամ բռնության սպառնալիք: Այդպիսին կարող են լինել տուժողի վերաբերյալ կամ նրա մերձավորների վերաբերյալ արատավորող տեղեկություններ տարածելը, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը և այլն:

188. Ի՞նչ է խարդախությունը շահագործման նպատակով:

Խարդախությունը խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու միջոցով որոշակի փաստերի, հանգամանքների, իրադարձությունների վերաբերյալ իրականությունը դիտավորությամբ խեղաթուրելն է կամ այն գիտակցաբար թաքցնելը, ապակողմնորոշելը, որի նպատակն է թրաֆիքինգի զոհին հանոգելը (ստիպելը) կատարել աշխատանք կամ մատուցել ծառայություն:

189. Ի՞նչ է իշխանության չարաշահումը շահագործման նպատակով:

Իշխանության չարաշահում նշանակում է պաշտոնական անձանց կողմից իր պաշտոնական լիազորությունները չարաշահելը՝ իր ծառայողական պարտականությունները չկատարելը կամ պաշտոնական դիրքը օգտագործելը ծառայողական շահերին հակառակ՝ շահադիտական, անձնական, այլ շահագրգռվածությանից կամ խմբային շահերից ելնելով:

190. Ի՞նչ է մարդուն վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար՝ վճարումներ կամ բարիքներ տալը կամ ստանալը շահագործման նպատակով:

Մարդուն վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար՝

1

2

3

4

5

6

7

ԼՐԱՑՈՒՑԻՉ

վճարումներ կամ բարիքներ տալը կամ ստանալը միջոց է, որի կիրառմամբ կարող է իրականացվել թրաֆիքինգը: Մարդուն վերահսկող է համարվում այն անձը, ով որոշակի հարաբերությունների ուժով պարտավոր է հսկողություն իրականացնել նրա նկատմամբ: Այդպիսիք են համարվում՝ տուժողի ծնողները (որդեգրողները), խնամակալը, հոգաբարձուն, մանկապարտեզի դաստիարակը, դպրոցի ուսուցչուհին, մարզկի մարզիչը և այլն: Վճարումներ կամ բարիքներ փոխանցելու միջոցով նշված անձանց նյութապես շահագրգռում են (կաշառում) նրանց համաձայնությունը ստանալու նպատակով:

191. Ի՞նչ է առեւանգումը շահագործման նպատակով:

Առեւանգում՝ մարդու կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու մշտական կամ ժամանակավոր բնակավայրից դուրս հանելը և մշտական կամ ժամանակավոր այլ վայր տեղափոխելը և այնտեղ պահելը:

192. Ի՞նչ է հարկադրանքի այլ միջոցների կիրառումը՝ պարտապանություն, փաստաթղթերի բռնագրավում, հոգեբանական ազդեցություն, առեւանգումը շահագործման նպատակով:

Դա պարտապանի ստրկացման այն վիճակն է կամ դրությունը, երբ պարտապանը, որպես պարտքի ապահովման միջոց գրավ է դնում կամ իր աշխատանքը, կամ իրենից կախյալ վիճակում գտնվող անձի աշխատանքը, եթե պարտապանը կատարվող աշխատանքի արժեքը չի հաշվակցում տվյալ պարտքի մարմանը, կամ եթե այդ աշխատանքի տևողությունը չի սահմանափակվում և դրա բնույթը չի կոնկրետացվում:

193. Ինչպիսի՞ տեղանակներ են օգտագործում հանցագործները թրաֆիքինգի զոհին վերահսկելու եւ ենթարկելու համար:

Թրաֆիքինգի զոհին վերահսկելու և ենթարկելու համար հանցագործները հաճախ՝

- աշխատողի նկատմամբ գործադրում են ֆիզիկական ուժ կամ սպառնում են դրա կիրառմամբ,
- պահում են անազատության մեջ,
- վերցնում և չեն վերադարձնում անձնագիրը և ինքնությունը հաստատող այլ փաստաթղթերը, որի արդյունքում զոհի այլ աշխատանք գտնելը և ստանալը էապես բարդանում է,

- սպառնում են մատնել (հանձնել) աշխատողին իշխանություններին՝ որպես անձը հաստատող փաստաթղթեր չունեցող, աշխատանքի իրավունք չունեցող, վիզայի ժամկետը սպառած անօրինական միգրանտի,
- անձին պահում են պարտապանի կարգավիճակում՝ աշխատացնելով պարտքի մարման դիմաց, որի չափը անընդմեջ մեծանում է գործատուի կողմից սննդի, հագուստի, բնակավարձի և այլնի համար գանձումների պատճառով:

194. Ինչպիսի՞ն է երեխաների թրաֆիքինգի բնորոշումը, եւ որո՞նք են երեխաների թրաֆիքինգի նախադրյալները:

Եւ 2005թ. Կոնվենցիայի 4-րդ հոդվածի «գ» կետով սահմանված է, որ շահագործման նպատակով երեխային «հավաքագրելը», «տեղափոխելը», «փոխանցելը», «թաքցնելը կամ ընդունելը» համարվում է «թրաֆիքինգ»:

Երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր անձ, եթե համապատասխան օրենքով չափահասությունը ավելի վաղ չի սահմանվում: Բոլոր այն երևույթները, որոնք հանգեցնում են խոցելի վիճակի, գնահատվում են որպես երեխաների թրաֆիքինգի նախադրյալներ: Դրանցից առավել տարածված են՝

- առաջնային բժշկական սպասարկման հիմնարկներում (պոլիկլինիկայում) չգրանցված երեխաների, տնային պայմաններում ծնված երեխաների, ձննդական չունեցող երեխաների, ծննդատանը չգրանցված ծննդկանների առկայությունը,
- կրթական համակարգ չընդգրկված և դուրս մնացած երեխաների, ծնողազուրկ երեխաների, մուրացկանությամբ զբաղվող երեխաների, անչափահաս մարմնավաճառների, մշտապես աշխատող անչափահասների, փողոցային երեխաների առկայությունը,
- անհայտ կորած երեխաների առկայությունը, երեխաների վաճառքի դեպքերը, սոցիալապես անապահով բազմազավակ ընտանիքները:

195. Որո՞նք են երեխաների թրաֆիքինգին նպաստող գործոնները:

Երեխաների թրաֆիքինգին նպաստող առավել տարածված գործոններն են՝

- ընտանիքի աղքատությունը,
- որակյալ կրթության բացակայությունը, առողջապահության համակարգի անկատարությունը, զբաղվածության բացակայությունը,

1

2

3

4

5

6

7

ԼՐԱՍՈՒՑԻՉ

- բնակչության ցածր կենսամակարդակը, ինչպես նաև ճգնաժամային վիճակը,
- անգրագիտությունը,
- ցածր իրազեկվածությունը,
- բռնությունը ընտանիքում,
- սոցիալական որբությունը,
- ընտանքի քայքայումը,
- խտրականությունները, կարծրատիպերը:

196. Որո՞նք են երեխաների թրաֆիքինգի նպատակը եւ շահագործման ձևերը:

Երեխաների թրաֆիքինգի նպատակը շահագործումն է: Դա արտահայտվում է շահագործման հետևյալ ձևերով՝

1. Սեռական շահագործում՝
 - մարմնավաճառության շահագործում,
 - սեքսուալ շահագործման այլ ձևեր (օրինակ, պոռնոգրական նյութերում օգտագործելը, մերկապարով ելույթ ունենալուն հարկադրելը, անառակաբարո գործողություններ կատարելուն հարկադրելը),
2. Հարկադիր կամ պարտադիր աշխատանք կատարելը կամ հարկադիր կամ պարտադիր ծառայություն մատուցելը (օրինակ, մուրացկանությունը, գյուղատնտեսական կամ շինարարական աշխատանքներում ներգրավվածությունը և այլն),
3. Ստրկությունը կամ ստրկությանը նմանվող վիճակը,
4. Մարմնի մասերի անօրինական հեռացումը (կորզումը) փոխպատվաստման նպատակով,
5. Երեխաների վաճառքը,
6. Որդեգրումը՝ շահագործման նպատակով:

Այս կետում տրված հասկացությունները, դրությունը կամ վիճակը մանրամասն նկարագրված են 4-ից 11-րդ, 33-րդ, 34-րդ, 39-րդ և 40-րդ կետերում:

197. Որո՞նք են երեխաների աշխատանքի վատթարագույն ձևերը:

ԱՄԿ կոնվենցիայի համաձայն երեխաների աշխատանքի վատթարագույն ձևերն են՝

- Ստրկության բոլոր ձևերը կամ ստրկությանը համանման աշխատանքը, ինչպիսիք են երեխաների վաճառքը և առևտուրը, պարտքային ստրկացումը կամ ճորտային կախվածությունը, ինչպես նաև հարկադիր կամ պարտադիր աշխատանքը, այդ թվում՝ երեխաների պարտադիր կամ հարկադիր հավաքագրումը զինված ընդհարումներում օգտագործելու համար, երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը մարմնավաճառությանը զբաղվելու, պոռնկագրական արտադրանքի արտադրության կամ պոռնկագրական ներկայացումների համար,
- երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը հակահրավակական գործունեությամբ զբաղվելու, մասնավորապես՝ քննադատների արտադրության և վաճառքի համար, ինչպես դրանք սահմանված են համապատասխան միջազգային պայմանագրերում,
- աշխատանքը, որն իր բնույթով կամ իր կատարման պայմաններով կարող է վնասել երեխաների առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը:

198. Աշխատանքի ո՞ր տեսակներն են անթույլատրելի երեխաների համար:

ԱՄԿ մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի վերաբերյալ 1999թ. Կոնվենցիայի համաձայն երեխան չի կարող կատարել այնպիսի աշխատանք, որն իր բնույթով կամ որևէ այլ հանգամանքից ելնելով վնասում է նրա առողջությանը, անվտանգությանը և զարգացմանը: Դրանք են՝

- աշխատանքներ, որոնց արդյունքում երեխաները ենթարկվում են ֆիզիկական, հոգեբանական կամ սեռական բռնությունների,
- թունավոր, քաղցկեղածին կամ առողջության համար վտանգավոր գործոնների ազդեցությամբ արտադրությունները,
- ստորգետնյա, ստորջրյա, վտանգավոր բարձրություններում կամ սահմանափակ տարածքներում աշխատանքները,
- վտանգավոր սարքերի, գործիքների և տեխնիկայի հետ աշխատանքներ, որոնց ժամանակ առկա են դժբախտ պատահարների սպառնալիքներ,
- աշխատանքներ, որոնց ժամանակ հնարավոր է իոնացված ռադիոազդեցությունները,
- ծանր բեռների փոխադրումը կամ ձեռքի ծանր աշխատանքը:

Արգելվում է երեխաի կողմից այնպիսի աշխատանքի կատարումը, որը կարող է վնասել նրա առողջությանը, ֆիզիկական և մտավոր զարգացմանը, խոչընդոտել կրթության ստանալուն:

ՀՀ Օրենքը երեխայի իրավունքների մասին, Հ. 19

1

2

3

4

5

6

7

ԼՐԱՑՄԻՐԸ

199. Ո՞ր տարիքից երեխաները աշխատելու իրավունք ունեն (օրինական աշխատանք):

ՅՅ աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝

- ա) մինչև 14 տարեկան երեխան իրավունք չունի լինել վարձու աշխատող,
- բ) 14-ից մինչև 16 տարեկան երեխան իրավունք ունի աշխատելու ծնողների կամ ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ,
- գ) 16-ից մինչև 18 տարեկան երեխան իրավունք ունի աշխատելու առանց ծնողների թույլտվության:

200. Ինչպիսի՞ հարկադրանքի կամ այլ միջոցներ են հաճախ կիրառում թրաֆիքինգ իրականացնողները:

Որպես կանոն, անչափահասի թրաֆիքինգի դեպքում թրաֆիքինգ իրականացնողները կիրառում են նույն միջոցները, որոնք իրականացվում են չափահասների թրաֆիքինգի դեպքում: Դրանք են՝

- վիճակի խոցելիության չարաշահում (տես հարց 168),
- բռնության սպառնալիքի կամ ուժի (բռնության) գործադրում (տես հարց 169),
- հարկադրանքի այլ միջոցների կիրառում (պարտապանություն, փաստաթղթերի բռնագրավում, հոգեբանական ազդեցություն) (տես հարց 170),
- խարդախություն (տես հարց 171),
- իշխանության չարաշահում (տես հարց 172),
- երեխային վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար՝ վճարումներ կամ բարիքներ տալը կամ ստանալը (տես հարց 173),
- առևանգում (տես հարց 174):

201. Ինչպիսի՞ առանձնահատկություններ կան երեխայի նկատմամբ հարկադրանքի կամ այլ միջոցներ կիրառելու դեպքերում:

Առանձնահատկությունն այն է, որ այդ միջոցները հաճախ կիրառվում են ոչ թե երեխայի, այլ նրա ծնողի կամ այլ անձի նկատմամբ, ուն իրավաբանական պարտականությունն է հոգալ երեխայի բարեկեցության համար:

Մյուս առանձնահատկությունն այն է, որ հաճախ երեխան չի գիտակցում,

թե ինչ է կատարվում կամ ինչ հետևանքներ կարող են առաջացնել նրա ստրկացմանը կամ այլ շահագործմանն ուղղված միջոցները:

Ահա թե ինչու, անգամ եթե այդ միջոցները չեն կիրառվում, սակայն երեխան հավաքագրվում կամ փոխադրվում է, կամ հանձնվում է, կամ ընդունվում է, կամ թաքցվում է շահագործման նպատակով, թրաֆիքինգ հանցագործությունը համարվում է կատարված:

202. Ինչպե՞ս է իրականացվում թրաֆիքինգի զոհ դարձած երեխաների հայտնաբերումը, պաշտպանությունը եւ աջակցումը:

Թրաֆիքինգի զոհ դարձած երեխաների ազգային ուղղորդման կարգ ներկայումս գոյություն չունի: Այդ պատճառով թրաֆիքինգի զոհ երեխաների նկատմամբ կիրառվում է «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհ դարձած անձանց ազգային ուղղորդման կարգը»: Որպես ժամանակավոր ապաստան նախատեսվում է օգտագործել «Երեխաների ընդունման և կողմնորոշման կենտրոնը»:

203. Ի՞նչ է նշանակում երեխաների վաճառք:

Երեխաների վաճառք է ցանկացած գործողություն կամ գործարք, որի միջոցով երեխան որևէ անձի կամ անձանց խմբի կողմից փոխանցվում է այլ անձի կամ անձանց խմբի՝ վարձատրության կամ ցանկացած այլ հատուցման դիմաց: Այդ բնորոշումը տրված է Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի Մանկավաճառության և մանկական պռնոգրաֆիայի մասին թիվ 2 կամընտիր Արձանագրության 2-րդ հոդվածում:

ՀՀ քրեական օրենսգրքի «Երեխայի առք ու վաճառք» վերնագրով 168-րդ հոդվածով երեխայի առևտրի համար նախատեսված է պատիժ ազատազրկման ձևով մինչև 8 տարի ժամկետով:

204. Ո՞ր դեպքում որդեգրումը կհամարվի թրաֆիքինգի տարատեսակ:

Որդեգրումը կհամարվի թրաֆիքինգի տարատեսակ, երբ դրա նպատակը երեխայի հետագա շահագործումն է (աշխատանքային, սեռական, օրգանների կորզում):

1
2
3
4
5
6
7
ԼՐԱՍՈՒՑԻՉ

205. Ինչպե՞ս է ՀՀ-ում տրամադրվում թրաֆիքինգի զոհին պետական աջակցությունը:

Պետական աջակցությունն իրականացվում է համաձայն «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց Ազգային ուղղորդման կարգի», որի հիմնական նպատակն է ապահովել արդյունավետ ուղի շահագործման զոհերին ծառայություններ մատուցելու համար, այդ թվում՝ կացարանի, մասնագիտական, բժշկական և հոգեբանական օգնության, խորհրդատվության, կրթության կամ ուսուցման մատչելիության ապահովումը:

206. Ո՞ր պետական մարմիններն են իրականացնում պետական աջակցությունը թրաֆիքինգի զոհին:

Համաձայն «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց Ազգային ուղղորդման կարգի»-ի պետական աջակցություն տրամադրող մարմինները դասվում են համագործակցող մարմինների: Դրանք են Պետական կառավարման լիազորված մարմինները և Համագործակցող կազմակերպությունները:

Պատասխանատու պետական կառավարման լիազորված մարմիններն են՝

- ՀՀ արտաքին գործերի նախարարությունում՝ հյուպատոսական վարչության միգրացիայի բաժինը,
- ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունում՝ թրաֆիքինգի հարցերով զբաղվող ստորաբաժանումը,
- ՀՀ Տարածքային կառավարման նախարարությունում՝ միգրացիոն գործակալությունը,
- ՀՀ առողջապահության նախարարությունում՝ բժշկական օգնության կազմակերպման վարչությունը:

207. Ի՞նչ է նշանակում համագործակցության սկզբունքներ արտահայտությունը:

Համագործակցող կազմակերպությունները ակտիվորեն համագործակցում և օգտագործում են միմիանց միջոցներն ու հնարավորությունները զոհերի հայտնաբերման, նույնացման, վերականգնողական օգնության տրամադրման, ինչպես նաև հանցագործության դեպքերի կանխարգելման, բացահայտման ուղղությամբ:

208. Ո՞ր մարմիններն են համարվում պատասխանատու մարմիններ:

ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հանցագործության դեմ պայքարի համար հիմնական պատասխանատու մարմինն է ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը:

Ձոռների աջակցության և դրա համակարգման համար պատասխանատու մարմին է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ ի դեմս իր համապատասխան ստորաբաժանման:

Պատասխանատու են նաև այն համագործակցող հասարակական կազմակերպությունները, որոնք իրականացնում են գործունեությունը թրաֆիքինգի զոհին աջակցություն տրամադրելու ոլորտում:

209. Ինչպիսի՞ն է մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկատվության փոխանցման կարգը:

Ցանկացած մարմին թրաֆիքինգի զոհի վերաբերյալ ունեցած տեղեկատվությունը պարտավոր է փոխանցել ՀՀ ոստիկանություն:

ՀՀ ոստիկանությունն իր կողմից հայտնաբերված զոհերի ուղղորդումն իրականացնում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով, անհրաժեշտության դեպքում՝ օգտվելով համագործակցող ՀԿ-ների ծառայություններից:

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնաբերված զոհին ուղղորդում է պետական կառավարման լիազորված այլ մարմիններ և համագործակցող ՀԿ-ներ՝ համապատասխան օգնություն տրամադրելու համար և ՀՀ ոստիկանություն՝ հանցագործության բացահայտմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու նպատակով:

Համագործակցող ՀԿ-ն թրաֆիքինգի զոհի վերաբերյալ ստացված տեղեկությունը փոխանցում է ՀՀ ոստիկանություն, իսկ հայտնաբերված զոհին, վերջինիս համաձայնությամբ, ուղղորդում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

210. Ինչպիսի՞ն է թրաֆիքինգի զոհի նույնացման գործընթացը ՀՀ-ում:

Համաձայն «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց Ազգային ուղղորդման կարգի»-ի թրաֆիքինգի զոհի նույնացումն իրականացվում է երեք փուլով՝

ա) նախնական նույնացում,

1

2

3

4

5

6

7

ԼՐԱՑՈՒՑ

- բ) միջանկյալ նույնացում,
- գ) վերջնական նույնացում:

Պետական աջակցության տրամադրման ծավալը համարժեք է նույնացման փուլին:

211. Ո՞ր մարմնի կողմից եւ ինչպե՞ս է իրականացվում թրաֆիքինգի գոհի նախնական նույնացումը:

Թրաֆիքինգի գոհի նախնական նույնացումն իրականացնում են համագործակցող մարմիններն ինքնուրույն, հայտնաբերված անձի՝ ենթադրյալ գոհի նկատմամբ, ուղղակի և անուղղակի չափորոշիչների կիրառման արդյունքում:

212. Ո՞ր մարմնի կողմից եւ ինչպե՞ս է իրականացվում թրաֆիքինգի գոհի միջանկյալ նույնացումը:

Թրաֆիքինգի գոհի միջանկյալ նույնացումն իրականացնում է նախաքննության մարմինը, որոշում ընդունելով նախնական նույնացված գոհին հարուցված քրեական գործի շրջանակում ճանաչել որպես տուժող:

213. Ո՞ր մարմնի կողմից եւ ինչպե՞ս է իրականացվում թրաֆիքինգի գոհի վերջնական նույնացումը:

Թրաֆիքինգի գոհի վերջնական նույնացումն իրականացնում է դատարանը՝ համապատասխան քրեական գործով դատաքննության արդյունքում կայացրած դատավճռով:

Վերջնական նույնացում է իրականացվում նաև այն դեպքում, երբ գործը չի ուղարկվել դատարան և նախաքննության մարմնի կողմից քրեական գործով կայացվել է որոշում, որը չի հերքում թրաֆիքինգ հանցագործության կատարված լինելու փաստը, սակայն օրինական հիմքերով անհնարին է գործի հետագա ընթացքը:

214. Ո՞րն է պետության կողմից սահմանված նախնական աջակցության ծավալը:

Պետության կողմից նախնական աջակցության ընթացքում թրաֆիքինգի գոհին տրամադրվում է՝

- առաջնային բժշկական օգնություն,
- անհետաձգելի նյութական օգնություն (սնունդ, հագուստ, հիգիենիայի

- պարագաներ և այլն),
- իրավաբանական խորհրդատվություն,
- անհրաժեշտության դեպքում կացարանի տրամադրում (կարճաժամկետ՝ առավելագույնը 7 օրով):

215. Ո՞րն է պետության կողմից սահմանված միջանկյալ աջակցության ծավալը:

Պետության կողմից միջանկյալ աջակցության ընթացքում թրաֆիքինգի գոհին տրամադրվում է՝

- կացարան (ժամանակավոր՝ մինչև 60 օրով),
- բժշկական հետազոտություն և օգնություն՝ ՀՀ Կառավարության 2004թ. մարտի 4-ի՝ «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» N 318-Ն որոշմանը համապատասխան,
- իրավաբանական օգնություն,
- հոգեբանական օգնություն,
- հասարակության մեջ վերաինտեգրվելուն ուղղված քայլեր, այդ թվում նաև մասնագիտական վերապատրաստման օժանդակություն,
- անհրաժեշտության դեպքում՝ միանվագ դրամական օգնություն՝ օրենքով նախատեսված նվազագույն նպաստի չափով:

216. Ո՞րն է պետության կողմից սահմանված վերջնական աջակցության ծավալը:

Պետության կողմից վերջնական աջակցության ընթացքում թրաֆիքինգի գոհին տրամադրվում է այնպիսի ծավալի աջակցություն, որը համապատասխանում է տվյալ անձի կարիքներին: Այդ կարիքները գնահատվում են: Արդյունքում կարող է տրամադրվել «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով նախատեսված աջակցության ողջ փաթեթը, ինչպես նաև վերաինտեգրմանն ուղղած հետագա միջոցառումները (տես «ՀՀ սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը):

1
2
3
4
5
6
7
ԼՐԱՑՈՒՑԻՉ

Հարցերի ցուցակ

ԳԼՈՒԽ 1

1. Երեխաների իրավունքների պաշտպանության ինչպիսի՞ համակարգ է գործում ՀՀ-ում:
2. Որո՞նք են երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի նպատակները և խնդիրները:
3. Ինչպե՞ս են կազմակերպվում ազգային հանձնաժողովի աշխատանքները:
4. Ովքե՞ր են ընդգրկված երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի անհատական կազմում:
5. Ո՞ր կառույցն է ներկայացնում երեխաների իրավունքների պաշտպանության մարզային մակարդակը:
6. Որո՞նք են ԸԿԵԻՊ մարզային բաժնի խնդիրները:
7. Որո՞նք են ԸԿԵԻՊ բաժնի գործառույթները:
8. Ո՞ր կառույցների հետ է համագործակցում ԸԿԵԻՊ բաժինը:
9. Ովքե՞ր են ընդգրկված ԸԿԵԻՊ բաժնի կազմում:
10. Ո՞ր կառույցն է ներկայացնում երեխաների իրավունքների պաշտպանության համայնքային մակարդակը և որո՞նք են համայնքային մակարդակի խնդիրները:
11. Որո՞նք են ԽՀ մարմինների հիմնական գործառույթները:
12. Ովքե՞ր են ընդգրկված ԽՀ հանձնաժողովների կազմում:
13. Որո՞նք են ԽՀ հանձնաժողովի հիմնական իրավունքներն ու պարտականությունները:
14. Ի՞նչ իրավունքներ ունեն երեխաները:

ԳԼՈՒԽ 2

15. Օրենքով սահմանված ի՞նչ պարտականություններ ունեն չափահաս զավակները ծնողների նկատմամբ:
16. Ի՞նչ պարտականություններ ունեն երեխաներն իրենց փաստացի խնամողներին նկատմամբ:
17. Կարո՞ղ են զավակները ազատվել իրենց աշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողների ապրուսը հոգալու պարտականությունից:
18. Ինչպե՞ս են չափահաս աշխատունակ զավակները մասնակցում անաշխատունակ ծնողների նկատմամբ կատարվող լրացուցիչ ծախսերին:
19. Ծնողները ունե՞ն հավասար իրավունքներ իրենց երեխաների նկատմամբ:

20. Օրենքով սահմանված ի՞նչ պարտականություններ ունեն ծնողները իրենց երեխաների նկատմամբ:
21. Ի՞նչ պարտականություններ ունեն պապերը և տատերը իրենց օգնության կարիք ունեցող անչափահաս թոռների նկատմամբ:
22. Ինչպե՞ս է գրանցվում երեխայի ծննդյան փաստը, եթե ծնողների ամուսնությունը գրանցված է:
23. Ի՞նչ անել, եթե երեխան չունի անձը հաստատող որևէ փաստաթուղթ, անցել է ծննդյան պահից մեկ տարին, կամ չկա նույնիսկ ծննդի փաստը վկայող բժշկական տեղեկանք:
24. Ինչպե՞ս է գրանցվում երեխայի ծննդյան փաստը եթե նրա ծնողները գրանցված ամուսնությունում չեն գտնվում:
25. Ինչպե՞ս է գրանցվում երեխայի ծննդյան փաստը եթե մայրը ամուսնացած չէ:
26. Ինչպե՞ս է գրանցվում երեխայի ծննդյան փաստը, եթե մեկ տարին արդեն լրացել է:

ԳԼՈՒԽ 3

27. Ո՞ր դեպքերում է կատարվում երեխային վերցնելը ծնողներից՝ նրա կյանքը և առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի ժամանակ:
28. Ի՞նչ է նշանակում ծնողական իրավունքներից զրկելը:
29. Ի՞նչ կարգով է իրականացվում ծնողական իրավունքներից զրկելը:
30. Ինչպիսի՞ հետևանքներ կարող է ունենալ ծնողական իրավունքներից զրկելը:
31. Հնարավո՞ր է արդյոք վերականգնել ծնողական իրավունքները:
32. Ի՞նչ է նշանակում ծնողական իրավունքների սահմանափակում:
33. Կարո՞ղ է արդյոք երեխան շփվել ծնողական սահմանափակ իրավունքներով ծնողների հետ:
34. Հնարավո՞ր է արդյոք վերականգնել սահմանափակված ծնողական իրավունքները:
35. Ինչպե՞ս է որոշվում երեխաների համար դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը:
36. Ինչպե՞ս է կատարվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ալիմենտի բռնագանձումը և օգտագործումը:
37. Ինչպիսի՞ն է ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության կնքումը և ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության ձևը և ի՞նչ անել, եթե ալիմենտը չի վճարվում:
38. Հնարավո՞ր է արդյոք ազատվել ալիմենտի պարտքի վճարումից:

1

2

3

4

5

6

7

ԼՐԱՑՈՒՑԻՉ

39. Ի՞նչ պատասխանատվություն կկրի ծնողը ալիմենտը ժամանակին չվճարելու համար:

ԳԼՈՒԽ 4

40. Որ վիճակն է համարվում «Կյանքի դժվարին իրավիճակ»:

41. Ովքե՞ր են իրականացնում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կարիքների գնահատումը:

42. Ովքե՞ր են առանց ծնողական խնամքի մնացած և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք:

43. Ո՞վ է իրականացնում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը:

44. Ո՞վ է բացահայտում և հաշվառում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին:

45. Ինչպե՞ս է կատարվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հաշվառումը:

46. Ի՞նչ է նշանակում որդեգրում:

47. Ինչպե՞ս է իրականացվում երեխայի որդեգրման կարգը:

48. Ինչպե՞ս են հաշվառվում որդեգրման ենթակա երեխաները:

49. Ինչպե՞ս են հաշվառվում որդեգրել ցանկացող քաղաքացիները:

50. Ինչպե՞ս են հաշվառվում որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացիները:

51. Ինչպե՞ս է հանվում հաշվառումից որդեգրել ցանկացող անձը:

52. Ի՞նչ փաստաթղթեր է ներկայացնում երեխա որդեգրող օտարերկրյա քաղաքացին:

53. Ինչպե՞ս են հաշվառվումից հանվում որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացիները:

54. Ո՞ր կառույցը, ի՞նչ հիմքերով է տալիս եզրակացություն երեխա որդեգրել ցանկացող անձի վերաբերյալ:

55. Ինչպիսի՞ փաստաթղթեր է ներկայացնում երեխա որդեգրող ՀՀ քաղաքացին:

56. Ովքե՞ր որդեգրելու իրավունք չունեն:

57. Ի՞նչ փաստաթղթեր են հարկավոր ներկայացնել երեխային որդեգրելու համար:

58. Հնարավո՞ր է արդյոք երեխայի որդեգրումն առանց ծնողների համաձայնության:

59. Ինչպիսի՞ն է որդեգրված երեխայի անունը, հայրանունը և ազգանունը, ծննդյան ժամանակի և ծննդյան վայրի փոփոխման կարգը:

60. Պահպանվում է որդեգրված երեխայի կենսաթոշակի իրավունքը:
61. Հնարավոր է արդյոք վերացնել երեխայի որդեգրումը:
62. Ինչպե՞ս կարելի է ստանալ որդեգրվող երեխայի մասին տեղեկություններ:
63. Ո՞ր երեխաների նկատմամբ է սահմանվում խնամակալություն կամ հոգաբարձություն:
64. Ովքե՞ր կարող են հանդիսանալ երեխաների համար խնամակալներ կամ հոգաբարձուներ:
65. Ովքե՞ր չեն կարող հանդիսանալ երեխաների համար խնամակալներ կամ հոգաբարձուներ:
66. Ինչպե՞ս է իրականացվում խնամակալությունը (հոգաբարձությունը) դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության տակ գտնվող երեխաների նկատմամբ:
67. Որո՞նք են խնամակալների և հոգաբարձուների պարտականությունները:
68. Ի՞նչ կարգով են խնամակալներին և հոգաբարձուներին ազատվում իրենց պարտականությունների կատարումից:
69. Ե՞րբ է դադարում խնամակալությունը և հոգաբարձությունը:
70. Ո՞ր մարմիններն են վերահսկում խնամակալների ու հոգաբարձուների գործունեությունը:
71. Ինչպե՞ս է կազմակերպվում դաստիարակության համար երեխային խնամատար ընտանիք հանձնելու գործընթացը, ին՞չ է այն իր մեջ ներառում:
72. Ովքե՞ր կարող են համարվել խնամատար ծնողներ:
73. Ովքե՞ր չեն կարող են համարվել խնամատար ծնողներ:
74. Ո՞ր երեխան է (երեխաները) հանձնվում խնամատար ընտանիք:
75. Ո՞ր երեխան (երեխաները) չի հանձնվում խնամատար ընտանիք:
76. Ինչպե՞ս կարող է խնամատար ծնողը ստանալ տեղեկություններ խնամատար ընտանիք տեղավորման ենթակա երեխայի մասին:
77. Ի՞նչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել խնամատար ծնող դառնալու համար:
78. Ի՞նչ կարգով է իրականացվում երեխաների հանձնելը խնամատար ընտանիք:
79. Ի՞նչ կարգով է իրականացվում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունում գտնվող երեխայի հանձնումը խնամատար ընտանիք:
80. Ի՞նչ իրավունքներ է պահպանում խնամատար ընտանիք հանձնված երեխան:

1
2
3
4
5
6
7
ԼՐԱՑՈՒՑԻՉ

81. Ի՞նչ կարգով է իրականացվում խնամատար ընտանիք հանձնված երեխային (երեխաներին) պահելը:

ՉԼՈՒՒ 5

82. Ո՞ր կառույցն է իրականացնում գործունեություն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորման ուղղությամբ:

83. Ո՞ր պետական կառույցներն են իրենց վրա վերցնում առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամքը և պաշտպանությունը:

84. Ի՞նչ տիպի մանկատներ գոյություն ունեն:

85. Ինչպե՞ս են երեխաները տեղավորվում մանկատուն և որո՞նք են այդ չափանիշները:

86. Ի՞նչ կարգով է իրականանում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորումը մանկատուն:

87. Ի՞նչ գործառույթներ է իրականացնում մանկատունը:

88. Ինչպե՞ս են մանկատուն տեղավորվում նույն ընտանիքի երեխաները:

89. Ի՞նչ տեղեկություններ են անհրաժեշտ գրանցել երեխայի մասին մանկատանը:

90. Ի՞նչ փաստաթղթային գործավարություն է վարում մանկատունը:

91. Ո՞ր կառույցներից կարող է երեխան տեղավորվել մանկատուն:

92. Կարո՞ղ է երեխան մի մանկատանից տեղափոխվել մյուսը, ինչպե՞ս է այն իրականանում:

93. Ինչպե՞ս է մանկատանը տեղավորված երեխան վերադարձվում ծնողներին և ո՞րն է պայմանները:

94. Ինչպե՞ս է երեխան դուրս գրվում մանկատանից:

95. Ի՞նչ գործառույթներ է իրականացնում երեխաների բժշկասոցիալական վերականգնողական հաստատությունը:

96. Ո՞ր երեխաները կարող են ստանալ բժշկասոցիալական վերականգնողական հաստատության ծառայությունները:

97. Ի՞նչ գործառույթներ է կատարում երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունը:

98. Ո՞ր երեխաները կարող են տեղավորվել գիշերօթիկ հաստատություն:

99. Ինչպե՞ս են երեխաները տեղավորվում գիշերօթիկ հաստատություն:

100. Ինչպե՞ս են տեղավորվում գիշերօթիկ հաստատություն նույն ընտանիքի երեխաները:

101. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ երեխային գիշերօթիկ հաստատություն տեղավորման համար:

102. Ի՞նչ է նշանակում երեխային ցերեկային խնամքի տրամադրում:
103. Ո՞ր տարիքի երեխաներին է հաստատությունը տրամադրում ցերեկային խնամք:
104. Որտեղի՞ց է հաստատությունը ձեռք բերում երեխայի մասին տեղեկություններ:
105. Ի՞նչ կարգով է կազմակերպվում երեխայի ցերեկային խնամքի տրամադրումը:
106. Ի՞նչ փաստաթղթեր են լրացվում երեխայի համար ցերեկային խնամքի հաստատությունում:
107. Ի՞նչ ծառայություններ է մատուցում երեխային ցերեկային խնամքի հաստատությունը:
108. Ո՞ր դեպքերում է դադարեցվում երեխային տրամադրվող խնամքը:
109. Ի՞նչ գործառույթներ է իրականացնում երեխաների նախադպրոցական հաստատությունը:
110. Ի՞նչ նախադպրոցական հաստատություններ գոյություն ունեն:
111. Ո՞ր երեխաներն են համարվում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:
112. Ի՞նչ է նշանակում կրթության առանձնահատուկ պայմաններ:
113. Կարո՞ղ է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան տանալ տնային ուսուցում:
114. Կարո՞ղ է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան ուսուցումը ստանալ ստացիոնար բուժական հաստատության պայմաններում:
115. Ի՞նչ նպատակ ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը:
116. Ովքե՞ր են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները:
117. Ո՞ր կառույցն է հաստատում և սահմանում, այն փաստը, որ երեխան ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք:
118. Ի՞նչ գործառույթներ են իրականացնում բժշկահոգեբանամակավարժական գնահատման կենտրոնները:
119. Ինչպե՞ս են ներկայանում բժշկահոգեբանամակավարժական գնահատման կենտրոն:
120. Ինչպե՞ս են վկայագրվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները:
121. Ինչպե՞ս է իրականացվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման նկատմամբ վերահսկողությունը:

1

2

3

4

5

6

7

ԼՐԱՑՈՒՑԻՉ

- 122. Ինչպիսի՞ն է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման ֆինանսավորումը:
- 123. Ի՞նչ գործառույթներ է իրականացնում պետական հանրակրթական ուսումնական հատուկ հաստատությունը:
- 124. Ի՞նչ պետական հանրակրթական ուսումնական հատուկ հաստատությունների տիպեր գոյություն ունեն:
- 125. Ո՞ր երեխաները կարող են հաճախել պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն:
- 126. Ի՞նչ կառույց է երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատությունը:
- 127. Ո՞ր կառույցն է ՀՀ-ում ներկայացնում երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատությունը:
- 128. Ո՞ր երեխաները կարող են ստանալ ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատության ծառայությունները:
- 129. Ի՞նչ ծառայություններ է մատուցում «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատությունը:
- 130. Ի՞նչ է նշանակում Երեխաների պաշտպանության «Թեժ գիծ»:

ՉԼՈՒՆ 6

- 131. Պետության կողմից ինչպիսի՞ դրամական նպաստներ և օգնություններ է սահմանված երեխաների համար:
- 132. Սոցիալական ծառայությունների ի՞նչ տեսակներ գոյություն ունեն:
- 133. Ի՞նչ տեղեկություններ է հավաքագրում ՍԾՏԳ-ը սոցիալական ծառայություններ տրամադրելու համար:
- 134. Ի՞նչ է նշանակում դրամական օգնություն:
- 135. Ի՞նչ կարգով է տրամադրվում դրամական օգնությունը:
- 136. Ի՞նչ է նշանակում բնափրային օգնություն:
- 137. Ինչպե՞ս է կազմվում բնափրային օգնություն տրամադրելու ծրագիրը և ինչ է այն իր մեջ ներառում:
- 138. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ ներկայացնել բնափրային օգնություն ստանալու համար:
- 139. Ի՞նչ տեսքով կարող է լինել վերականգնողական օգնությունը:
- 140. Ինչպե՞ս է տրամադրվում վերականգնողական օգնություն:
- 141. Ո՞ր կազմակերպություններն են տրամադրում վերականգնողական օգնություն:
- 142. Ի՞նչ է սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագիրը:

143. Ովքե՞ր են մշակում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագիրը:
144. Ո՞րն է սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրի արդյունքը:
145. Ի՞նչ փաստաթղթեր են լրացվում երեխայի համար ժամանակավոր օրևանում:
146. Ի՞նչ է նշանակում խորհրդատվական օգնություն:
147. Ի՞նչ է նշանակում իրավաբանական օգնության տրամադրում:
148. Ինչպե՞ս է իրականանում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանությունը:
149. Ինչպե՞ս են կատարվում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կարիքների գնահատումը և ո՞րն է գնահատման նպատակը:
150. Ի՞նչ է նշանակում ժամանակավոր օրևան:
151. Ի՞նչպես է երեխան հայտնվում ժամանակավոր օրևանում:
152. Ինչպիսի՞ աջակցություն է տրամադրվում երեխային ժամանակավոր օրևանում:
153. Ինչպե՞ս է երեխան դուրս գրվում ժամանակավոր օրևանից:
154. Ի՞նչպես է պահպանվում ԱԾԽՄ երեխաների խնամքը:
155. Ի՞նչ է նշանակում խնամքի տրամադրում և ինչպիսի տեսքով է այն տրամադրվում:
156. Որտե՞ղ է տրամադրվում խնամքը:
157. Ի՞նչ սոցիալական չափորոշիչներ է սահմանում պետությունը առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար:
158. Ի՞նչ իրավունքներ և արտոնություններ ունեն առանց ծնողական խնամքի մնացած երեխաները կրթական համակարգում:
159. Ինչպե՞ս է ապահովվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների առողջության պահպանման իրավունքը:
160. Ինչպե՞ս է ապահովվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բնակելի տարածության իրավունքը:
161. Ու՞ր և ինչպե՞ս պետք է դիմի ԱԾԽՄ երեխան (կամ թվին պատկանող) իրեն բնակարան տրամադրելու համար:
162. Ի՞նչ քայլեր է կատարում ՏԻՄ-ը դիմումը ուսումնասիրելու համար:
163. Ո՞ր դեպքում են հանվում հաշվառումից բնակարանի կարիք ունեցողները:
164. Ի՞նչ առաջնահերթությամբ են տրամադրվում բնակարանները:

1

2

3

4

5

6

7

ԼՐԱՏՈՒՑԻՉ

165. Ինչպե՞ս է իրականանում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն զբաղվածության բնագավառում:

ԳԼՈՒԽ 7

166. Ի՞նչ է նշանակում «մարդկանց թրաֆիքինգ» արտահայտությունը:

167. Ըստ Կոնվենցիայում տրված թրաֆիքինգի հասկացության այն կատարվում է «շահագործման նպատակով»: Ի՞նչ է շահագործումը «մարդկանց տրաֆիքինգի» համատեքստում:

168. Ո՞վ է համարվում թրաֆիքինգի զոհ:

169. Կարելի՞ է, արդյոք, շահագործման եղանակները պայմանականորեն դասակարգել:

170. Ինչպե՞ս է արտահայտվում թրաֆիքինգի հետ կապված սեռական շահագործումը:

171. Ինչպե՞ս է արտահայտվում թրաֆիքինգի հետ կապված հարկադիր կամ պարտադիր աշխատանքը:

172. Ո՞ր հարկադիր կամ պարտադիր աշխատանքը չի գնահատվում որպես թրաֆիքինգ:

173. Ո՞ր դեպքերում է հարկադիր կամ պարտադիր աշխատանքը թույլատրելի:

174. Ի՞նչ է թրաֆիքինգի հետ կապված ստրկությունը կամ ստրկությանը նմանվող վիճակը:

175. Ինչպե՞ս տարբերակել թրաֆիքինգի հետ կապված ստրկությունը ստրկությանը նմանվող վիճակից:

176. Ի՞նչ է թրաֆիքինգի հետ կապված մարդու մարմնի մասերը կամ հյուսվածքները կորզելը:

177. Ինչպե՞ս է իրականացվում թրաֆիքինգը:

178. Ինչպե՞ս է իրականացվում հավաքագրումը շահագործման նպատակով:

179. Ինչպե՞ս է իրականացվում փոխադրումը շահագործման նպատակով:

180. Ինչպե՞ս է իրականացվում հանձնումը շահագործման նպատակով:

181. Ինչպե՞ս է իրականացվում ստանալը շահագործման նպատակով:

182. Ինչպե՞ս է իրականացվում թաքցնելը շահագործման նպատակով:

183. Որո՞նք են մարդկանց թրաֆիքինգին նպաստող գործոնները:

